ԳԻՐՔ LXIII



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 4 ԱՊՐԻԼ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՏ. 7.
1910

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական աշխարհ և հայերը 3

Արագած. բանաստ. Յարութիւն Պետրոսեան 18

Գրիգոր Ը. Խանձոդատ և Պօղոս բ. դառնեցի. Մաղաքիա աե. Օրմանեան 19

Մի օր. վէպ. Արսէն 26

Շօպէն և Պօ. Մարգо 39

Անտունի երգերից. Յար. Պետրոսեան 44

Նորադոյն պատմագիտութիւն, ըստ Լամբրեխտի. գեր. թարգմ. Pessimist 45

Լեգենդներ Քրիստոսի մասին. Սէլմա Լագերլէօֆի. թարգմ. Արսէն ս. Սիմէօնեանց եւ Ն. Տէր Մանուէլեան 63

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ալբանական խնդիրը։ Ա. Վ։—Ալէքսանդր Մատուրեան։—Նամակ Խմբագրութեան. Յ. Արարատեան։—Լուրեր։ 74

ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՊԻՒՈՒՄ Է

ԴԻՒԱՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Թ.

Յովսէփ Արղութեան

ԳԻՐՔ LXIII



ՀԱՅԿ

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 4 ԱՊՐԻԼ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՑ. 7.
1910

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ԵՒ ՀԱՅԵՐԸ

I

Քաղաքական աշխարհում մի շատ նշանաւոր դէպք է տեղի ունենում, որը կոչուած է ահագին յեղաշրջում առաջ բերելու մօտաւոր Արևելքի վիճելի հարցերի մէջ:

Դա Բալկանեան մանր պետութիւնների դաշնակցութեան հարցն է, որի կազմակերպութեան մէջ մեծ դեր է խաղում Ռուսաստանը:

Ճիշտ այն ժամանակ, երբ Ռուսաստանը Եապոնիայից պարտուած, իւր ներքին խռովութիւնները զսպելու գործով էր զբաղուած, Աւստրօ-Ունգարիան, օգտուելով բարեյաջող մոմենտից և յենուելով Գերմանիային, խախտեց Բերլինի դաշնագրութիւնը և առանց քաշուելու իւր երկրին միացրեց Բոսնիան ու Հերցիգովինան:

Այս բռնի յափշտակութիւնը կարող էր պատերազմի պատճառ դառնալ, եթէ հանգամանքները թոյլատրէին Ռուսաստանին. շատ պարզ էր սակայն, որ Ռուսաստանը չը պիտի կարողանար լռութեամբ տանել նաև այդ հարուածը, որ մի օր նա պիտի ուղենար Աւստրիայից ու Գերմանիայից վրէժ առնել:

Մենք գիտենք, որ քաղաքական ու տնտեսական մի շարք հարցերի շնորհիւ Բալկանեան մանր պետութիւնները, մանաւանդ Բուլղարիան, Սերբիան ու Չերնոգորիան, դժգոհ են Աւստրիական կառավարութիւնից: Այս հանգամանքը, որպէս և այն, որ նրանք պատկանում են Սլաւոնական ցեղին և նրանցից առաջինը՝ Բուլղարիան ազատութիւն ստացաւ Ռուսական զօրքի արեան գնով, որոշ չափով դիւրացնում են Ռուսաստանի վաղուց ծրագրած նպատակի իրականացումը, այն է, Սլաւոն Ռուսաստանի անմիջական հովանաւորութեան տակ համախմբել Բալ-

կանեան բոլոր Սլաւօն պետութիւններին, նման գերմանական միութեան։

Այս ենթադրեալ կոնֆիդերացիան կարելի է անուանել պան-սլաւօնական, որպէս հակակշիռ պան-գերմանականի։

Որքան էլ հարցը վերաբերում լինի Աւստրօ-Ռուսական քաղաքականութեան, այնուամենայնիւ նրա առանցքը կազմում է Թիւրքիան, որով այս վերջինս իւր կաշին փրկելու և քաւութեան նոխազ չը դառնալու համար, ստիպուած է մտնել Բալկանեան պետութիւնների դաշնակցութեան կազմի մէջ։

Սա ունի և ուրիշ առաւելութիւններ, նախ՝ Սլաւօնների թիւը Աւստրիական պետութեան մէջ բաւական զգալի թիւ կազմելով, բնականաբար սրանց համակրութիւնը թեքուած կը լինի դաշնակից Սլաւօն պետութիւնների կողմը, մի բան, որ կը ջլատի Աւստրիային և երկրորդ՝ Թիւրքիան մտնելով նոյն դաշնակցութեան կազմի մէջ, ինքբստինքեան պան-իսլամիզմի գաղափարն էլ կը ցնդի եթէ ոչ ընդ միշտ, գոնէ այնքան ժամանակ, որքան կը տևէ դաշնակցութիւնը։

Ուրեմն, եթէ գլուխ գալու լինի քաղաքական այդ կոմբինացիան-դա կը լինի մեկուսացումն Աւստրիայի ու Գերմանիայի և համազօր սրանց պարտութեան ոչ միայն Թիւրքիայում, այլև ամբողջ Մերձաւոր Արևելքի հարցերում։

Այնուամենայնիւ պետութիւնների մի այսպիսի համախմբում հնարաւոր է այն ժամանակ միայն, երբ կը վերանան նրանց միջից խոչնդոտները, երբ նրանց քաղաքական շահերն ու նպատակները կը բերուին մի յայտարարի։

Գլխաւոր խոչնդոտը, ուր բաղխել են մեծ պետութիւնների շահերը, երբեմն զինուած ընդհարումների վտանգ ստեղծելով— եղել է Արևելեան հարցը։ Իսկ մենք շատ լաւ գիտենք, որ նոյն այդ պետութիւնների փոխադարձ անվստահութեան, քաղաքական անվերջ մրցութիւնների և միմեանց հակասող շահերի շնորհիւ յիշեալ հարցը մնացել է անլուծելի, այնքան աղէտալի հետևանքներ ստեղծելով Թիւրքիայի հայերի համար։

Ասել է թէ Բալկանեան պետութիւների դաշնակցութեամբ Արևելեան հարցն էլ լուծելի լինելու չափ հասունանում է։

Հայկական հարցի մասին խօսելը թողնելով իւր տեղում, մենք կը վերցնենք Կրէտական և Մակեդոնականը, որոնք կազմում են Արևելեան հարցի հերթական խնդիրները։

Կարծեմ 1897 թուին էր, երբ մեծ պետութիւններից մի քանիսը համաձայնութեան գալով, ներքին ինքնավարութիւն ծեռք բերին Կրէտէի համար, Սուլթանի գերիշխանութեան տակ. իսկ նախանցեալ տարի մակեդոնական հարցի լուծուելուն կանխեց Օսմանեան Սահմանադրութիւնը։

Շատերը այն կարծիքին են, թէ Կրէտէի բաղդը արդէն որոշուած է, թէ նա վաղ կամ ուշ կը միանայ մայր երկրի-Յունաստանի հետ։ Ըստ երևութին նոյն կարծիքին է նաև Յունաստանը, որով ծգտում է օր առաջ գլուխ բերել միացման ակտը, որպէս զի ազատ լինի Մակեդոնիայի վերաբերմամբ ունեցած ոտնձգութիւնների մէջ։

Բայց այս կարծիքը դեռ վաղաժամ է, ոչ միայն նրա համար, որ Թիւրքիան անհամեմատ ուժեղ է Յունաստանից, այլև նրա համար, որ վերջին խօսքը պատկանում է Կրէտէի հովանաւորութիւնը ստանձնող պետութիւններին, որոնք կարող են Օսմանեան կառավարութեան անմիջական հովանաւորութիւնը յանձնել, եթէ կը կարողանայ բարեկարգ պետութիւն լինելու հաւաստիք տալ։

Բայց մինչ այդ, այդ երկու խնդիրներն էլ կարելի է դեռ չը լուծուած համարել, որոնցից առաջինով՝ Կրէտէով շահագրգռուած են Թիւրքիան և Յունաստանը, իսկ երկրորդով՝ Մակեդոնիայով—Թիւրքիան, Բուլղարիան, Սիրբիան, Ձերնոգօրիան, Յունաստանը և Աւստրօ-Ունգարիան։

Ասացինք, որ Բալկանեան պետութիւնների դաշնակցութիւնը գալիս է հակակշռելու գերմանական դաշնակցութեան և համազօր է սրա պարտութեան Արևելքում։ Եւ քանի որ Աւստրիան բնական կերպով հակառակ պէտք է լինի մի այդպիսի սպառնական դաշնակցութեան իրականացման, դաշնակցութիւնով հետաքրքրող պետութիւնները կանգ չը պիտի առնեն Աւստրիայի ցանկութիւնների առաջ, որքան կը ներեն քաղաքական հանգամանքները, որով մենք աւելորդ ենք համարում խօսել այն

դերի մասին, որ նա կուզենայ խաղալ մակեդոնական հարցը այսպէս կամ այնպէս լուծուելու ժամանակ։

Պէտք է ասել, որ որքան պատմականօրէն Կրէտէն յարմար է Յունաստանին, նոյնքան աշխարհագրական դիրքով յարմար չէ, ինչպէս որ Մակեդոնիան յարմար է Բուլղարիային։

Բայց որովհետև մեծ պետութիւնների քաղաքականութիւնը յարմարութիւն բառը չի ընդունում և հարցերի վրայ նայում է իւր շահերի տեսակէտից, ուստի անհրաժեշտ է նոյն մեծ պետութիւնների յարաբերութիւններն ի նկատի առնել։

Մինչև Ռուս-Եապոնական պատերազմը գոյութիւն ունէր Եւրոպական պետութիւններն երեք միմեանց հակադիր ոյժեր, նախ՝ Եռապետական դաշնակցութիւնը, յանձին Գերմանիայի, Աւստրօ-Ունգարիայի և Իտալիայի, երկրորդ՝ երկպետեան դաշնակցութիւնը, յանձին Ռուսաստանի և Ֆրանսիայի և երրորդ՝ չեզոք Անգլիան առանձին։ Այս երեք ահռելի ոյժերը միշտ միմեանց դէմ կանգնած՝ միմեանց հսկելով այնպէս էին ջլատում, ուժաթափ անում իրար, որ համեմատաբար շատ աւելի անզօր և քայքայուելու մօտ գտնուող Թիւրքիան ոչ միայն կարողանում էր իւր գոյութիւնը պահպանել, այլ և երբեմն նրանց քթին խնդալու աստիճան յանդուգն քայլեր անել։

Իսկ այժմ քաղաքական պայմանները մասամբ փոխուել են։ Միշտ չեզոք, միշտ սպառնական դիրք բռնած Անգլիան մի կողմից դաշնակից է Ֆրանսիայի հետ, միւս կողմից՝ Ռուսաստանին։ Ինչ վերաբերում է մերձաւոր Արևելքի կռուախնձոր կազմող Թիւրքիային, նա, ինչպէս ասացինք, իւր կաշին ազատելու համար զոնէ չի տատանուի Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմն անցնել, քանի որ եռապետական դաշնակցութեան բարեկամութիւնը այնքան թանդ է արժեցել նրան։

Եթէ մեր ենթադրութիւնը մասամբ իսկ մօտ լինի ճշմարտութեան, այնժամանակ կարելի է ասել, որ բալկանեան պետութիւնների դաշնակցութեան հարցը, որ սերտ առնչութիւն ունի Գերմանիայի և Աւստրօ-Ունգարիայի չեզոքացման խնդրի հետ, մօտ պէտք է լինի նաև Անգլիայի ու Ֆրանսիայի քաղաքական նպատակներին, որով ի սէր նոյն դաշնակցութեան գլուխ

գտլուն, խոչնդոտների վերացումը, այնէ՝ կրէտական և մակեդոնական հարցերի լուծումը յիշեալ երկու պետութիւնների կողմից ևս արդելքի չի հանդիպի։

Ահա այս տեսակէտից ասացինք, թէ Բալկանեան պետութիւնների դաշնակցութեամբ Արևելեան հարցն էլ լուծանելի լինելու չափ հասունանում է։

Թէ ի՞նչ ձևով կը լուծուին կրէտական և մակեդոնական հարցերը, մեզ այնքան էլ հետաքրքիր չէ և մենք շօշափեցինք նրանց բացառապէս իրերի դրութիւնը պարզելու համար. իսկ թէ ի՞նչ ձևով կը լուծուի Հայկական հարցը պետութիւնների նոր համախմբումների ժամանակ, այն հարցը, որ տեղ է գտել Բերլինի դաշնագրութեան մէջ 61-րդ յօդուած անուան տակ— սա է մեզ հետաքրքրողը, որպէս Թիւրքիայի հայերի կեանքի ու մահու խնդիր։

II

Եթէ հայկական հարցի վրայ նայենք մարդկային խղճի տեսակէտից, կը գանք այն ուղիղ եզրակացութեան, որ մակեդոնական և կրէտական հարցերի շարքից դուրս չը պիտի ծգուի նախ՝ այն պատճառով, որ Թիւրքիան դաշնագրական որոշ պարտաւորութիւններ է յանձն առել նրա վերաբերմամբ և երկրորդ՝ նրա համար, որ հայը աւելի շատ ու երկար է տառապել և աւելի մեծ ու թանկագին զոհեր է տուել։

Դժբաղդաբար մարդկային խիղճը ոչ մի ազգի չի փրկել, նրա օրէնքով ոչ մի հարց չի լուծուել և այսուհետև էլ չի լուծուի։ Անցեալ դարու վերջին քառորդի ընթացքում Եւրոպական երկրներում բազմամարդ միտինգներ եղան, խմբագրուեցին ու ստորագրուեցին բուռն բողոքներ Հայաստանի մէջ կատարուող վայրենութիւնների դէմ, Հայ ժողովրդին մահմեդական խուժանի և այդ խուժանին ղեկավարող կառավարութեան հալածանքներից ազատելու համար դիմումներ եղան... Բայց մարդկային խղճի հզօր աղաղակները մնացին ծայն բարբառոյ յանապատի։

Ուրիշ կերպ էլ լինել չէր կարող։ Պետութիւն կազմող ժո-

ղովրդի խիղճը չէ, որ իշխում է քաղաքականութեան վրայ և նրան ղեկավարում, այլ կառավարութեան քաղաքական շահերը, նպատակները։

Եթէ մեզ չը մեղադրեն յոռետեսութեան մէջ, այն էլ կասենք, որ այդ խիղճ ասածիդ վրայ էլ յոյս դնել կարելի չէ, թէկուզ նա լինէր քաղաքականութեան վրայ իշխողը։

Անգլիացի մեծ մարդասէր—Գլադստոնը հայկական հալածանքների ու մարտիրոսութեան դէմ ամենից շատ և ուժեղ բողոքողն եղաւ։ Բայց հրաժարւում ենք հաւատալ, թէ նա յանձն կառնէր իւր ազգի քաղաքական շահերը զոհել նոյն տառապող ազգի փրկութեան, առանց փոխարինութեան, տրիտուրի։

Չը պէտք է մոռանալ, որ խիղճն էլ իւր եսը ունի, որը չի զոհի մի ուրիշի եսին։

Ուրեմն թ՞նչ տեսակէտից էլ վերցնելու լինինք, ստիպուած պէտք է լինինք Հայկական հարցի լուծումն էլ մեծ պետութիւնների քաղաքական շահերի մէջ որոնելու։

Մեզ համար կենսական նշանակութիւն ունեցող խնդրին այս տեսակէտից նայելով գալիս ենք այն զարհուրելի եզրակացութեան, որ Հայկական հարցը պիտի դառնայ քաւութեան նոխազ, մի կամուրջ մի քանի պետութիւնների միմեանց մօտեցնելու համար։

Եւ իրօք՝ ո՞վ և ո՞ր պետութիւնը պէտք է պաշտպանի հայկական դատը, երբ Բալկանեան պետութիւնների դաշնակցութեան պատրուակի տակ տեղի կունենայ պետութիւնների այն համախմբումը, որի մասին խօսեցինք վերևը։

Որպէսզի աւելի հասկանալի լինի, նախ պէտք է իմանալ թէ քաղաքական թ՞նչ նպատակներով էր, որ Եւրոպական այս կամ այն պետութիւնը երբեմն պաշտպանում էր հայկական հարցը, որը Բերլինի վեհաժողովի ուշադրութեանն անգամ արժանացաւ։

Վերջին Ռուս-Թրքական պատերազմը Եւրոպական մի քանի պետութիւնների բերեց այն եզրակացութեան, որ ոչ Բալկանեան լեռները կարող են Ռուսաստանի աշխարհակալական արշաւանքների առաջը փակել, ոչ Ղարսի նման ամրոցները և ոչ Թրքական զօրքը։

Եւ Եւրոպական պետութիւնների մարդասիրութիւնը չէր, որ Բուլղարիային ազատեց Թրքական լծից, այլ Ռուսաստանի արշաւանքների ճանապարհի վրայ ազատ Բուլղարիայից մի իրական պատնէշ կանգնելու միակ միտքը։

Նոյն քաղաքական նպատակներով էր, որ Անգլիան պաշտպանում էր Հայկական հարցը։ Եւ եթէ Անգլիայի նպատակները չը բաղխէին Գերմանիայի նպատակներին, թերևս Հայկական հարցն էլ որևէ կերպով կլուծուէր։

Բայց 1895 թուին Գերմանիայի բռնած դիրքը շատ պարզ ցոյց տուեց, որ նա Ռուսաստանի հետ Անգլիայի դէմ կը լինի, եթէ սա առաջ կը քաշի Հայաստանի աւտոնոմիայի հարցը, իսկ ընդհակառակը Անգլիայի հետ Ռուսաստանի դէմ կը լինի, եթէ սա կը ծդտի Հայաստանը գրաւել։

Մենք կարծում ենք, որ Հայկական հարցը այժմ իւր նախկին նշանակութիւնը կորցրած պէտք է լինի, որովհետև Ռուսաստանի քաղաքական պայմանները դգալի կերպով փոխուեցին։

Անգլիայի ներկայ քաղաքական տրամադրութիւնը բնորոշելու համար բաւական է ինկատի առնել, որ նա այժմ դաշնակից է հայկական աւտոնոմիայի հակառակորդ Ռուսաստանի հետ և որ այժմ աւելի ևս կարիք ունի նա Թիւրքիայի բարեկամութեան, ի վնաս իւր զօրեղ հակառակորդ ու մրցակից—Գերմանիայի։ Իսկ մի այդպիսի բարեկամութիւն շահելու համար ոչ միայն Հայկական հարցը զոհելը մի բան չարժէ, այլև չարժէ ամբողջ հայ ազգին զոհելը։

Զէ՞ որ հայկական արեան գնով էր, որ Գերմանիան դիւանագիտական նուաճումներ էր անում Թիւրքիայում ի վնաս Անգլիայի, իսկ Ռուսաստանը ծդտում էր նոյն Գերմանիայի ձեռքից դարձները կորզել։

Մենակ Թիւրքիան չէր, որ Հայաստանը ներկեց հարիւր հազարաւոր հայերի արիւնով, այլ մեծ պետութիւնների քաղաքական կռիւը միմեանց դէմ։

Որ Եւրոպական այս կամ այն պետութիւնը իւր որոշ նպատակներն իկատար ածելու կամ հաշիւները մաքրելու համար Թիւրքիայի հետ, Հայկական հարցով է սպառնացել նրան—այս

մասին շատ օրինակներ կարելի է թուել։ Ամենից թարմը այդ օրինակներից Պոլսի քարափի միջադէպն էր, որ կառուցել էր ֆրանսական մի մասնաւոր ընկերութիւն և որի շահերը պաշտպանելու համար ոչ միայն Ֆրանսիան չը յապաղեց զրահակիրներ ուղարկելով Թրքական ջրերը, նրա նաւահանգիստներից մէկը գրաւել, այլև սպառնաց Հայկական հարցը յարուցանել, որի մասին իւր ժամանակին գրուեցաւ մամուլի էջերում։

Սա ինքնրստինքեան բաւական է ապացուցանելու, որ հասարակապետական Ֆրանսիայի կառավարութեան համար որև է մի բուրժուա Լօրանդօի շահերը Հայկական հարցից աւելի թանգ արժեն։

Բազմաթիւ նման փաստերը բաւական էին, որ մենք համոզուէինք թէ նոյնն են նաև միւս պետութիւնները և որոշ չափով զգուշանայինք արտաքին խաբուսիկ երևոյթներով յափշտակուելու միամտութիւնից։

Բայց հնարաւո՞ր է արդեօք չը խաբուել, չը յափշտակուել։

Թիւրքիայի հայը որպէս մի անդեկ նաւ տատանւում է քաղաքականութեան փոթորկալից ովկիանոսի մէջ։ Նա հազարաւոր խութերի է հանդիպել, հազարաւոր անգամ այդ խութերի վրայ ջախջախուելու, խորասուզուելու վտանգ է անցրել. բայց մեղադրելի՞ է արդեօք, հեռու հորիզոնի վրայ հազար ու մէկերորդ խութը նաւահանգիստ կարծելով չը խաբուի...

Ի՞նչն է կեանք տուել հային, ի՞նչն է կապել նրան հայրենիքի գաղափարի հետ, այն հայրենիքի, ուր նա օր ու արև չի տեսել առանց արիւնի արցունքի։

Թրքաց Հայաստանը թէև միշտ ողողուել է իւր թանկագին զաւակների արիւնով, այնուամենայնիւ հարիւր հազարաւոր շիրիմների վրայ ողբալով հանդերձ, հայը շարունակել է ապրել այն քաղցր յուսով թէ՝ մի օր՝ անշուշտ, կը փոխուի կառավարութեան ձևը և բարբարոսական կարգերի հետ միասին կը վերանան տանջանքները, հալածանքները, մարտիրոսութիւնը։

Այո՛, այս յոյսով է ապրել հայը, դիմացել վայրենի բռնութիւններին, գազանային ջարդերին։ Այս յուսով է, որ նա կարած է մնացել այդ արիւն ու արցունքով մկրտուած երկրին, ար-

հաւիրքներով մակարդուած մթնոլորդին։ Կեանքի քաղցրութիւնը երբեմն քշել է նրան իւր հայրենիքից, անխուսափելի մահուան երկիւղը հալածել է նրան դէպի օտար աշխարհներ, այնուամենայնիւ. ամեն անգամ երբ բարեյաջող պայմանների յոյս է եղել —նա հոգով ու սրտով սլացել է դէպի հարիւր հազարաւոր սիրելիների գերեզմանը, դէպի արիւնաներկ վաթանը։

Ու դարերով նահատակւող, բայց միշտ յուսով ապրող հայի յոյսերը իրականացան աւելի լայն չափով, քան նա կարող էր երևակայել։

Բոսֆորի պալատական բարձունքից, որտեղից դարերի ընթացքում միմիայն հալածանքի, տանջանքի, ու ջարդերի հրամաններ էին արձակուել—այնտեղից հրատարակուեց սահմանադրութիւն, որ կազմուած էր երկիրը կառավարելու ժողովրդի ներկայացուցիչների ձեռքով, առանց ազգի ու կրօնի խտրութեան։

Սա հազար ու մէկերորդ խութն է։

Արդէն մօտ երկու տարի է, ինչ Օսմանեան Սահմանադրութիւնը գոյութիւն ունի։ Ոչ միայն բռնապետութիւնն է տապալուել, այլ և բռնապետը։ Ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան դրօշը ծածանում է այն պառլամենտի գլխին, ուր ժողովուած են ժողովրդի ներկայացուցիչները։

Բայց առերևոյթս իրականացած յոյսերի մօտ երկու տարուայ գոյութիւնը նոյնքան դառն յիշողութիւններ է բովանդակում իւր մէջ, որքան այն ժամանակ, երբ նա դեռ յոյս էր ու երազ։

Սահմանադրութիւնը, որի վրայ կարող էր հայը դնել իւր յոյսը և վստահել նրան, որ կոչուած պէտք է լինէր խորին հաւատք ներշնչելու դէպի ազգային ու քաղաքացիական կեանքը և արժարժելու աւելի հաստատուն յոյս դէպի լաւագոյն ապագան—նա՝ ընդհակառակը՝ յուսախաբ արեց հային։

Սահմանադրական ցնծութեան օրերում, եղբայրութեան, հաւասարութեան և ազատութեան փողերի հնչիւնների ու համբոյրների տաք շռինդի տակ Ադանան ներկուեց տասնեակ հազար հայերի արիւնով։

Ադանայի կոտորածը, որի մէջ անմասն չէր Թիւրքիայի սահմանադրական կառավարութիւնն ու զօրքը—հայի գլխին սառը ջուր թափեց։

Նա տեսաւ որ հաղար ու մէկերորդ անգամը լինելով հանդիպել է անողորմ խուրթին։ Նա թօթափեց Սահմանադրութեան պատճառած գինովութիւնը և այս անգամ էլ սարսափով համոզուեց, որ նոյն վայրենիներով է շրջապատուած, որ Սահմանադրական ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն բառերը շիրմաներ են, որոնց ետև շարունակւում է թաղնուած մնալ ու գործել Թիւրքիայի հանրածանօթ բարբարոսութիւնը։

Սխալ կը լինի կարծել թէ Սահմանադրութեան օրօք տեղի ունեցած բարբարոսութիւնները Համիդեան փոթորկի ուշացած թափեր են։ Զափազանց աչքի զարկող ապացոյցներ կան, որ Սահմանադրութիւնը մի պատրուակ է, որի ետև թաղնուած է Համիդի քաղաքականութիւնը։

Շաբաթ չի անցնում, որ Հայաստանի զանազան անկիւններից կոտորածի պատրաստութեան լուրեր չը գան։ Մահմեդական ամբոխի սիրած դժոխային հարսանիքի կրկնուելու հաւանականութիւնը նոյնքան մեծ է այսօր, որքան մեծ է եղել Սահմանադրութիւնից առաջ։ Ադանայի ջարդի գլխաւոր հերոսների անպատիժ մնալը, տնշուշտ այն համոզումը գոյացրեց մահմեդական ամբոխի մէջ թէ Համիդի կառավարութեան և Սահմանադրական կառավարութեան միջև ոչ մի էական տարբերութիւն չը կայ, որ այժմ էլ կարելի է հալածել, թալանել ու ջարդել անպատիժ կերպով, որպէս անպատիժ մնացին Ադանայի ջարդարարները։

Սահմանադրական ռէժիմի ծրի փաստաբանները, օտարազգի, թէ հայ, աշխատում են հաւատացնել մեզ թէ, ներկայ կառավարութիւնը շատ կօրրէկտ է, մինչև անգամ բարեացակամ դէպի հայ հպատակները, թէ Սահմանադրութեան թշնամիներն են, որ աշխատում են խռովութիւններ յարուցանել, որ ամեն մի կարուկ միջոց ներկայ կառավարութեան կողմից խռովարարների ու հին կամ նոր ջարդարարների դէմ կարող է Սահմանադրութիւնը վտանգի ենթարկել...

Հապա ի՞նչու թալանի, հալածանքի ու ջարդի առարկան միշտ դառնում է հայը և ոչ մահմեդականը. ի՞նչու տասնեակ հազարաւոր հայեր կոտորուեցին Աղանայում, այն ինչ նոյն ջարդարարները ոչ մի մահմեդականի քիթ չարիւնեցին։

Ինքներս մեզ չը խաբենք։

Բռնապետութեան վերահաստատման լուրերը, Սահմանադրութիւնը չը վտանգելու երկիւղը պատրուակներ են. որպէս, ինչպէս վերն ասացինք, պատրուակ է ինքը՝ Սահմանադրութիւնը։ Համիդի և նրա հաւատարիմ փաշաների սիրուն աչքերը չեն, որ հրապուրում են մոլեռանդ տմբոխին, այլ այն, որ այդ տարրը դարերի ընթացքում սովորել է թալանել ու կոտորել և այժմ ևս չի կարող ապրել առանց թալանի ու կոտորածի։

Զէ՞ որ Մ. Յ. կուսակցութիւնն անգամ, որ Սահմանադրական կառավարութեան ստեղծողն ու նրա մարմնացումն է հանդիսանում, չը հանգստացաւ, մինչև որ իւր թաթերն էլ հայկական արիւնով չը ներկեց։

Այո՛, ինքներս, մեզ չը խաբենք։

Միամտութիւն կը լինի մտածել, որ Թիւրքիայի հայը (մայրաքաղաքի հայերի մասին չէ խօսքս) կարող է հաւատ ընծայել մեր հաւաստիացումներին։ Նա իւր դրութեան լրջութիւնը շատ լաւ գիտէ, որովհետև նա իւր դարաւոր հալածիչների սիրտն ու հոգին լաւ է ճանաչում։

Որպէս զի հայը հաւատայ և անձնատուր լինի իւր խաղաղ տնտեսութեան, կուլտուրական աշխատանքին, ունենալու է որ և է շոշափելի դրական, որ իսկապէս կայ Սահմանադրութիւն, որ երկրին թագաւորում է լիակատար հաւասարութիւն, որ ինքն այլևս իրաւազուրկ ռայա չէ, այլ ազատ քաղաքացի։

Թող որ Սահմանադրութիւնը պատրուակ լինի, թող որ ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն բառերը շիրմաներ լինին—այնուամենայնիւ հաւատացած ենք, որ Թիւրքիայի հայը գոհ կը մնար նաև նրանով, եթէ հաւատար, որ անցեալի թալան ու ջարդերը այլևս չեն կրկնուի։

Աւելին կասենք. հային այսուհետև ևս տանելի կարող

էր լինել ջարդն ու թալանը, եթէ ապագայի վրայ որ և է յոյս ունենար։

Սակայն որքան սպառնական է ներկան, նոյնքան անյոյս ու մթին է ապագան։ Սահմանադրութիւնը ոչ միայն յուսախաբ արեց, այլև իսպառ խորտակեց ապագայի յոյսն անգամ։

Իրաւ է՝ որ Սահմանադրութիւնը Ռուսաստանին էլ չը տուեց այն, ինչ որ սպասում է, այնուամենայնիւ չի գտնուի մէկը, որ այդ երկու պետութիւններին մի տախտակի վրայ դնի։ Երբ հարցը վերաբերում է հպատակների կեանքի ու գոյքի ապահովութեան, կառավարութեան բռնակալութիւնը այնքան մեծ և վտանգաւոր չարիք չէ, որքան այն, երբ ժողովուրդն է բռնակալ ու բարբարոս։

Մի Գուրիշկևիչ կամ մի Մարկով կարող են պառլամենտի բեմից կոտորածի դասախօսութիւններ անել, բայց ռուս ժողովուրդը նրանց խօսքով իւր ծեռքերը արիւնով չի ներկի, այնինչ եթէ նոյն բացականչութիւնները լսուին թրքական պառլամենտի ամբիոնից, օսմանեան խուժանը չի յապաղի արեան գետեր հոսեցնել։

III

Մենք ասացինք, որ օսմանեան սահմանադրութիւնը հային յուսախաբ արեց, որ նա կեանքի ու գոյքի ապահովութեան ոչ մի գրաւական չը տուեց, ընդհակառակը նրա օրօք և նրա անունան տակ գործող կառավարութեան ծեռքով Ադանայի սարսափելի ջարդը տեղի ունեցաւ։

Բայց այս չէ բոլորը, նոյն սահմանադրական կառավարութիւնը ծգտում է խլել հայից նաև փշրանքներն այն իրաւունքների ու արտօնութիւնների, որոնք ծեռք են բերուած այնքան թանկագին զոհերի արեան գնով։

Ահա այստեղից էլ ծագում է այն հարցը թէ, եթէ այժմեան թոյլ, տնտեսապէս քայքայուած, արտաքին ոյժից ճնշուած և դաշնակցական պարտաւորութիւններով շղթայուած Թիւրքիան, չը բաւականանալով ջարդի ու թալանի արհաւիրքով,

ծեռք է մեկնում նաև հայի փոքրիկ արտօնութիւնների—ի՞նչպէս կը վերաբերուի նա դէպի անպաշտպան հայը, երբ գլուխ կը դայ բալկանեան պետութիւնների դաշնակցութիւնը։

Չէ՞ որ Բերլինի դաշնադրութեան ոչնչանալով, ոչնչանում է նաև 61-րդ յօդուածը։

Այս տեսակէտից քննելով, մարդս գալիս է այն վերջնական եզրակացութեան, որ նախագծուած դաշնակցութիւնը անուղղակի կերպով վտանգի է ենթարկում ոչ միայն Թիւրքիայի հայի, այլև պարսից հայերի ազգային գոյութիւնը։

Շատերը կը դտնուին կարծողներ, թէ Թիւրքիայի դաշնակցութիւնը Եւրոպական պետութիւնների հետ, բարերար ազդեցութիւն կանի այս վերջինիս վրայ. թէ Թիւրքիան կը լուսաւորուի, կը քաղաքակրթուի, երբ ինքնին կը վերանայ այն վտանգը, որ դամոկլեան սրի նման կախուած է եղել ու կախուած է հայի գլխին...

Եթէ՝ իրաւ՝ կան այսպիսի սին յոյսերով սփոփուողներ, նրանք յամենայն դէպս պէտք է գիտենան, որ քաղաքական դաշնակցութիւնները չեն կազմուում ժողովուրդների կեանքը, տրնտեսութիւնը բարելաւելու և իրաւունքների սահմանը ընդլայնելու համար։ Եռապետական դաշնակցութիւնը, որ ընդհանուր խաղաղութեան պահպանման անունից է խօսում—նա միմիայն չարիք է բերել մարդկութեան։ Խօսել ռազմական պարագաների վրայ ծախսուող միլիոնների և այդ միլիոնները հայթայթող ժողովուրդների տնտեսական քայքայման մասին—մեր նիւթից դուրս է։ Աւելորդ չենք համարում մատնանիշ անել մի բանի վրայ, այնէ՝ որովհետև ոչ մի ժողովուրդ կամովին թոյլ չէր տայ, որ իւր դառն քրտնքի վաստակը կառավարութիւնը գործ դնէր մահաբեր զէնքերի գերազանցութեան մէջ տեղի ունեցող տենդային մրցութեան վրայ, բնականաբար կառավարութիւնները ժողովրդին պահում են այն վիճակի մէջ, որպէսզի հնարաւորութիւն չունենայ ծայն ու ծպտուն հանելու։

Տասնիններորդ դարու կէսից սկսած Թիւրքիան, թէ որպէս պետութիւն և թէ որպէս ազգ, անընդհատ շփուել է Եւրոպական պետութիւնների և ազգերի հետ. Թրքական քաղաք-

ները լիքն են Եւրոպացիներով, իրենց կրթական, կուլտուրական և առևտրական խոշոր հաստատութիւններով։ Սակայն այդ շրջումը միայն բացասական արդիւնք է տուել—նա աւելի սաստիկ է դրդռել մահմեդական տարրի և նրա կառավարութեան մոլեռանդութիւնը դէպի քրիստնեաները աւելի է վայրենացրել նրան։

Որպէսզի հասկանալի լինի թէ ինչ ներգործութիւն է ունեցել Թիւրքիայի վրայ Եւրոպացիների հետ ունեցած յարաբերութիւնը, շփումը, նախ պէտք է իմանանք թէ ինչ պահանջներ են արել Եւրոպական պետութիւնները Թիւրքիայից։

Ահա այդ պահանջներից ու վերաբերմունքից մի քանիսի ամփոփումը։

—Բաց արա՛ մեր առաջ Թուրքիայի շուկաները, տուր մեզ այս կամ այն արտօնութիւնը, այս կամ այն իրաւունք, այս ինչ կամ այնինչ կոնցեսիան, այն ժամանակ ջարդիր քրիստոնեայ հրպատակներիդ ուզածիդ պէս—թելադրում էր Գերմանիան։

—Տուր մեզ Կիպրոսը, քիթդ եգիպտական գործերին մի խառնիր, թոյլ տուր, որ երկրի հարստութիւնը ծծենք տղրուկի նման և մենք մատների արանքից կը նայենք ձեր բարբարոսութիւններին—ասում էր Անգլիան։

—Թո՛ղ որ Լօրանդօն և նմանները աւելի երկար տարիներով և նպաստաւոր պայմաններով թրքական ոսկիները ֆրանսական գրպանները լցնեն և մենք ձեր կատարած ջարդերի մասին ծայն չենք հանի—ասում էր Ֆրանսիան։

Իսկ Ռուսաստանը կամենում էր, որ Թիւրքիան հայերին ջարդի, նախ՝ նրա համար, որ առիթ լինի իւր քաղաքական ազդեցութիւնը մեծացնելու և երկրորդ՝ որ հնարաւոր լինի Հայաստանը գրաւելու։

Եւ սրանք լոկ ենթադրութիւններ չեն, այլ պատմութեան էջերում արձանագրուած փաստեր, որոնց մենք ինքներս էլ ականատես ենք եղել։

Ասել է թէ Եւրոպական պետութիւնների յարաբերութիւնը, շփումը,—թէ քաղաքական, թէ՛ կուլտուրական և թէ տնտեսական հողի վրայ,—կոչուած չի եղել Թիւրքիային քաղա-

քակրթելու, բարեկարգելու, այլ բացառապէս շահագործելու նրրան թէ տնտեսապէս և թէ քաղաքականապէս։ Եւ որովհետև այդ հողի վրայ միշտ տեղի է ունեցել կատաղի մրցութիւն շահագրգռուած պետութիւնների մէջ, ուստի Թիւրքիան ինքնապաշտպանութեան մտքով, շարունակ յետ ու յետ է նահանջել, քայլ առ քայլ մօտենալով բարոյական, ֆիզիքական ու տնտեսական քայքայման, երբ նոյնպէս աստիճանաբար զարգացել է նրա մէջ բուռն ատելութիւն դէպի քրիստոնեաները։

Եւ բնականից վայրենին աւելի ևս կատաղի վայրենութեան է հասել։

Այս բոլորից յետոյ ենթադրել թէ բալկանեան ֆեդերացիան քաղաքակրթական նոր հորիզոններ կը բանայ Թիւրքիայի առաջ, վարչական նոր բարեկարգութիւններ, նոր սկզբունքներ կը մտնի այդ արիւնի ու արցունքի վրայ հիմնուած պետութեան մէջ—դա կը լինի երեխայական միամտութիւն և կամ մի հրաշք։

Որովհետև հրաշքներին մենք չենք հաւատում, ուստի կարծում ենք, որ Թիւրքիայի հայը գտնուում է մի այնպիսի անորոշ կացութեան մէջ, որպէս չի գտնուել երբէք։

Ի՞նչ դիրք պէտք է բռնի, ինչպիսի քաղաքականութեան պէտք է հետևի նա։

Նա չի կարող յետ դառնալ դէպի Համիդի ռէժիմը, որից դարերով հալածուել տանջուել ու ջարդուել է։ Չի հաւատայ Սահմանադրական կառավարութեան, որովհետև սա ամբողջ Կիլիկիան ներկեց հայկական արիւնով, ծեռք է մեկնում հայի ազգային ինքնուրոյնութիւնը պահպանող փոքրիկ ֆակտորներին ևս, ի դէմս պատրիարքական իրաւունքների, կրթական հաստատութիւնների անկախութեան, մայրենի լեզուի և այլն։ Չի կարող նաև Եւրոպական պետութիւնների վրայ յոյս դնել, քանի որ նրանց մէջ ծրագրուում է քաղաքական այնպիսի կոմբինացիա, որին հեշտութեամբ կարող են զոհուել ոչ միայն հայի նման մի թոյլ, անպաշտպան և լքուած ազգի շահերը, մինչև անգամ գոյութիւնը, այլև կարող է զոհուել Պարսկաստանի նման մի պետութեան քաղաքական գոյութիւնը։

Պէտք է մտածել այս մասին և լուրջ կերպով մտածել։

Mars

ԱՐԱԳԱԾԸ

Դէպի երկինք՝ սէգ, վեհափառ
Իւր գագաթով ամպածռար
Սարն է ցցուել—սարն Արագած,
Մէգ-մշուշից զգեստ հագած:
Շնչում է նա իւր նայողին
Արիութիւն—ոյժ երկնային,
Փոքրկի դէմ կանգնել միշտ վէս՝
Լանջքը ուռած հսկայի պէս...
Օ՜, երանի, երկնահո՛ւպ սար,
Ես էլ փառքով քեզ հաւասար
Կեանքի ահեղ փոքրկի դէմ
Անվախ հոգով կռուի ելնեմ...

Յարութիւն Պետրոսեան

Տ. ԳՐԻԳՈՐ Ը. ԽԱՆԶՈՂԱՏ

207. Գրիգոր, նման ուրիշ ժամանակակիցներու, յանկարծ կը ներկայանայ պատմութեան մէջ, իբրև աթոռին թեկնածու, սակայն յայտնի է, որ եթէ կանուխէն դիրք և ազդեցութիւն չունենար, չէր կրնար յանկարծ կաթողիկոսական աթոռը գրաւել։ Գրիգոր զօրաւորագոյն գտնուեցաւ Յակոբի դաւաճաններուն մէջ, և իւր զօրութիւնը կը պարտէր այլազգի ամիրային և մասամբ ալ հայ ազգային վարչութեան պետին, որ տակաւին կը շարունակէր Սիսի մէջ, մեծ գաղթականութենէն (1404) ալ ետքը։ Գրիգոր շուտով ինքն ալ իւր նախորդին բախտին հանդիպած կ'ըլլար, զօրաւոր հակառակորդներու երեսէն, եթէ իւր պաշտպան ամիրային բռնութիւնները ահ ու սարսափ ազդած չըլլային ամէնուն վրայ, որով կրցաւ քանի մը տարի գրաւուած աթոռը պահել։ Գրիգորի Խանձողատ մականունը, որով ճանչցուած է պատմութեան մէջ, մթին մնացած է. և դժուար է ճշտել թէ ինչ պատճառով կամ ինչ նպատակով դրուած է այդ մակդիրը, որ այլաբանական իմաստ կ'երևի ունենալ։ եթէ դիպուածական պարագայէ մը առնուած չէ։ Գրիգորի կաթողիկոսութեան սկիզբները (1411), Բարա Եուսուֆ զօրացաւ Ասիոյ մէջ, տիրեց Պաղտատի, յաղթեց Ամիդի Օսման ամիրային, և սկսաւ ամէն կողմ ահռելի կոտորածներ ընել, մինչև որ Օսման սկսաւ նորից զօրանալ (1418), և Շահռուն, Լէնկթիմուրի որդին, Եուսուֆին դէմ ելաւ, որ նոյն միջոցին հիւանդութեամբ մեռաւ (1420)։ Թէպէտ Բարա Եուսուֆի իշխանութիւնը վտանգուած կ'երևէր, բայց որդին, Իսքէնտէր, յաջողեցաւ զայն նորէն զօրացնել և փայլեցուց Քարաքոյունլու Քիւրդերու իշխանութիւնը (1421)։ Քուրդերու միւս մասին գլուխն էր Օսման, Աքքոյունլու ցեղին իշխանը։ Երկու ցեղերուն անունները առնուած էին իրենց նշանէն, նշանն ալ իւրաքանչիւր ցեղի հօտերուն գոյնէն։

208. Արևելեան վարդապետներ, որոնք Աղթամարի աթոռը տկարացնելով Սսոյ աթոռը զօրացնելու ձեռնարկած էին Յակոբի ժամանակէն, անտարբեր չէին կրնար մնալ այն ողբալի կացութեան հանդէպ, որուն հասած էր Սսոյ աթոռը, և քանի մը փառա-

մոլ եկեղեցականներու ձեռքը խաղալիք էր դարձած։ Անոնք արծաթով ու թոյնով աթոռը իրարու ձեռքէն կը յափշտակէին, և այլազգի ամիրաներ կը զօրացնէին այդ կացութիւնը, ուստի անուղղակի օգուտներ կը քաղէին։ Գրիգորի անձն ալ, գործն ալ, ամենայետին անկման մէջ կը գտնուէին, զոր աւելի դիւրին է երևակայել, քան թէ մանրամասնօրէն պատմել։ Արևելեայց խումբէն Պողոս վարդապետ Գառնեցի, չեմք գիտեր ինչ տեսակ պարագաներու բերմամբ Երուսաղէմ էր գացած, նոյն աթոռին ծառայութեան մտած, և մինչև պատրիարքութեան աթոռ բարձրացած (1413)։ Արևելեայք երբ որ ուզեցին Սսոյ գործերուն միջամտել, զօրաւոր ազդեցութիւն գործածել, և կաթողիկոսարանի միաբաններուն անկարգ ընթացքը զսպել, պէտք ունէին կարող և հմուտ և վարժ մէկը գտնել, որ կարենար դժուարին ձեռնարկը յաջողցնել. և յաղթել այնպիսի հակառակորդներու դէմ, որոնց սովորական միջոցները, կաշառներ և սպանութիւններն էին։ Այդ առթին էր որ ամէնուն մտադրութիւնը գրաւող և ամէնուն վկայութեամբ յարմար անձը նկատուեցաւ, Երուսաղէմի Պողոս պատրիարքը, Արևելեայց ալ նախածանօթը։ Պողոս Արևելեան վարդապետներու կողմէն յանձնարարութիւն ստացաւ Երուսաղէմէ Սիս երթալ, կաթողիկոսական աթոռը բարեկարգել, և ինչ որ պէտք է գործադրել։

209. Ստուգապատում և Ժամանակակից պատմագիրներու պակասութիւնը, և լոկ ցիրուցան յիշատակներով պատմութիւն կազմելու հարկադրութիւնը, յաճախ կը ստիպէ շատ մը պարագաներ անորոշ թողուլ, և թուականներ ու պարագաներ ճշտելէ ձեռք քաշել։ Այդ կարգէն են Պողոսին Սիս հասնելուն, և ձեռնարկած գործերուն, և Գրիգորի կաթողիկոսութենէ ելնելուն պատմութիւնները։ Պողոս կը յիշատակուի իբր Երուսաղէմի պատրիարք 1413 տարին, և միևնոյն տարին յետ սուղ ինչ աւուրց, կը յիշատակուի իբր կաթողիկոս ի Սիս (Տ. Յովհ. Ա. 220)։ Միւս կողմանէ ուրիշ յիշատակաց մէջ, Գրիգոր աքսորուած կ'ըսուի 1418 տարին, և նոյն թուին Պողոս կաթողիկոս եղած (Առաք. 336)։ Հրատարակուած յիշատակարաններու մէջ կը տեսնենք, որ երբեմն Պողոս իբր կաթողիկոս կը յիշուի 1416 թուին (Նստարք 48), և երբեմն ալ Գրիգոր իբր կաթողիկոս կը ճանչցուի 1420 թուին (Նստարք 62)։ Եթէ չուզեմք այդ թուականներէն մին կամ միւսը իբր սխալ գրուած կամ սխալ ընթերցուած համարել և զանց ընել. կարող եմք համաձայնեցնել այս կերպ ենթադրութեամբ մը։ Պողոս Երուսաղէմի պատրիարք կ'ընտրուի 1413 թուին. մէկ կամ երկու տարի ետքը Սիս կերթայ (1415), իւր ազդեցութեամբ կը զօրանայ. այնպէս որ ող-

Ջամիտներէն և Գրիգորի հակառակորդներէն կաթողիկոս կ'ընտրուի (1416)։ Գրիգոր իւր կուսակիցներուն ու պաշտպաններուն շնորհիւ կը շարունակէ կաթողիկոսի դիրք և անուն գործածել երկու տարի ևս, մինչև որ Պօղոսի կողմը կը զօրանայ, և ամիրայն ալ անոր կողմը կը շահուի, և Գրիգոր կաքսորուի ու կը բանտարկուի, և Պօղոս անհակառակ կը տիրանայ կաթողիկոսական աթոռին (1418)։ Գրիգոր երկու և երեք տարի ևս կ'ապրի իւր աքսորական բերդարգելութեան մէջ, որով իւր կուսակիցներ կարող կը լինին զայն իբր կաթողիկոս նշանակել (1420)։ Յիշատակարան մը Գրիգորի համար ըսած է, թէ իւր հակառակորդներ նաեւ հոգւով սպանին զնա (Ջամ. Գ. 459)։ Հոգւոյ մահը հաւատքի կորուստին վրայ մեկնուած է միշտ, և չէինք ուզեր ենթադրել իսկ, թէ Գրիգոր յետին յուսահատութեան մէջ ուզած լինի ուրացութեան դիմել իւր հակառակորդներէն վրէժ լուծելու կամ իւր նեղութիւններէն ազատելու համար։ Քանի որ այդպիսի ակնարկ մը չեմք գտներ, ենթադրելն իսկ ա-ւելորդ կը դատեմք։ Գրիգորի մահն ալ բռնական եղած պիտի ը-սենք, հետևելով Մեծոփեցիին ընդհանուր ակնարկութեան (Կոստան. 55)։

Տ. ՊՕՂՈՍ Բ. ԳԱՌՆԵՑԻ

210. Պօղոս իբր ընտիր անձնաւորութիւն մը կը ներկայանայ ընդհանուր անկման ժամանակ. որ կամ շատ մեծ ձիրքերով կարող կ'ըլլայ մօտալուտ կործանման դէմ դնել, և կամ հասարակ ձիրքերով ալ իբր հսկայ կը նկատուի գաճաճներու բաղդատութեան մէջ։ Եթէ աւելի ընդարձակ տեղեկութիւններ ունենայինք, հնար էր զանազան ենթադրութեանց մէջէն հաւանականագոյնը որոշել։ Պօղոս ընդհանուր կերպով Արարատցի էր ճանչցուած, և այնպէս ալ կոչուած սովորաբար, լոկ նահանգին անունով. սակայն Գառնեցի դպիր մը, մտադրութիւն ունեցած է զեկուցանել ճշտիւ Պօղոսի ծննդավայրը (Նոտարք 73), ուսկից առինք և մեք Պօղոսի համար Գառնեցի կոչումը։ Ժամանակն ու ծննդավայրը կարծել կուտան թէ Հաւուցթառայ վանքին միաբաններէն է եղած, հետևաբար Սիւնեաց վարդապետանոցի աշակերտութենէն։ Արարատէ Պաղեստին անցնելուն, և Երուսաղէմի միաբանութեան մտնելուն, և այնտեղի պատրիարքական աթոռը բարձրանալուն վրայ, Երուսաղէմի պատմագիրներն ալ տեղեկութիւն չեն գտած։ Միայն ստացած դիրքը և Արևելեայց կողմէ վայելած գնահատումը, և փափուկ յանձնարարութեան մը կոչուիլը, իւր կարողութեան համար խօսուն փաստեր են։ Սոյ մէջ Գրիգոր Խանձողատի վրայ յաջո-

ղելը և կաթողիկոսական աթոռին տիրանալը, կրնան անխտիր մեկնուիլ, թէ իբր արժանաւորութեան և կարողութեան նշանակ և թէ իբր փառամոլութեան հետևանք։ Մեք կը սիրենք նպաստաւոր մեկնութեան հետևել, հիմնելով իւր վրայ նախնթացաբար կազմուած գնհատութեան վրայ։ Իւր կաթողիկոսութեան սկիզբն ալ 1418 ին դնելով, կ'ուզեմք պահել արդէն ընդունուած կարծիք մը (Առաք. 336), որով վերջնական համարած չենք ըլլար Գրիգորի անկումը, մինչև որ նա կարող էր տակաւին իւր իրաւունքը պաշտպանել։

211. Պողոսի կաթողիկոսութեան տևողութիւնը ընդհանրապէս տասուերկու տարի կը դրուի, իսկ մենք կարող ենք միայն տասնումէկ տարի նշանակել, որովհետև մինչև 1428 միայն կը գտնեմք նորա իբրև կաթողիկոս նշանակուելը (Նոտարք 29), իսկ միւս տարին (1429), արդէն իւր յաջորդին անունը նշանակուած է (Նոտարք 92)։ Պողոսին ծագումը և կաթողիկոսանալուն պարագաները, պէտք է զայն իբր բացառութիւն նկատել տան Սիսի մէջ տիրող աղթարմայական հոսանքէն, զի ոչ թէ Սսոյ ծոցէն, այլ Տաթեւեան դպրոցէն ելած էր Պողոս Գառնեցին։ Սսոյ աթոռին այն ժամանակի կացութեան վրայ ճիշդ գաղափար մը կազմելու համար, բաւական է կարդալ այն տողերը զորս ժամանակակից մը գրած է, թէ Ոչ զոյր վանք և տեղի հանգստեան կաթողիկոսին. և թէ Ոչ ունէին կաթողիկոսունքն տունս և սեղանս հասարակաց, եւ ոչ սպասաւորս, եպիսկոպոսունս եւ աբեղայս, եւ ոչ ժամատեղս պայծառս եւ հրաշալիս (Սիսուան 540)։ Բուն կաթողիկոսարանին քանդուելէն ետքը, որ միջնաբերդին մէջ կը գտնուէր, Պողոս Ա. էն մինչև Պողոս Բ. նստող կաթողիկոսներ, բոլորն ալ հետամտութեան և կաշառատուութեան և դաւաճանութեան գործերով զբաղած, և ոչ իսկ ժամանակ ունեցած են կաթողիկոսարան մը կանգնելու, որ անհնար պէտք չէր լիներ, նկատելով որ Սսեցի Հայեր, ամիրաներու իշխանութեան ներքև ալ, ազգային վարչութեան ձևը կորուսած չէին, և թագաւորազարմ գլուխ մըն ալ ունէին։ Պողոս, իւր առաջին գործն ըրաւ նոր կաթողիկոսարան մը կանգնել, քաղաքէն դուրս, Սուրբ Աննա եկեղեցիին կից, գեղեցիկ և ամուր շինուածով, և հայրապետանոցի կարևոր մասերով, որ երկար ատեն ալ իբր կաթողիկոսարան ծառայեց, մինչև որ նորոգուեցաւ Սուրբ Սոփիա եկեղեցին, և կաթողիկոսարանն ալ անոր մօտ փոխադրուեցաւ։ Սուրբ Աննայի հայրապետանոցը տակաւին կը ցուցուի Տէր Պողոսի վանք անունով։

212. Այդ շինութեանց միջոցին, Պողոս կաթողիկոսարանի գործերը հաստատուն վիճակի մէջ դնելու դիտմամբ, այցելութեան

գնաց Երուսաղէմ (1422), գուցէ այն աթոռին գործերուն ալ վերջնական կարգադրութիւն մը տալու համար, զի առժամեայ պաշտօնով Սիս եկած, իբր պարզ քննիչ մը, ինչպէս մեք պիտի ըսէինք մեր այժմեան պաշտօնական լեզուով։ Երուսաղէմէ դարձին աւարտեց Սուրբ Աննայի կաթողիկոսարանին շինութիւնը (1423), որուն մեծ դրան վրայ դրոշմել տուաւ, թէ կատարեցաւ վանքս ծախիւք Պօղոսի կաթողիկոսի (Սիսուան 541)։ Պօղոս միայն նիւթական շէնքով չբաւականացաւ, այլ ուզեց օրինաւոր միաբանութիւն և ներքին բարեկարգութիւն ալ հաստատել. ուստի բերել տուաւ յարեւելից. այսինքն է Սիւնեաց վարդապետանոցէն, քերթողածաղիկ փիլիսոփայք եւ անձինք ճշնաղգեաց, աբեղայս եւ կրօնաւորս, եւ զարդարեաց նօքոր զվանս իւր զոր շինեաց, պայծառ ժամատեղօք եւ գեղեցիկ կարգով եւ սահմանիւք, զորս տեսեալ էր յԱրեւելս ի հայրականի ժառանգութիւն իւր (Սիսուան 541)։ Ահա Պօղոսի Սիւնեաց աշակերտութենէն լինելուն բացայայտ վկայութիւնը։ Յատկապէս գրել տրուած ճառընտիր մը (Տ. Յաբ. Ա. 220), և յայսմաւուրք մը և տարեգիրք մը (Սիսուան 541) կը ցուցնեն, թէ Պօղոս սկսաւ մտադրութիւն դարձնել փոքրիշատէ ուսումնական զարգացում ալ հաստատել Սսոյ մէջ, սակայն այդ ջանքեր հաստատուն և տեւական պտուղ չունեցան, և Սսոյ աթոռոյն անկման առջեւը չառին։ Պօղոսի գործունէութեան որ աստիճան արդիւնաւորութիւն ունեցած լինելը ճշդիւ չեմք գիտեր. բայց մեծ եղած չլինելը կը հետեւի հաստատութիւն և ընդարձակութիւն չունենալէն։

213. Պօղոսի գործունէութեան մաքառող պարագաներուն կարգին, պէտք է նկատի առնուլ ոչ միայն տեղական հակառակութիւնները, զորս մինչև աստիճան մը յաջողած էր զսպել, այլ մանաւանդ քաղաքական շփոթ կացութիւնը։ Ճիշդ այդ ժամանակին էր որ Քարա Եուսուֆի որդին Իսքէնտէր, հօրը մահուանէ ետքը անոր իշխանութիւնը ժառանգելով (1420), նախ հալածական հեռացուց Շահռուհը (1421), ապա ասպատակաւ աւերեց և աւարեց ամէն կողմերը, և այնպիսի սարսափելի աղէտներ տարածեց, որ ականատես Մեծոփեցին լալէն ու ողբալէն զատ կերպով մը չկրնար նկարագրել։ Իսքէնտէր ուզեց միաւորի նուաճել բոլոր մանաւոր ամիրաները, որք զանազան կողմեր մնացած էին հին տիրապետներու ժամանակէն։ Այդ պատճառով արիւնռուշտ պատերազմներ ալ ունեցաւ Աքքոյունլուներու փատիշահին հետ։ Անհնար էր որ Պօղոս ալ չզգայր այդ աղետալի ծանրութիւնը։ Ճիշտ այդ միջոցին տեղի կ'ունենայ Սիսէ հեռացող նոր հայ գաղթականութիւն մը (1423), Կարապետ կաթողիկոսի օրով տեղի ունեցած գաղթականութենէն (1404) ոչ նուազ կարևոր։ Այս վերջին գաղ-

թականութեան գլուխ եղած է, Կոստանդին, որ Թագաւոր կը կոչուի, գուցէ Թագաւորազն մը լինելուն համար։ Գաղթականութիւնը շիտակ կ'անցնի Կիպրոս, չկրնալով շարունակուած յարձակումներուն տակալ։ Այս կերպով, Լևոնի անկումէն 48 տարի ետքը, (1375—1423) վերջապէս կը դադրի Սիսի մէջ ազգային վարչութեան հետքը, է հարկաւ այս պարագային հիմնուելով Սիմէոն կաթողիկոս նոյն թուին կը դնէ հայոց քաղաքական իշխանութեան վերջանալը (Ջամբռ 17)։

214. Պողոսի կաթողիկոսութեան առաջին օրերը բարեգուշակ եղած էին, միջոց ժամանակը քաղաքական յուզմանց մէջ անցաւ, իսկ վերջին մասը բոլորովին մութ և անյիշատակ մնացած է։ Կ'երևի թէ վերջին գաղթականութիւնը բոլորովին վերիվայր շրջեց Պողոսի դիրքը, և մնացեալ Հայոց մէջ նորէն սկսաւ զօրանալ աղթարմայական հակառակութիւնը։ Մեծոփեցիին ընդհանուր ակնարկութիւնը, դեղակուր սպանուած կաթողիկոսներուն թիւէն դուրս չթողուր Պողոսն ալ, և Պողոսի յաջորդ Կոստանդինի ուղղութիւնն ալ, որ լատինամոլ գաղափարներով կազմուած է, գոնէ ընդաղօտ, կռահել կուտայ մեզի, թէ Պողոս իւր վերջին տարիներու մէջ պարտաւորուեցաւ մաքառել ապաշնորհ հակառակութեանց դէմ, և թէ հակառակորդները յառաջելով դաւաճանութեան յանգեցան։ Աթոռին թեկնածու Սսոյ հին միաբաններ, Պողոսով և Պողոսի բերած արևելեան վարդապետներով ինքզինքնին զրկուած կը կարծէին, և նորէն իրենց իրաւունքին մտնելու համար հին զէնքերնուն դիմեցին, և դաւաճան դեղատուութեամբ Պողոսը մեռցնելով, նորէն իրենց անցուցին կաթողիկոսական աթոռը (1429)։ Այսպէս անպտուղ վերջացաւ Սսոյ աթոռը վերակենդանացնելու համար Արևելեայց թափած ճիգը, և ազգային հայրապետութիւնը պայծառացնելու փորձը։ Մինչև այն ատեն, աթոռը իւր պանդխտութենէն դարձնելու գաղափարը դեռ մտածուած չէր. բայց երբ այդ վերջին փորձն ալ պարապի ելաւ, փոխադրութիւնը սկսաւ անհրաժեշտ պահանջ դառնալ։

215. Գուցէ անմիջապէս, Պողոսի կենդանութեան ժամանակ, մտաբերէին այդ փոխադրութեան, գուցէ ինքն Պողոս ալ ձեռնտու ըլլար այդ խորհուրդին, սակայն ժամանակին պարագաները այնչափ ծանր էին, որ այդպիսի խորհուրդի մը բնաւ պատեհութիւն չէին ընծայեր։ Իսքենդէրի արշաւանքները և աւերածները ահուդող ազդած էին ամէն կողմ։ Այդ միջոցին էր որ Գրիգոր Խլաթեցին կը նահատակուէր ի Ցիպնա (1425), Յակոբ Ովսաննացին և Ղազար Բաբերդցին կը նահատակուէին ի Ռշտունիս 1428), և ասոնցմէ առաջ նոյն վախճանը ունեցած էր Թովմաս

Պուտլիկցին (1424)։ Յակոբ Ղրիմեցին ալ ցաւալով կը վախճանէր ի Ցիպնա (1426), ամէնքն ալ գործունեայ վարդապետներ։ Արարատ և Սիւնիք նահանգներն ալ աւառութեան և կոտորածի մատնուեցան, և անոնք միայն ազատուեցան որոնք լեռներու և ձորերու անմատոյց տեղերը կրցան ապաւինել։ Ժամանակին նշանաւոր անձերու կարգին պէտք է յիշատակել Յովհաննէս Հերմոնեցին, Զաքարիա Հաւուցթառացին, Թովմաս Մեծոփեցին, Շմաւոն Տաթեւացին, Տաթեւացի մեծ վարդապետին աշակերտ վարդապետներ։ Ասոնք կարող էին խօսել եկեղեցւոյն կացութեան և կարօտութեանց վրայ, սակայն ինչ հնար էր գործել, երբ ամէնոք իւր կեանքին վրայ անվստահ, վախով կապրէր ամէն վայրկեան, և աշխարհ առհասարակ երկիւղի և կասկածանաց մատնուած էր (Մեծոփ. 91)։ Իբր թէ կոտորածին արհաւիրքը բաւական չըլլար, ահռելի սով մըն ալ եկաւ (1431), և կաթողիկոսական խնդրոյն լուծումը մնաց յաջողագոյն պարագաներու։

Մաղաքիա աբ. Օրմանեան

ՄԻ ՕՐ [1]

IX

Մի վառ, եռանդոտ ու կայտառ հոգի ունէր Լուսիկ Պատրիկեանը։ Տեսնում էր կեանքը և նրա ցաւերը։ Պատրաստւում էր օգտակար լինելու այդ կեանքին, հասարակական խոցերի վրայ սպեղանի դնելու, դեղ ու դարման տանելու։ Օրիորդը հայ կանանց նոր դասին էր պատկանում։ Նա նոր սերնդի պայծառ ներկայացուցիչներից մէկն էր և իւր մէջ մարմնացնում էր հայ կնոջ լաւագոյն յատկանիշները։ Նա սիրում էր մայրենի խօսքը, սիրում էր հայ լեզուն և հայ ժողովուրդը, որի մանուկ սերնդի դաստիարակութեան, կրթութեան գործին կամենում էր իւր օժանդակութիւնը մատուցանել։ Պատրիկեանի սիրտը գթառատ էր. դէպի խեղճերը, անկարողները և հալածուածները տածում էր մի անհուն սէր։ Նման չէր հայ կանանց այն խմբին, որ ոչնչով հայ կոչուելու արժանի չէ. ոչ լեզուով, ոչ սովորութիւններով, ոչ վարք ու բարքով։ Լուսիկի մաքուր սիրտը ստեղծել էր գերազանց մարդու մի տիպար իւր հոգու խորքում, որին երկրպագում էր և որին փնտրում էր իրական կեանքում։ Այդ տիպարը գերբնական մի էակ չէր, այլ մի մարդ, որ օժտուած է լաւագոյն յատկութիւններով—հոգեպէս՝ ազնիւ, անկեղծ, եռանդոտ, արտաքինով՝ համակրելի։ Նա տեսել է շատերին, շատերն էին սիրել նրան և քարշ եկել նրա ետևից, բայց դրանից ոմանք կամ նրա արհամարհանքն էին վայելել, կամ անտարբերութիւնը, կամ ատելութիւնը։ Նա չէր ուզում իրան խաբել. ոչ մէկը սրտովը չէր։ Կային հարուստ երիտասարդներ, որոնք ուզում էին շլացնել օրիորդին իրանց արտաքուստ վայելուչ, փայլուն և շռայլ կեանքով։ Սակայն Լուսիկը՝ շուտ խաբուողներից չէր. նրա համար այդպիսի ճոխութիւններն ու աւելորդ մսխումները զզուեցնող էին և ատելի։ Նա պարզ, պատշաճաւոր և համեստ կեանքի սիրահար էր։ Չէր սիրում գծուծ հարստութիւնը. նրա մէջ մի տեսակ բնական հակակրութիւն կար դէպի հարուստների վարած կենցաղը և այդ բոլորի աղբիւրը և սկզբնապատճառը կազմող հարստութիւնը։ Օրիորդ Պատրիկեանի հոգու ստեղ-

---

[1]) Լումայ № 3.

ծած բարձր իդէալը հարստութիւն չունէր. նա աւելի մտքի ու սրտի պայծառութեամբ էր օժտուած։ Աղջիկն այդ իդէալն էր որոնում։ Վերջինիս պատկերը նրա երևակայութեան միջից չէր անհետանում, այլ միշտ և ամեն ժամանակ պայծառ ու զուարթ լուսաւորում էր նրա հոգեկան կեանքի գաղտնիքները։ Լուսիկն անդադար որոնում էր, տենչում էր հասնել, փարուել և գրկել նրան։ Օրիորդի հոգին ծարաւ էր իդէալական մաքուր ու վսեմ սիրոյ։ Վերջապէս նա ծանօթացաւ ինձ հետ։ Դա նշանակելի ժամանակ էր։ Ես արդէն զզուած իմ վարած կեանքից, բոլորովին երես էի ուզում թեքել անցեալից և նոր ընթացք բռնելու մասին ծրագիր էի կազմում։ Ուզում էի մաքրուել, վերամկրտուել, իմ հոգեկան լաւագոյն յատկութիւններս հանդէս բերել։ Աշխատում էի լաւանալ, նախկին շեղումներից խոյս էի տալիս և որքան կարելի է ջանք էի գործ դնում երևալ ուրիշներին լաւ կողմերով։ Ես զարշում էի իմ վատ արարքներից և ամեն անգամ մտաբերելով հինը՝ նողկանքի զգացմունք էի տածում դէպի այն։ Հէնց այս ժամանակ, իմ վերակենդանութեան այս իսկ օրերին, ծանօթացայ Լուսիկի հետ։ Մի քանի անգամ հետը խօսք ու զրոյց ունեցայ և օրիորդի տրամադրութիւնը և համակրանքը գրաւեցի։ Խօսքի հերոս էի և լաւ վարպետ էի զրոյցի մէջ։ Ես երբէք խօսակցիս չէի ձանձրացնում, ընդհակառակն այնպէս հետաքրքրական էի դարձնում խօսակցութիւնը, որ խօսակիցս շատ անգամ ափսոսանքով էր բաժանւում ինձանից։ Լուսիկը իմ մէջ հետզհետէ սկսեց նշմարել իւր գերագոյն իդէալի գծերից։ Քիչ էր մնացել ասէր իւր հոգու խորքում՝ «ահա նա, որին փնտրում էի»։ Եւ իսկապէս դուր էի եկել նրան։ Իմ վառվռուն խօսակցութիւնը, գրաւիչ պատկերները, կենդանի և աշխոյժ նմանութիւնները գրաւեցին աղջկայ բորբոք ուշադրութիւնը։ Մանաւանդ իմ առերևոյթ ծարաւը դէպի վսեմ ճշմարտութիւնը, սէրս դէպի իդէալը, տենչս դէպի վառ ու սրբազան գործը, փափագս դէպի կռիւ և պայքար,—այս բոլորը, բոլորը բաւական էին մի կեանքի չարն ու բարին տակաւին նոր ճանաչող օրիորդի գրաւելու և նրա մէջ համակրանքի տրամադրութիւն զարթեցնելու համար։ Ես, խօսքի հերոսս, յաղթանակեցի և Լուսիկի մաքրաբարբառ բերանից հնչուեց այնքան խորհրդաւոր, այնքան զմայլեցուցիչ «սիրում եմ» բառերը։ Իսկ ես մեծ հաճութեամբ և անհուն երջանկութեամբ, չ՛գիտեմ ինչու և ինչից հարկադրուած, սիրոյ և ամուսնութեան խոստում տուեցի նրան, երդուեցի մինչև կեանքիս վերջը հաւատարիմ մնալ տուածս խոստումին։ Հէնց այդ շինծու բերկրանքի օրերին ընտանեկան քանիցս յիշուած փոթորիկը ստիպեց ինձ թողնել իմ հայրենի քաղաքը և հոգիս մաք-

բելու և օրիորդին արժանի լինելու համար,—այս խօսքերով էի Լուսիկին հրաժեշտ տալիս,—դիմեցի օտարութիւն ուսումս շարունակելու։

Անշուշտ Պատրիկեանը ազդել էր ինձ ապահովապէս։

Լաւ շրջանում էր մեծացել Լուսիկը։ Հայրը և մայրը ոչինչ չէին խնայել նրան լաւ կրթելու համար։ Առողջ դաստիարակութիւն էր ստացել։ Հարուստ ընտանիքի զաւակ չէր։ Հասուն տարիքի էր նա, երբ հայրն ու մայրը ժանտախտին զոհ գնացին։ Օրիորդին իւր հովանաւորութեան տակ առաւ նրա ունևոր ազգականներից մէկը։ Աղջկան միջոցներ և դիւրութիւն տուեցին ուսումն յաջողապէս վերջացնելու և սիրած մասնաճիւղին ամբողջովին նուիրուելու համար։ Սակայն նա կին էր ծնուած։ Սրտացաւ ազգականների հոգսը նրա նկատմամբ ամուսնութեան նպաստաւոր ելքն էր։ Շատ էին վախենում «պառաւելու» վտանգից։ «Աղջկան թարմթարմ կ'ծախեն»—ահա նրանց նշանաբանը ամուսնութեան խնդիրներում։ Ի հարկը, չէ մոռանալու և փեսացուի դիրքը, աստիճանը, հարստութիւնը։ Ո՞վ կուզէ լինի և ինչ վարք ու բարք էլ ունենայ,—փոյթ չէ, միայն թէ փողաւոր լինի։ Հասակը, տարիքն էլ կարելի է անտեսել, որովհետև աղջկայ համար խաղաղ և նիւթապէս ապահով կեանք է հարկաւոր։ Իսկ տարիքաւոր, առաջին նուագ ատելի ամուսնուն սիրելու հարցը՝ ժամանակի խնդիր է, կապրեն միասին և ուզեն-չուզեն միմեանց կ'սիրեն։

Այս պարզ տրամաբանութեամբ զինուած՝ Լուսիկի ազգականները հոգ էին տանում մի «չաղ տեղ» ճարել։ Իրապէս դժուար չէր այդ։ Աղջիկը բաւական գեղեցիկ էր։ Քնքոյշ, համակրելի, նուրբ դիմագծեր, փարթամ, առողջ հասակ, ճկուն, գեղանկարչական կազմուածք, խոշոր, սևորակ աչքեր, ճոխ, երկայն մազեր—ռիմ ասես որ չ'գրաւէին։ Նա շատ յաճախորդներ ունէր։ Բայց Պատրիկեանը ազգականների պէս դատողներից չէր։ Հաստատ համոզումների, զօրեղ կամքի և բաւական լայնհորիզոն աշխարհայեացքի տէր մի աղջիկ էր նա։ Փող, արտաքին փայլ, շռայլ և շքեղ կենցաղ, յարմարաւոր, շլացնող կեանք—սրանք և սրանց նման բաները նրան շատ քիչ էին հետաքրքրում և գրաւում։ Նա հոգեկան սէր էր փնտրում։ Եւ այդ սէրը օրիորդին թուաց, թէ գտաւ իմ մէջ։ Նա, ինչպէս երևում էր աղջկայ սիրազեղուն նամակներից, իւր հոգու, մտքի և երևակայութեան բոլոր զօրութեամբ պաշտում էի ինձ, իւր նորագիւտ իդէալին։ Ոչինչ չէր կարող նրա անդրդուելի կամքը սասանել։ Նա մինչև վերջը հաւատարիմ և տէր մընաց իւր ոգեւորութեան ժամին արտասանած խոստմանն ու երդումին։

Լուսիկը գործելու տենչով վառուած մի օրիորդ էր։ Սիրում էր գաղափարի նուիրուած կեանքը։ Նա մտքի մէջ արդէն որոշել էր այն ուղին, որով պիտի գնար իւր սիրեցեալի հետ։ Ուզում էր հաւատացնել իրան, որ ծրագիրներն օդային ամրոցներ չեն մնայ։ Ինձ ուղղած նամակների մէջ իւր նպատակներն էր ընդգծում, պարզում էր իւր հայեացքները, ծրագիրները։ Ոգևորում էր ինձ և խորհուրդ էր տալիս որոշ ուղղութեամբ պատրաստուելու, շատ մտաւոր պաշար և բազմակողմանի զարգացում ձեռք բերելու։

Մինչդեռ իւր ապագայ գործունէութեան հեռապատկերն էր գուրգուրում, մինչդեռ կրակոտ նամակներով մի թոյլ երիտասարդի հոգին էր բորբոքում կեանքի, իդէալի նուիրուած կացութեան հրապոյրներով,—առաջարկում են օրիորդի ազգականները կցորդուել, ամուսնանալ մի հարուստ, «անուանի» երիտասարդի հետ, որին ինքը ոչ անունն էր լսել և չ՛գիտէր ինչո՞ւ են ազգականները նրան «անուանի» կոչում։

Մի գեղեցիկ օր՝ նրա սենեակն է մտնում ազգական խնամակալը, հաղորդում Լուսիկին իւր և կնոջ վճռի մասին—պէտք է անպատճառ ամուսնանալ, ժամանակ է արդէն։ Մի խստասիրտ մարդ էր այդ վաղեմի համալսարանական տարիքոտ ազգականը։ Նա մինչև անգամ ապշեց ու զարմացաւ, որ իւր ուրախալի լուրը, ցանկալի աւետիքը չ՛ընդունուեց ուրախութեամբ։ Նրա «ժամանակ այդպէս չէր»։ Աղջկայ սանձը խօ չի կարելի կտրել և բաց թողնել ասելով՝ «ուր ուզում ես գնա, և արածիր»։ Դրանք վտանգաւոր և սանձակոտոր վիճակ սիրող արարածներ են։ Պէտք է նրանց որքան կարելի է ճնշած և զսպած պահել։ Եւ, վերջապէս, երիտասարդ աղջիկը, կեանքի սևն ու սպիտակը դեռ չ՛ճանաչողը՝ ինչ իրաւունքով պիտի հակառակի եփուած մարդկանց որոշումներին, խրատներին։ Նա իւր ազգականուհու վատը չէ ցանկանում։ Նրա երջանկութեան մասին է գիշեր ու ցերեկ հոգ տանում։ Զէ՞ որ Լուսիկի ծնողները սրբազան պարտք էին բարձել ազգական խնամակալի ուսերին։ Զէ՞ որ ինքը կաշկանդուած է իւր տուած խոստումին—աղջկայ վիճակը բարեբաստիկ կերպով տընօրինել։

«Ես նրա հետ չեմ ուզում ամուսնանալ», խնամակալի երկար ու բարակ անհամոզիչ ճառին պատասխանեց Լուսիկը դրականօրէն։

—Զէ՞ ուզում ամուսնանալ։ Ա՜յ քեզ տրաքոց։ Դու իմացիր, որ աղջիկ ես։ Առաջդ անդունդ կայ։ Տղայ լինէիր, ուրիշ բան էր։ Եւրոպական հովերը, Բեբել-մեբելները գլխիցդ հանիր, մի կողմ շպրտիր կանանց ազատագրութեան ցնորքները։ Լաւ իմացիր, որ

դրանք մեր իրականութեան մէջ չեն կարող հիմք գտնել, պատուաստուել մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը։ Գիտեմ, որտեղ ես ապրում։ Վերջապէս, թթու չ՚պէտք է դնենք քեզ. պառաւելուց մի թէ չես վախենում։ Տանը նստելու ախորժակ ունիս։ Չեմ ուզում ինձ լսել։

«Ես արդէն պատասխանեցի»։

—Ուրեմն այն անուանի և հարուստ...

«Իզուր են ձեր համոզելու և խրատելու ջանքերը։ Նրանք մաքաչափ անգամ չեն փոխիլ իմ որոշումս։ Ես առայժմ տրամադիր չեմ ամուսնանալու»։

—Ի՞նչ է, մինչև վերջը կամենում ես մի երեխայի ետևից ընկնել։ Ես զարմանում եմ, որ քեզ պէս բարոյականութեան պաշտպանները սիրում են մի այնպիսի արարածի, որ ոտքից մինչև գլուխ խրուած է լրբութեան տղմի մէջ...

«Դուք լաւ կանէք, եթէ ձեր չափը ճանաչէք։ Շատ հեռու էք գնում։ Հարցն առաջարկեցիք և պատասխան ստացաք, այլևս ես գլուխ չունիմ զրպարտութիւններ լսելու»։

—Զրպարտութիւնն՞ը։ Եթէ դու սոսկ նրա անձն ես ճանաչում, ես մինչև անգամ նրա ծնողներին և տոհմին էլ եմ ծանօթ։ Գիտեմ, թէ ինչ տեսակ ծառի պտուղ է նա։ Եւ, վերջապէս, նրա հայրն առանց օժտի աղջիկ չի առնիլ։ Պէտք է օգտուել այս նըպաստաւոր հանգամանքից։ Ծնողներդ ոչինչ չեն թողել, Լուսիկ, դու այս բանը շատ լաւ պիտի հասկանաս՝ մեծ աղջիկ ես։

«Ես գիտեմ, թէ վերջնական նպատակը ինչ է։ Եւ դրա համար էլ ես բեռ չեմ լինիլ ձեզ համար։ Ես չեմ ուզում՝ ոչ մէկին հպատակուել։ Ես ճնշում չեմ կարող տանել, մանաւանդ այնպիսի հարցերում, ինչպիսին է սէրը և ամուսնութիւնը։ Շատ խօսել չեմ սիրում։ Կհեռանամ ձեր ընտանիքից, որպէսզի անձնական ազատութիւնս կարողանամ զերծ պահել բռնութիւններից։ Ես կապրեմ իմ սեփական աշխատանքով։ Իմ գլխում մեխուել է այն գաղափարը, որ ես կարող եմ և պարտաւոր եմ օգտակար լինել իմ ոյժերը ներածին չափով։ Ես ուզում եմ գործ գտնել, այնպիսի մի գործ, որի համար պատրաստուել եմ, աշխատել և քրտնել։ Ես կըփորձեմ գործադրել իմ ստացած, ձեռք բերած պաշարս և տեսնել, թէ որքան այն պէտքական է, օգտակար է կեանքի և մարդկանց համար։ Ես զգում եմ, թոյլ տուէք փոքր ինչ անհամեստ լինել, որ կարող եմ շահաւէտ լինել ինձ պէս մարդ արարածներին, կարող եմ նրանց կրթել, դաստիարակել, ցանել նրանց մէջ խելացին, բարին, ճշմարիտը»։

Աղաչանք, պաղատանք։ Ոչինչ չօգնեց։ Պատրիկեանը մնաց ան-

դրդուելի իւր վճռի մէջ։ Եւ միւս օրը հեռացաւ ազգականի տանից և նրա հովանաւորութեան լծից։ Լուսիկն աշխատանքի մասին բոլորովին տարբեր հայեացք ունէր։ Ստոր, բարձր, միջին աշխատանք չկար նրա համար։ Նա սուրբ էր համարում աշխատանքի գաղափարը։ Եւ աւելի ևս սրբագործում, երբ նրա հետ կապում էր մի վսեմ նպատակ։ Որքան էլ չնչին լինի աշխատանքը, ասում էր օրիորդը, եթէ նրան դիմում են մի վեհ նպատակ իրագործելու համար, ըստինքեան սրբանում է։ Այսպէս էր դատում օրիորդը։ Դրա համար նա յանձն առաւ դայեակի պաշտօն մի ընտանիքում։ Պէտք է կրթէր երեք փոքրիկների։ Վեհ էր այդ պաշտօնը Լուսիկի համար, որովհետև այդ միջոցով նա ազատւում էր բռնակալական լծից, խնամակալի աւելորդ հոգածութիւններից, իւր ձեռքն էր առնում մատաղ հոգիների դաստիարակութիւնը, որ նրա սիրած ամենացանկալի պարապմունքն էր և, վերջապէս, պիտի ապրէր սեփական աշխատանքով, ազատ, ինքնանկախ, առանց անձնական արժանապատուութեան վարկը ցեխը գցելու։

Այս բոլորի մասին նա հաղորդեց ինձ։ Ես, ինչ ասել կուզէ. գովեցի նրա եռանդը, ոգևորութիւնը և ազատ ապրելու տենչը։ Պաշտպանեցի նրա յանդուգն քայլը։ Ես կանանց ազատագրութեան ամենաջերմ երկրպագուներից մէկն էի խօսք ու գրոյցի, նամակագրութեան մէջ։

X

Ինչպէս կարելի է տեսնել՝ զուր չէի կատարելագործութեան ետևից ընկել։ Ունէի մի շարք դրդիչ պատճառներ—մեր ընտանիքը, գիւղատնտես ընկերս և բարեկամուհիս։ Պատրաստւում էի մէկի դէմ մարտ մղելու, իսկ միւսներին հաւասարուելու համար։ Իմ հոգու խորքում նախանձով էի լցուած դէպի այն երկու անձերը, դէպ Արմայիսը և Լուսիկը։ Նրանց կամքի ոյժը, անսայթաք հետևողականութիւնը ինձ ապշութիւն էին պատճառում։ Սառնօրէն ինձ համեմատելով դոցա հետ, զգում էի այնքան չնչին, տափակ։ Իմ առաջ կանգնած էին երկու խոշոր հերոսներ, որոնք խօսքից գործի անցնել գիտէին։ Իսկ ես։ Բնաւորութիւնս շատ լաւ ճանաչում էի։ Թէև գործի ասպարէզ չէի դուրս եկել, թէև իրականութեան մասին շատ աղօտ գաղափար ունէի, բայց և այնպէս գիտէի, որ այդ իրականութեան մէջ, դժուարութիւնների առաջ շատ անգամ պէտք է ձեռքերս ծալած, գլխիկոր կանգնէի և քարացած ապշութեամբ դիտէի երևոյթները։

Եւ ես փաստեր ունէի ձեռքիս՝ ապագաս գուշակելու համար։ Կարդալով իմ մօտիկ ընկերի և բարեկամուհուս նամակները՝ սըրտումս սառսուռ և սոսկում էի զգում։ Ի՞նչպէս։ Այդքան խիզախութիւն, այդքան համարձակ և յանդուգն քայլեր։ Այդ մարդիկ քարէ սիրտ ունէին, թ՞նչ է։ Եւ իմ աչքում, պարտքի գիտակցութեան այդ երկու հերոսները, աներևակայելի կամքի տէր, գերբնական արարածներ էին թւում։ Փոքր մարդկանց աչքում ամենաչնչին խոշորութիւնները չափի չեն ենթարկւում, նրանք շատ մեծ են թւում, գերազանցօրէն խոշոր։

Շատ լաւ յիշում եմ գիւղատնտես ընկերիս։ Նրա հետ վարած դպրոցական տարիները երբէք չեմ մոռանալու։ Մի բարձրահասակ, թխահեր և գլխապինդ երիտասարդ էր։ Քայլուածքը՝ հաստատուն, շարժումները՝ վճռական, ձայնը՝ հրամայող և ոգևորիչ։ Միշտ նրա դէմքին կարելի էր տեսնել մի թախծոտ ժպիտ։ Լայն փռուած ճակատ ունէր, որ վերին կողմից խուճուճ մազերով էր շրջապատուած։ Գանգուրները կիսով չափ ծածկում էին նրա սակաւ կնճիռները, որ մշտապէս գտնւում էին ճակատին։ Հարթ, հաւասար, սրտաբաց և ընկերական բնաւորութիւն ունէր, բայց ընդհանրապէս լռակեաց էր, մանաւանդ խնջոյքների ժամանակ. չէր սիրում շատ խօսել, խոյս էր տալիս ճառախօսութիւնից։ Ուսանողական խրախճանքներում «սեղանի կառավարիչը» ոյժով էր նրան խօսեցնում։ Վերջապէս երկար թախանձանքներից յետոյ վեր էր կենում, խրոխտ ձայնով միայն մի քանի խօսք ասում ու նստում։ «Տղայք, պատրաստուենք գիւղի համար։ Գնանք գիւղ։ Այնտեղ են գտնւում գործն ու երգը»։ Եւ ուրիշ ոչինչ։ Դպրոցական դասընթացքը վերջացնելուց յետոյ՝ նա հաւատարիմ իւր դաւանած սկզբունքներին, գնաց գիւղատնտեսական դասեր լսելու և մի քանի տարուց յետոյ վերադառնալով հայրենիք՝ գործունէութիւն սկսեց։ Հայրենի քաղաքի մօտակայ գիւղերից մէկում կապալով վերցրեց մի կալուածք։ Մի քանի տարի կալուածատիրոջ հետ ընկերովի մշակեց կալուածքը և յետոյ մի փոքր գումար ձեռք բերելով, մի ագարակ գնեց։ Սեփական, ուրոյն գործի կպաւ այնտեղ։

Այս բոլորը գիտէի։ Բայց գիւղական այդ փոքրիկ գործունէութիւնը ինձ այնքան խայթոց չէր պատճառում։ Իմ կաշուից մօտիկ գործերով աւելի շատ էի հետաքրքրւում։ Հոգսերիս ու վշտերիս միակ առարկան աւելի իմ բարեկամուհու հետ ունեցած հաշիւն էր։

Լուսիկն ինձ մի առեղծուած էր թւում։ Չէի կարողանում նրան հասկանալ։ Մերթ իմ աչքում նա հանդիսանում էր իբրև մի վեհ, գերազանց, անմատչելի էակ։ Մերթ իբրև մի կարճ-խելք,

անհեռատես ու մարդ ճանաչելու հոտառութիւնից զուրկ մէկը։ Հոգուս խորքում ծիծաղում էի այդ աղջկայ վրայ՝ ճիշտ այն ժամանակ, երբ նրա յանդուգն քայլը սքանչանք էր պատճառում ինձ։ Իմ հոգեկան կազմը հակասութիւնների մի ժխոր էր ներկայացնում։ Չէի կարողանում իմ համակրանքները և հակակրանքները հետևողաբար արտայայտել։ Այսօր մէկն ինձ համար աստուած է, միւս օրը՝ դև։ Այսօր կ'պաշտեմ երեկուայ անարգածիս։ Հէնց այդ պատճառով՝ չէի կարողանում կարծիքներս այդ աղջկայ մասին շտկել, մի յայտարարի բերել։ Շատ էի ցանկանում մի կարծիքի լինել, բայց չէի կարողանում, դա իմ ոյժերից վեր էր։

«Ընդունում եմ,— ասում էի ես,—որ այդ աղջիկը մի զարմանալի և մեր ճահճացած իրականութեան մէջ անպատճառ աչքի ընկնող մի էակ է։ Տոկուն և կամքի տէր։ Անվեհեր հոգով և անսայթաք հետևողական։ Նիւթապէս անապահով և մենակ՝ նա չ'վախեց մարտ հրատարակել իւր բռնակալ խնամակալի դէմ և յաղթանակը տարաւ։ Նա այժմ ապրում է ինքնագլուխ, անկախ և հարկադրանքներից ազատ։ Բայց...»։

Այդ «բայց»-ը ինձ շատ էր տանջում։ Ես զարհուրում էի իմ մտորումներից։ Ինձ համար շատ ծանր էր այն գիտակցութիւնը, որ սիրուել եմ անգիտակցօրէն։ Ես այն կարծիքի էի, որ այդ աղջիկը, եթէ ինձ լաւ ճանաչէր՝ չէր կամենայ վրաս թքել անգամ։

«Բայց,—շարունակեցի մենախօսութիւնս,— ինչով բացատրել այն ծանրակշիռ հանգամանքը։ Ի՞նչպէս կարողացաւ այդ աղջիկը ինձպէս մի դատարկ անձի սիրել։ Ես ինչո՞վ աչքի ընկայ։ Իմ անբարոյական հոգին, իմ կեղտոտ ներքին աշխարհը Լուսիկը չուզի՞ց արդեօք թափանցել, թէ՞ չ'կարողացաւ ինձ ճանաչել, և խաբուեց։ Այո՛, ես խաբեցի նրան։ Ես վարժ եմ խաբելու մէջ։ Իմ ստոր հոգին այդ արատի էութիւնը շատ լաւ է հասկացել և կարողանում է առիթը ներկայացած ժամանակ ապահովապէս գործադրել։ Ես, ճահճի մէջ ընկած զեռունս, խաբեցի մի անմեղ, մաքուր, անարատ աղջկայ՝ նրա առջև ինձ ուրիշ դիմակի տակ ներկայացնելով։ Բայց...»։

Այդ «բայցը» միշտ ինձ խեղդում էր և ես չէի կարողանում հաշտուել եմ բանականութեան, կշռադատութեան ցուցմունքներիս և վճիռներիս հետ։

«Բայց,—շարունակում էի,—ես կասկածում եմ։ Նրա բնաւորութեան, նրա հոգու, սրտի էութիւնը մի անհասկանալի առեղծուած է թւում ինձ։ Եթէ Լուսիկը իսկապէս հոգով ինձանից անհամեմատ բարձր մի անձն է, եթէ նա իրօք ինձ հետ մի աստիճանի վրայ չի կարող կանգնել և իւր վեհութեան, վսեմութեան

բարձրերից միայն արհամարհանքի և ատելութեան հայեացքներ կարող է վրաս նետել և գարշել ինձանից,—հապա ի՞նչպէս եղաւ, որ ես, ճճիս, կարողացայ նրա ուշքը գրաւել և նրա բերանից կորզել՝ «սիրում եմ» բառերը։ Մի՞թէ նրա բարձր, գերազանց և վեհ հոգին կարողացաւ հաշտուել իմ ներքին դատարկութեան, անբովանդակութեան հետ։ Նա ինձ առանց ճանաչելու, անգիտակ իմ հոգեբանութեան և անծանօթ իմ կեանքի էութեան՝ թոցրել է պատահաբար այդ խօսքերը իւր բերանից։ Իսկ եթէ Լուսիկը իրապէս ինձ ճանաչել է, գիտէ իմ հոգին և ծանօթ է իմ զօնժուանական արկածներին, հապա ի՞նչպէս համակրեց ինձ։ «Նմանը նմանին է սիրում», ինձ սարսափեցնում են այս կասկածները։ Գուցէ՞ նա ինձ նման մէկն է։ Ես նրան լաւ չեմ ճանաչում և երբէք չեմ էլ կամեցել նրա հոգին թափանցել, որովհետև ես նրան երբէք չեմ սիրել. սիրելու համար ապիկար եմ, անկարող։

Պէտք է նկատեմ, որ ես բաւական ուշադրութիւն էի դարձնում իմ հոգեկան և բարոյական այլ և այլ յատկութիւններիս վրայ և աշխատում էի նրանց պատճառներն ու շարժառիթները գտնել։ Վեր լուծում էի սեփական հոգուս իւրաքանչիւր յոյզը, շարժումները և ուզում էի պարզել իմ ողորմելի հոգեկան վիճակի հիմնական դրդիչները։ Այդպիսի վերլուծումների ժամանակ իմ բընաւորութեան վերաբերմամբ մի նոր յայտնագործութիւն էի արել։ Այդ այն է, որ ես համոզուել էի իմ սիրելու անընդունակութեան մէջ։ Դրանից առաջ գտել էի, որ իմ բնաւորութիւնը գոլ ջրի է նման, ոչ կարող է այրել, ոչ էլ սառցնել։ Աւելի առաջ յայտնագործել էի, որ ես համոզումներ չունիմ և եթէ ունիմ էլ, նրանք հաստատ և կայուն չեն և միշտ վաճառւում են դէպքը ներկայացած ժամանակ, ենթարկուելով ամենատեսակ ստորացուցիչ և անպատուաբեր ազդեցութիւնների։ Ամենանոր գիւտս առաջ բերելու համար՝ ես քրքրել էի իմ ամբողջ հոգու պատմութիւնը սկսած այն օրից, երբ ինքզինքս ճանաչել սկսեցի, և այնտեղ չէի գտել սիրոյ նման մի բան։ Խորունկ, հոգեպէս զգալ և պայծառ մտածել սիրոյ մասին՝ չ՛գիտէի։ Ես գրեթէ միշտ կապուելով մէկի հետ և յագուրդ ստանալով նրանից՝ խորտակում, փշրում էի այն տաճարը, որ կառուցանում էի սիրոյ անունով։ Շատ կանանց եմ պատահել։ Կարող եմ թուել մի շարք էակներ, որոնք իմ ցանցի մէջ էին ընկել։ Դրանցից և ոչ մէկն ինձ առանձնապէս չէր հետաքրքրել։ Կրքերիս յագուրդ տալուց յետոյ մոռացել եմ նրանց, այլևս միւս անգամ չ՛յիշելու համար։ Լինում էին բոպէներ՝ ուզում էի ինձ տրամադրել, որ սիրոյ մէջ հոգեկան տարբ որոնեմ, չէի կարողանում. իմ ապականուած հոգիս սիրոյ մէջ տեսնում էր միայն

զուտ ֆիզիոլոգիական զգացմունք։ Բայց թէ տեսնէիք ինձ ընկերական շրջաններում կամ կանանց հետ խօսելիս սիրոյ մասին, որքան վսեմ, որքան բանաստեղծական և բարձր էի ներկայացնում այդ աստուածային կայծը, ասածներս համեմելով սէրերգակ բանաստեղծների տողիկներով։ Միայն մութ ու աղօտ կերպով, իմ յիշողութեան մէջ մնացել է մի փոքրիկ թրքուհու պատկեր, որին մանուկ օրերում տեսել էի, մաքուր զգացումներ էի տածել դէպի նա։ Դա դեռ այն ժամանակ էր, երբ նոր էի թոթովում, երբ դեռ աչքերս չէի բացել, երբ գիտակցութիւնս տակաւին անմեղութեան մէջ էր գտնւում։ Մանկութեան օրերս երազի պէս անցան թողնելով սրտիս մէջ հազիւ նկատելի այդ պայծառ յիշատակը։ Մի բան միայն լաւապէս յիշում եմ. դա իմ կրքի պատմութեան տխուր սկզբնաւորութիւնն է։ Ես շատ լաւ գիտեմ, թէ կիրքս ինչպիսի շրջաններով է անցել, ինչպէս է զարգացել, և տիրել ամբողջ մարմնիս և հոգուս։ Ես միայն և եթ կիրք եմ ունեցել և վերջինս յագուրդ տալու պահանջ։ Այդ սոսկալի, անազորոյն կրքի էութիւնը հասկանալուց յետոյ՝ ինձ զգացել եմ նրա հուժկու ազդեցութեան տակ և միշտ գնացել եմ այն հոսանքով, որ քշել է ինձ ամենազօր կիրքս։ Սատկած ձուկ եմ եղել ես։ Մի ձուկ, որ լողում է հոսանքի հետ։ Կամազուրկ մարդիկ սատկած ձկներ են։ Կեանքի հոսանքը նրանց այնպէս է մղում, ինչպէս գետի հոսանքը սատկած ձկներին։ Տարբերութիւնը շատ չնչին է։

Իրողութիւն էր—սիրել չ՛գիտէի։

Նոր ծանօթութիւնս օր. Լուսիկի հետ ինձ համար փրկութեան նոր դուռ բացեց։ Ակսեցի կիրքս սանձելու ետևից ընկնել։ Զսպում էի ինձ։ Ժուժկալութեան վրայ հոգ տանելու մասին մտածելը պահանջ դարձրի։ Սակայն այն սոսկալի իրողութիւնը մնաց իրողութիւն։ Սիրային բացատրութեան ժամին իմ շրթունքները էին խօսում և ոչ սիրտս։ Ես «սիրում եմ ձեզ, օրիորդ» բառերը կրկնեցի մի այնպիսի ձևով, ինչպէս որ մաթեմատիքական սերտած ֆորմուլը կրկնում է աշակերտը անգիտակցաբար, առանց հասկանալու։ Սիրտս արձագանք չէր տալիս իմ արտասանած սիրային սերտած խօսքերին, երդումին, ուխտին և խոստումին։ Ես արդէն քամել ու վայելել էի կեանքի ցանկալի նեկտարը, կոտրել էի սրտիս երիտասարդական ծարաւը, որ միշտ ծառայում էր իբրև մի դրդիչ դէպի վիր ձգտելու։ Վերը, իդէալի բարձունքներում այլևս չէի տեսնում վայելչութիւն և բերկրանք, ասես թէ անժամանակ յագեցրել էի բոլոր բաղձանքներս, սիրային որոնումներս։

Հայրենի քաղաքից հեռանալուց յետոյ՝ յիշուած խնդիրը լուրջ մտախոհութեան նիւթ դարձրի։ Արդեօք ընդունակ եմ սիրելու

թէ ոչ։ Իմ հոգեբանական դիտողութիւնները բացասական պատասխան տուեցին։ Ես եկայ այն ողբերգական հետևութեան, որ ոչ միայն սիրելու ընդունակ չեմ, այլ և սէր ասուած հասկացողութիւնը մի անմատչելի գաղափար է ինձ համար։ Մթթէ իմ կիրքս սէր է։ Սէրը սէր չի լինիլ երբէք, եթէ չարտայայտուի, եթէ չարտափայլի, նա պէտք է մարդու ամբողջ հոգին վառէ, կրակէ։ Անդործադրուող, անպէտք ու մեռած տարր չ'պիտի լինի, այլ գործող և կենդանի զգացմունք։ Այն-ինչ ես հոգեկան ոյժերս վաղաժամ փչացրել էի, սրտիս մէջ մաքուր, սուրբ տեղ քիչ էր մնացել, սրբազան սէրը չէր կարող այլևս այնտեղ կայան գտնել։ Սիրած մի անգամ միայն ճշմարիտ կերպով կարողացել է սիրել անմեղութեան, անգիտութեան օրերում։ Թրքուհու պայծառ յիշատակն էր հոգուս պատմութեան մէջ անաղարտ մնացել։ Այնուհետև ես ոչ մի կնոջ երեսի չեմ նայել մաքուր հայեացքով։

Չէի սիրել և օր. Լուսիկին։ Վերջապէս համոզուեցի, որ գրաւուել էի նրանով, յարգում էի նրա կամքի ոյժը, որից ինքս զուրկ էի, և հետևողականութիւնը. բայց նրան չէի սիրում, չէի սիրում այնպէս, ինչպէս առհասարակ սիրում են ճշմարիտ սիրողները։ Հայրենիքից հեռանալով հաստատուեցի նոր քաղաքում, նոր միջավայրում։ Մէկ ամիս շարունակ յիշողութեանս մէջ չ'վերակենդանացաւ օրիորդի պատկերը։ Երբ նրանից նամակ ստացայ՝ նոր միայն ուշքի եկայ։ Իմ սրտում մի նոր տանջող հարց առաջ եկաւ։ Արդեօք նրան սիրում եմ։ Եւ եթէ այո սիրում եմ, հապա ինչպէս եղաւ, որ նրան այդպէս շուտով մոռացայ։ Աղջկայ նամակը ստացայ։ Ի՞նչ յուզումներ առաջացրեց այդ նամակը։ Գրեթէ ոչինչ։ Կարգացի անտարբերութեամբ։ Մի քանի տողեր ժպիտ յարուցին, այդպէս քմծիծաղ է երևում պապի խորշոմած դէմքին՝ թոռնիկի չարաճճիութիւնը դիտելիս։

Բայց մթթէ սիրողները ճիշտ այդ կերպ անտարբերութեամբ են զինուած լինում դէպի այն ամենը, ինչ որ սիրային է։ Մի քանի «յիշատակներ» ունէի ինձ մօտ օրիորդից։ Շատ անգամ առիթ էի ունենում նրանց տեսնելու, բայց ամեն անգամ անտարբերութիւնը յաղթանակում էր։ Ասում են, սիրող մարդիկ իրանց սիրոյ առարկայի անունն անգամ լսելիս յոյզերով լցւում են։ Ասում են նրանք ամեն անգամ ակնածութեամբ և սրբութեամբ են արտասանում սիրուհու անունը։ Շփոթւում են, շիկնում են այդ մասին որևէ ակնարկ անողի առաջ։ Այդ յատկութիւններից և ոչ մէկը իմ մէջ չկայ։

Այսպիսով մի խայտառակ, ողորմելի վիճակ էր ստեղծուել ինձ համար։ Խօսք էի տուել, երդուել էի սիրոյ անունով։ Սիրա-

յին նամակագրութիւնս շարունակում էի, թէև իմ գիտակցութեան մէջ մեխուած էր այն համոզմունքը, թէ ես սիրել չեմ կարող երբէք։ Խաբում էի, կեղծում էի։

Սիրոյ անընդունակութեանս գիտակցութիւնը ծնեց իմ գանգում մի նոր միտք, մի նոր համոզմունք։ Ես գիտակցել սկսեցի, որ իրաւունք չունիմ ամուսնանալու. որքան էլ ցանկանայի երջանկութեան հասնել, ուրախ ու զուարթ ապրել, այնուամենայնիւ ամուսնական առագաստը իմ դիմաց պէտք է մի անգամ ընդմիշտ փակ մնայ։ Ամուսնանալ — ինչո՞ւ և ի՞նչ իրաւունքով։ Ի՞նչ պէտք է տամ իմ ապագայ ամուսնուն։ Ուրախութիւն, բա՞խտ, թէ՞ բերկրանք։ Բնաւ և երբէք։ Ես ամբողջովին նեխման եմ դատապարտուած ֆիզիքապէս և հոգեպէս։ Զեն մնացել իմ մէջ կենսունակութեան, երիտասարդական աշխուժութեան և թարմութեան հետքեր։ Ուրեմն ամուսնութիւնը պէտք է թշուառութիւն և դժբախտութիւն բերէր, թէ իմ գլխին և թէ այն խեղճի գլխին, որ անգիտակցաբար իւր բախտը փտութեան պէտք է դատապարտէր. անբարոյականութիւն կ'լինի իմ կողմից, ամբողջ կեանքումս անբարոյական եղայ, գոնէ միանգամ, մի հատիկ անգամ բարոյական լինիմ։ Եւ ահա այս ժամին դրականօրէն խոստանում եմ չամուսնանալ։ Բայց ո՞յժ կունենամ խոստումս կատարելու, թէ չէ,— ահա հարցը։

Հոգիս ամեն օր այսպիսի մտորումներից աղատուել չէր կարողանում։ Սակայն այս բոլորը մնում էր իմ ներքին աշխարհի սեփականութիւն և ես կամքի ոյժ չունէի սիրոյ մէջ իմ անընդունակութիւնը բացարձակապէս խոստովանելու, հոգեկան աշխարհս քօղազուրկ անելու օրիորդի առջև։

Շարունակում էի ապրել կեղծիքի մէջ։ Թէ ի՞նչ պէտք է լինէր այս կեղծիքի հետևանքը՝ ես շատ լաւ նախատեսում էի։ Գիտէի, որ օրիորդ Լուսիկը բնաւորութեամբ Աշոտ չէր և չէր էլ կարող լինել։ Եւ բնականաբար չէր էլ կարող տանել այդպիսի մի հարուած։ Պատրիկեանի ամբողջ ապագան պիտի փչանար, երբ նա հաստատուէր այն համոզմունքի մէջ, թէ ինքը սիրել է իւր աչերին և յարգանքին անարժան մի փալասի, որի անմաքրութիւնը չարժէ անգամ ուշադրութեան առնել։ Ինձ երևակայում էի օրիորդի արդար զայրոյթով լցուած հայեացքի դիմաց կանգնած՝ և սոսկում էի։ Քանի՞ քանի՞ անգամ նամակներ գրեցի և պատառոտեցի։ Քանի՞ քանի՞ անգամ փոստատուն վազող ծառային յետ կանչեցի և ձեռքից առայ օրիորդի հասցէով գնացող գրութիւնները։

Ի՞նչ էին ասում այդ գրութիւնները։

Այդտեղ հոգիս մարմնիս էի հագցնում, ներքինս շինում էի արտաքին։ Խոստովանում էի օրիորդին իմ անցեալը։ Ցույց էի տալիս, որ ես ամենևին մեղաւոր չեմ։ Ծնուել եմ մի այնպիսի միջավայրում, որ ինձ հոգեպէս մանկուց ապականել է։ Սովորեցրել է կեղծել, անբարոյ կեանքի և անազնուութեան ընտելացրել։ Պարզապէս շեշտում էի, որ ստել եմ և միշտ էլ ստում եմ ապագայ գործունէութեան մեծամեծ խոստումներ անելով թէ իրան և թէ գիւղատնտեսին։ Ասում էի, որ այժմ շատ լաւ հասկացել եմ և համոզուել եմ, որ չունիմ այն բարոյական ոյժը, հոգեկան զօրութիւնը, որ ընդունակ լինէի համակրելի ընկերի, կեանքի սիրելի ուղեկցուհու հետ ընթանալ գաղափարական ճանապարհով, որովհետև թոյլ եմ, փոքրոգի և խեղճ։ Ես ցանկանում եմ անձնազոհ հերոս լինել, ճշմարտութեան պաշտպան կանգնել և կեանքս նուիրել սրբազան գործի, բայց տարաբախտաբար չեմ կարողանում։ Այո ցանկութիւն կայ, բայց կարողութիւն՝ ոչ։ Կրկին և կրկին արդարանում էի՝ բոլոր մեղքը միջավայրիս և շրջապատողներիս շլնքին փաթաթելով և անկեղծօրէն խոստովանում էի, որ վերջիններս են մեղաւոր, որ ես մի բան չ'դարձայ։ Ցայտնում էի, որ անկարող եմ սիրել, դրա համար ինձ պակասում է յայտնի ընդունակութիւն և կենսական ոյժեր. իմ հոգին միայն կիրք է ճանաչում, իսկ հոգեկան, իդէալական սէր տածելու համար ապիկար եմ, հնարաւորութիւնից զուրկ։ Խնդրում էի օրիորդին մոռանալ փոքրիկ անցեալը և երբէք չ'յիշել ինձ, նրան, որ իւր անզգամ պատկերով Լուսիկի պէս մի աղջկայ հոգու կուսական ներդաշնակութիւնը խանգարել է։ Իմ զարմանքն էի յայտնում օրիորդին այն մասին, որ նա կարողացել է ինձպէս մի բարոյապէս անդամալոյծի սիրել, մի անարժան մարդու, որ հէնց սկզբի քայլերից ճանապարհից մոլորուել է և ամեն մի քայլ դնելով զգում է իւր մոլորութեան սաստկացումը։ Խոստովանում էի, որ այն մարդկանցից մէկն եմ, որոնք ըստ երևոյթին ամենահանգիստ, անխռովարար և անվնաս են, բայց խորը քննելով դրանց կեանքի հանգամանքները, կարելի է համոզուել, որ շատ քիչ այդպիսի յանցաւոր և ոճրագործ մարդ կ'գտնուի կրթուածների մէջ։

Այս նամակներից և ոչ մէկը տեղ չ'հասաւ։

Արսէն

(Կը շարունակուի)

ՇՕՊԷՆ ԵՒ ՊՕ

Համաշխարհային քաղաքակրթ. պատմութեան մէջ պատահում են դէմքեր, որոնք լուսատու աստղերի պէս անցնում են իրենց ժամանակակիցների վրայով, որոնց անուան հետ դարեշրջաններ են ստեղծուում, որոնք իրենց կարող ուղեղներում կրելով ժամանակիցների իդէալները, իրենց բազմաբովանդակ ու համապարփակ հոգով արտայայտել են այն զգացումային ոյժերը, որ որոճում ու նախազգում է հանճարին շրջապատող և նրան սնող ամբոխը. հանճարը նոյն իսկ երբեմն իր մէջ ամփոփելով և ժամանակը համապարփակող ոյժը, հանդիսանում է ամենագէտ արարած, որը արտայայտելով ժամանակակիցների ձգտումները, միաժամանակ մարգարէանում է և ապագայ սերունդների ձգտումները և ըղձերը. ահա թէ ինչու երբեմն դարեր յետոյ են գնահատուում այդպիսի դէմքերը, կամ իր ժամանակին գնահատողները անմոռաց են մնում և ապագայ սերունդների սրտում. Սոկրատ, Դանտէ, Շէքսպիր, Ռաֆայէլ չեն մոռացուելու երբէք—թէկուզ տասնեակ դարեր անցնեն—չեն մոռացուիլ, որովհետև նրանց ամենակարող խօսքը կամ վրձինը յաւերժացրել է մարդու մէջ Աստուածայինը և տուել է մարդու միջի էականը, յաւիտենականը, անփոխելին։ Մենք ինչքան էլ որ ուզենք, չենք կարող անջատել մեզ մեր այդ փառաշանթ նախորդներից, ճիշտ այնպէս, ինչպէս որ անզօր ենք բռնարգել դէպի մեր ժառանգներն անցնող մեր հոգեկան յատկութիւնները. և ահա կարծես մենք առիթներ ենք փնտռում վերականգնելու մեր այդ օրգանական կապը նախորդների հետ. այդպիսի առիթներ հանդիսանում են յոբելեանները։

—

Եւ այդ յոբելեանների շարքում, 1909 թ. աչքի ընկնող տեղ է գրաւելու։ Համարեա բոլոր քաղաք. երկիրները այդ տարին առիթ ունեցան իրենց որդիներին յիշելու՝ Ամերիկան իր Պօլն, Անգլիան՝ Դարուինին, Գերմանիան՝ Հեկկելին, Շիլլերին, Լեհաստանը՝ Շոպէնին, Ռուսաստ. Գոգոլին։ Շատ էին և երկրորդական գործիչները, որոնց յոբելեանը այսպէս թէ այնպէս կատարուեց, օրինակ՝ Լինկօլն, Շպիլհագէն, Կոլցով, Գրիբոյեդով, Մենդելսոն (երաժիշտ) և այլն. իրօք սխալ չի լինիլ անցեալ 1909 թ. անուանել

յօբիլեանների տարի։ Մենք որ բախտ չունենք պարծանքով տօնել սեփական համաշխարհային հանճարները, չենք էլ շտապում մեր յարգանքը ցոյց տալ մարդկութեան այդ լուսասփիւռ ջահերին, որոնցով պարծենալու է իւրաքանչիւր և՛ հոգեկան կեանքով ապրող անհատ։—Նոյն իսկ կոպէկանոց բրոշիւրներ չենք կարողանում տպել և ցրուել մեր հասարակութեան մէջ՝ հասկացնելու նրան թէ ինչի ենք սակաւանդամ խմբակներս հրճւում օրինակ Պօի կամ Գոգոլի յիշատակով։ Պատահական դիտողութիւններ են միայն լոյս տեսնում մեր թերթերում դրանց մասին. դիտողութիւններ, որոնք լուրջ մշակուած չեն կամ հոգատար աշխատանքի արդիւնք, այլ հապճեպ կերպով կազմուած մի բան։ Խօսք չը կայ սակայն, որ հենց այդ մի գրաւական է մեր մտաւոր կեանքի ձգտմանը. աւելի լաւ կը լինի համեստութեամբ յարգել, քան դատապարտելի լռութեան մատնել այդ խոշոր երևոյթները, ահա այդ տեսակէտը ընդունելով մենք՝ թէպէտ և ուշ, ընթերցողներին կը տանք դիտողութիւններ այդ դէմքերից առ այժմ երկուսի մասին։

Երկուսն էլ ծնուել են քաղաքակիրթ երկրներում, 1809 թ. և երկուսն էլ ապրելով միայն 40 տարի մեռել են 1849 թ. սակայն այս երկու հիւանդագին հանճարները ոչ թէ ապրած տարիների թուով, այլ շատ կողմերով հոգեկան երկուորեակներ են հանդիսանում միմեանց։ Հէյնէն ասում է, որ Շոպէնը իր մէջ միացնում էր ասպետական ոգին, ֆրանսիակ. գրացիայի և գերմանական խորամտութեան հետ, Պօի հոգեկան կոմպոզիցիան իր մէջ պարունակելով այդ բոլոր կողմերը իր բազմակողմանիութեամբ սակայն ընդգրկում էր Շոպէնին։ Պօն և Շոպէնը ծնունդ են 19-րդ և մասամբ 18-րդ դարերի այն հոգեկան զօրեղ ցնցումների, որից յետոյ թուլացած նեարդերի հիպերիստեզիան կարող էր այդքան զգայուն, այդքան տպաւորուող արարածներ տալ։ Նայեցէք այս երկուսի էլ եղերգական, թախծոտ շեշտերին, որոնք երբեմն տրագիքական պաֆոսի են հասնում, թափանցեցէք այդ կորովի թախծի, այդ թունալի-մաղձոտ բողքների մէջ և կը համոզուէք, ինչպիսի համանմանութիւն կայ այս երկուսի մէջ։ Շոպէնը յայտնի տաղանդ էր. ահա ինչ է ասում ժամանակակից Լիստը. «Մեծ արտիստը իր կախարդիչ խաղով հաղորդում էր մի սրտատրոփ գրգիռ, մի գաղտուկ, շնչասպառ թնդիւն. որպիսին զգում է սիրտը, երբ երևակայում է գերբնական արարածների գոյութիւնը, այնպիսի արարածների, որոնց ըմբռնելը անկարելի է»։ Նոյն սրտատրոփ գրգիռը տիրում է ընթերցողի սրտին, երբ կարդում է Պօի քերթուածները և համոզում

է, որ Պօն պակաս տաղանդ չէ, որ կարողանում է խաղալ ընթերցողի նեարդերի հետ և ծնեցնել նրա մէջ թախիծ, սարսափ, յուսահատութիւն և բողոք։ Նրանք երկուսն էլ վաղ ասպարէզ իջան. Պօն 18 տարեկան «Al Aaraaf» և «Tamerlan» ժողովածուներով և Շոպէնը 22 տարեկան իր կոնցերտով (Պարիզում). բայց ո՞վ էր կարծում, որ այս անյայտ փորձերի հեղինակները ապագայում լինելու են աշխարհահռչակ «B-Moll» սոնատի կամ «Ադաա» պօէմի ստեղծագործողները։ Պօի և Շոպէնի այդ գլուխգործոցները միայնակութեան ու անփարատ թախծի ու վշտի ծնունդներ են։ Եւ չնայած որ երկուսն էլ դրանցով ողբում են իրենց սիրելիներին, մէկը Լենօրային, միւսը Ժ. Զ.-ին, այնուամենայնիւ այնպիսի զօրեղ թափով են շնչում նրանք, այնքան զգացմունք ու անկեղծութիւն կայ դրանց մէջ, որ ներկայումս համաշխարհային սեփականութիւն են դարձել դրանք և երկուսի էլ գլուխ գործոցներն են համարւում։ Եթէ յիշենք և այն, որ երկուսն էլ կենդանութեան ժամանակ գործել են նեղ շրջանում, որ նրանք ժամանակակից լայն մասսայի վրայ չեն ներգործել, համանմանութիւնները վերջացրած կը լինենք։

Ֆրիդրիխ Շոպէնը Պարիզ եկաւ 20 տարեկան հասակում, արդէն բոլորովին որոշ և կազմակերպուած բնաւորութեամբ. այնուամենայնիւ Պարիզի կեանքը շատ բարերար ազդեցութիւններ թողեց պատանի Շոպէնի վրայ. ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ այդ զգայուն պատանին շրջապատուած էր այն ժամանակի գրական, գիտական, երաժշտական հանճարեղ ներկայացուցիչներով. Լիստ, Մեյերբէր, Բալզակ, Հայնէ-ահա ինչ շրջանում էր ընդունուել Ֆրեդերիկը։ Ունայելով Պարիզի հասարակական շրջանների հետ ունեցած յարաբերութեան, Շոպէնը մինչև վերջն էլ իր ձգտումներով աւելի հակուած էր ոչ թէ Ֆրանսիային (հայրը Ֆրանսիացի էր), այլ Լեհաստանին և լեհերին (մայրը լեհ էր)։ Գուցէ այդ բանում վճռական դեր էր խաղում այն հանգամանքը, որ Ֆրիդրիխը ծնուելով Վարշաւում, իր մանկութեան և մասամբ պատանեկութեան տարիները լեհ ժողովրդի մէջ էր անցկացրել. սրանով մասամբ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ հակառակ ընդհանուր երևոյթի—երաժշտագէտների կոսմոպոլիտիզմի—Շոպէնը ներկայացնում է մի փայլուն ինքնաբուղխ ազգայնականութիւն. նրա մէջ երբէք չը թուլացաւ դէպի Լեհաստանը տածած սէրը, լեհական ուժեղ նոտան չը հանգաւ երբէք։ Յայտնի «յուղարկաւորդը» մեր երևակայութեան մէջ պատկերացնում է մի ամբողջ նահատակ ազգի թաղումը, որ կատարւում է զանգերի մահաշունչ զողանջիւնի ներքոյ։ Թաղ-

ւում էր լեհ ժողովուրդը, որի հերոսական ջանքերը քանիցս անյաջող վախճան ունեցան։ Այդ ապարդիւն փորձերից ընկճուած և բազմաթիւ զոհեր տուած լեհ ժողովրդի մռայլ տրամադրութիւնն էր, որ արտայայտւում էր վայրագին, հիւանդոտ հառաչներով։

Սակայն ինչքան էլ Շոպէնին օբիկտիւ ստեղծագործող համարենք, այնուամենայնիւ նա գլխաւորապէս ինդիվիդուալիստ է, քնարերգու է։ Նրա փոքրիկ արտադրութիւնները ներկայացնում են հիասքանչ բանաստեղծութեամբ լի գեղեցկութիւններ և ունին խոր, վսեմ բովանդակութիւն։

Ինչքան էլ սեղմենք Շոպէնի ստեղծագործութեան սահմանները, կոմպոզիտորների շարքում նա, այնուամենայնիւ մի աչքի ընկնող երևոյթ է. ամենից հետաքրքիրը Շոպէնի մէջ՝ այդ նրա մուզիկայի առանձնայատկութիւնն է. քնքշութիւն, ըղձալի-երազանքներ, գերագոյն նրբութիւն լի պատանեկական աւիւնով.— իզուր չեն Շոպէնին երաժշտութեան Հայնէ անուանում։ Գլխաւորը այն է, որ Շոպէնի ստեղծագործութիւններում արտայայտւում է նրա ամբողջ ներքին աշխարհը, այն զգայմունքները և խոհերը, որոնք անմատչելի են կողմնակի մարդկանց համար։ Այդ ներքին աշխարհը արտայայտել այնպիսի ձևերով, արտայայտել սեպհական անձին վերաբերեալ մտքերը, թախիծը ստրկացաւ հայրենիքի վերաբերմամբ, արտայայտել իր ըղձերն ու հրճուանքը, բաղդաւորութեան վայրկեանները և անյոյս վշտերի պոռթկումը,—արտայայտել այդ բոլորը և այդ բոլորի համար գտնել յարմար՝ այն էր գերող—հրապուրող՝ ձայներ ու ձևեր,—սա արդէն այնպիսի հարուստ ու խոր հոգի է ցոյց տալիս, այնպիսի եռուն կեանքի ապացոյցներ են, որոնք ջախջախում են ակադեմիկոսների՝ Շոպէնի «ծրագրային մուզիկային» վերաբերեալ յարձակումներն և խզբըզանքները։

Թող «ծրագրային» անուանուին այն բազմակողմանի պիեսները, որոնք զանազան անուններով արտայայտում են պատերազմի սարսափները, ձիերի դոփիւնը և զէնքերի շաչիւնը, կամ իսպանական վանական թափորը, կամ լեհական ռամիկ ժողովրդի կեանքի տեսարանները. չէ որ Լիստի, Շումանի պէս հեղինակաւոր անձնաւորութիւններն են Շոպէնի երկրպագուները. թէպէտ Շոպէնին հռչակող Շումանը մինչև վերջն էլ չըմբռնեց B-moll սօնատը և մինչև վերջն էլ խելագարի զառանցանքներ էր համարում այդ, սակայն դա կարելի է համարել մեծ մարդկանց յատուկ տարօրինակութիւններից մէկը։ Այդպիսի տարօրինակութիւն էր հէնց Շոպէնի տենչը մասնաւոր դասերի վերաբերմամբ. ամբողջ կեանքում նա արիստոկրատ կանանց էր սովորեցնում։ Լիստը են-

թադրում է, որ այդպիսով նա կամենում էր կիրառութեան մէջ մտցնել իրեն առանձնայատուկ երաժշտ. մանները, որը ինքը Շոպէնը անուանում էր tempo rubato—մի քնքոյշ, խորհրդաւոր, ընդհատ երերում, որ նման էր ծառերի նուրբ տատանման թեթև զեփիւռից։

Շոպէնը յայտնի տաղանդ էր *) ֆորտեպիանոյի համար և գրում էր համարեա միմիայն ֆորտեպիանոյի համար, օրինակ 3 սոնատները, 4 բալլադները, 4 ֆանտազիաները, 12 պոլոնէզները, 52 մազուրկաները, 95 պրելիւդիաները, 12 նոկտիւրնները, 13 վալսերը, 25 էտիւդները և այլն։ Նրա այս բազմակողմանի ստեղծագործութիւնների շարունակուելուն արգելք էր հանդիսանում թոքերի հիւանդութիւնը, որ դեռ 37 թուին սպառնում էր նրան. քիչ չէին և այն հոգեկան յուզումները, որ կրեց նա Ժորժ Զանդի հետ ունեցած երկարատև ընկերակցութեան ժամանակ՝ մօտ 9—10 տարի։ Այդ արկածալի և խանդավառ սիրոյ արդիւնքն է հռչակաւոր B-moll սոնատը՝ Marche funerbe յուղարկերգով. ասում են, որ այդ գործը Շոպէնը գրել է Մայորկա կղզում՝ իր միայնութեան ընպէններին, մի ահալի ու փոթորկոտ գիշեր, երբ նա սրտատրոփ սպասում էր կենակցին. բնական է որ պէտք է արտայայտուէր այդտեղ ահալի թախիծ, հեծեծանք և սրտակտուր հառաչներ. բնական է և այն, որ հոգու խորքերից բղխած այդ գործը Մայորկա կղզուց ամբողջ աշխարհ էր տարածուելու։

Այսպէս է իսկական հանճարը. ոգևորութեան վսեմ վայրկեաններին նա ստեղծագործում է այնպիսի աստուածակերպ գոհարներ, որոնք միմիայն բաւական կը լինէին անմահացնելու հեղինակների անունները։

Մարգ

---

*) Թէպէտ Շոպէնին գիտեցողներից ոմանք ներկայումս բոլորովին հակառակ կարծիք են արտայայտում։

ԱՆՏՈՒՆԻ ԵՐԳԵՐԻՑ

(Անտունի չափով)

Գարուն, դու բարով եկար,
Աղքատի սրտին մխիթար.
Մեր սիրտ, մեր հոգին ցաւոտ
Տանջուեցին՝ տեսիլդ միշտ կարոտ:

Տնիկ՝ քարուքանդ, վէրաւոր,
Մեզ խաբեց ձմրան բուք, բորան.
Զազեր թառամած, նուազ՝
Դեռեզման մտան անմուրազ:

Արի՛, գարուն ջան, արի՛,
Ապաւէն խեղճի, թշուառի.
Մեր սիրտ, մեր հոգին ցաւոտ
Տանջուեցին՝ տեսիլդ միշտ կարոտ...

Յարութիւն Պետրոսեան

ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ.[1])

ՀԻՆԳ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԼ ԼԱՄՊՐԵԽՏԻ

Հակառակ այս բոլոր լարուած ծգտումների ստեղծուում է մի նոր հոգեկան կեանքի ներքին հաւասարացումներով. գոյութեան կարևոր խնդիրներում հիպնոսացում և փոխադարձ ազդեցութիւն։ Յետագէմ բնաւորութիւնների համար առաջ է գալի ժառանգուածի, հնի արժէքը անդիմադրելի զօրութիւնով և սրան հակակշռող մի ուժեղ բնաւորութիւն չկար։ Եկեղեցական և քաղաքական աւատականութիւնը շուայտութիւններ են կատարում. նահապետական անհամբերատարութեան կից երևան է գալի թթու ազգասիրութեան անհամբերատարութիւնը։ Սակայն այն անհատները, որոնց բնաւորութիւնը դէպի առաջ, դէպի նոր տպաւորութիւնների արժէքն է ծգտում, նայելով իրենց ստեղծագործող ոյժի թուլութեանը կամ ուժեղութեանը, ցոյց են տալի ժամանակի յատկանիշ, ընորոշ գծերը։ Մի քանիսը զգում են իրանց մէջ չափից դուրս մղումն ամեն ինչ ժրխտելու, քայքայելու, վերագնահատելու. ժամանակաշրջանը սկսում է յոռետեսութեամբ, որի խիստ ներգործութիւնը յատկապէս երերուն, ստեղծագործող բնաւորութիւնների գործունէութեան մէջ երևալով, նրանց գոյութեանը վերջ դրեց, ինչպէս օրինակ Նիցշէն և որոշ մտքով նրան լրացնող նրա տիպիկ բախտը։ Այս հեշտութեամբ համեստութեան սահմանը անցնող և գերմարդ երևակայող ստեղծագործութիւնների շրջանում ժխտման կարիքը հէնց իբրև առաջին նշան հանդէս է բերում մեծ դառնալու ցնորքը և ծգտումն դէպի դրականը։ Հեշտութեամբ զարգանում է օրհասական նորաբանութիւնը, նորի հրա-

---

[1]) Լումայ № 3

շալի պաշտամունքը իբրև ըստ ինքեան նպատակ։ Յատկապէս դիւրադրգռման սկզբնական շրջանում «սենսացիօն» խօսքը մօդայի արտայայտութիւն է դառնում. սրա առաջընթացութեան դէպքում երևում են հոգէհարցութիւնը, հրաշագործութիւնը, միստիկական պաշտամունքը և սատանայի երկրպագութիւնը։ Ուր որ նորաբանութիւնը և բացասումը միանում են, այնտեղ տեսնում ենք զզուելի, փթածի, անբնականի պաշտամունքը և հակումն դէպի հոգեկան անբարոյականութիւնը*), մի բան, որը ժամանակից առաջ եղող տպաւորիչ գրականութեան խոշոր մասի համար, մանաւանդ կին գրողների համար, բնորոշ գիծ է։

Ստեղծագործութեան ինքնահիպնոսութեան հետ կայ պարզ հիպնոսացում տպաւորիչ են կոյր պատրաստակամ հետևողութիւն ամբոխի։ Այստեղ առաջ է գալի մի ճշմարիտ զգացմունքի ու կամքի ինքնաշարժ դրութիւն. կուսակցական լինելը և հերոսի պաշտամունքը, այլ և սրանցից առաջ եկած տենչը և ինքնուրոյն անձնաւորութիւններին հալածելը սովորական դարձաւ։

Շնորհիւ այս երևոյթների անհատի սոցիալ-հոգեկան կապը տուժում է. սրանց ընդհանուր գործունէութեան համար վաղուց եղած հրամայական պահանջները միանգամայն մերժւում են իբրև այլևս անգործադրելիներ։ Նախկին կրօնական և բարոյական իդէալները տուժում են այս ընդհարումից. պատրաստի էսականութեան խիստ սանձահարումն է տեղի ունենում տրնտեսական ազատ մրցութեան նշանաբանի անուան տակ մինչև սարսափելի աստիճանը և ոյժի քաղաքագիտութեան դիմակի տակ քաղաքականապէս իշխում է ոչ միայն ժողովուրդների ոյժերի լարման միտումների, այլև գիտութեան, խելքի ու խղճի վրայ։

Արդեօք աններդաշնակութեան այս բոլոր ձևերը նախկին սոցիալ-հոգեբանական դրութեան տեղը ամբողջովին զրաւեցի՞ն։ Արդեօք առանց դիմադարձ ոյժերի մնացին, որոնք նրանց ազդեցութեան մի մասը իսկոյն հեռացրին, գուցէ և թոյլ չտուին,

*) Համեմատել ռուսական ժամանակակից գրողներին. որ աստիճան բնորոշ երևոյթ է։ Թարգմ.

որ հանդէս գան։ Արդեօք այն դրութիւնը, որ մինչև այժմ նրկարագրեցի, այսպէս մութ, խառնիխուռն ձևերով վերջնականապէս գոյութիւն է ունեցել։

Այս հարցերին պէտք է վճռական բացասական պատասխան տալ։ Աններդաշնակութեան ժամանակ հէնց իսկոյն սկսուեց մի նոր կազմակերպութեան գործունէութիւն, հէնց այս աններդաշնակի տարրերը, մի այլ կողմից նայած խնդրին, դրական են դասաւորւում և ընդունում են ստեղծագործութեան ընթացքը։ Երևակայութեան գործունէութեան աններդաշնակութիւնից 19-րդ դարու վերջին տասնամեակներում չէ՞ արդեօք ծագել մի նոր, բարձր, տպաւորիչ նատուրալիզմ. նախկին կամքի կապակցութիւնների աններդաշնակութիւնից չէ եղել նոր արնտեսական կեանքը և առաջներումը անյայտ ազգային և համաշխարհային քաղաքագիտութեան համակարգութիւնը։

Այդտեղից էլ դուրս է գալի ժողովող, պարզաբանող և կառուցանող մի աշխատանք։ Սօցիալական հոգին մտածում է իւր կեանքի միջուկի մասին. նա փնտրում է չլսուած քանակութեամբ առաջ եկող երևոյթների հոսանքում մի յենակէտ. նրա ծրգտմանը ընդդիմանում է հազարաւորների և տասնեակ հազարաւորների կամքը, գուցէ և այս հէնց իրենից էլ ծագում է։ Շարժումը տանում է դէպի մի նոր գերիշխող, մի նոր կենացաղակարգ։ Տեսնում ենք ինչպէս այս շարժումը, որը 1890-ին պարզ հանդէս է գալի, քայլ առ քայլ հող է ձեռք բերում։

Երևակայութեան գործունէութիւնը այս դէպքում էլ առաջապահ գունդն է, ուստի այստեղ նրա երևոյթները կրկին յատկապէս պարզ և բնորոշ են։ Ձևակերպող արուեստում և բանաստեղծութեան մէջ արտաքին աշխարհը արտայայտելու խնդրում հասան չլսուած շնորհալիութեան. յետոյ սկսեցին նոր ներքին աշխարհի, մեծ մասամբ նեարդային կողմը արտայայտել։ Երբ այսպիսի գործնական հոգեբանութեան, կարելի է ասել նեարդսբանութեան են հետևում, որոշ հայեցակէտը յետ է մղւում։ Հոգին, որ մինչև այդ ինքնագիտողութեան նիւթ էր, նկատւում է իրբև առարկայական դիտողութեան մի առարկայ. հետզհետէ դարձաւ մի դիտող իր սեփական հայեացքների և իւր

բնոյթը կնքեց առարկայական գիտողութեան վրայ։ Երբ այս դէպքում առաջին անգամ պէտք է ինքն իրեն կիսէր, նրա ներքինը արտայայտուեց յանձին իսկական անձնաւորութեան ուժեղ շեշտման։ Կրկին առաջ եկաւ այն ուժեղ արժէքը, որին Վունդը իւր հոգեբանութեան մէջ ապպերցեպցիա է (պարզ գիտակցութիւն) ասում. այստեղ առաջ եկան նոր գերիշխող ոյժերի սկզբնաւորութիւններ։ Սրանք սկզբում բնականաբար կասկածոտ ու հանդարտ էին. բնական նկարագրութիւններին կեանք տուող անհատական տրամադրութիւնն էր. քնարերգութիւնը իւր ընթացքում հանդարտ էր. երաժշտական մի փոքր մաս էլ ապմկեց նրա շուրջը և ներսը։ Երևացին այլաբանական նկարչութեան և քնարերգութեան, հեքիաթների ու երազների դրամաների, ցնորաբեր, կախարդող թատերական ներկայացումների ժամանակները։

Այս դեռ բաւական չէ։ Արդէն շատ վաղուց մեծ, եզակի արուեստաւորները, մեծ մասամբ նրանք, որոնք յատկապէս անցման ժամանակ, եթէ ոչ նոյն իսկ առաջ նոր շրջանի հոգեկան դրութիւնը նախագուշակել էին, ուրանալով այս նորը՝ գարգացրին անհատական ոճը. սրանցից կարելի է թուել՝ Բիզիուսին և Լուդվիգին, Հեբելին և Անցենգրուբերին, Ֆեօէրբախին և Բէօկլինին, Թօմային և Կլինգէրին։ Սրանց ժամանակը հարուստ էր. արդէն 80-ական թուականներին ճանաչուեցին, իսկ 90-ականներում յաղթանակ էին տօնում։ Յանձին այս արուեստաւորներին լրացում էին տեսնում բոլորի տենչերը, տենչ դէպի նոր, ամբողջական, նոր կուլտուրայի տարրերը վարպետող անձնաւորութիւնը, տենչ դէպի անհատական գերիշխումների, նոր ժամանակի փրփրացող քաօսը։

Հազարաւոր սրտերի համար այս տենչը դարձաւ սոցիալ-հոգեկան փոփոխութիւն։ Ոչ թէ յատուկ և ինքն իւր մէջ արմատացած անձաւորութիւնը, այլ մի նոր բարոյականութեան, նոր աշխարհայեացքի, նոր կրօնի ամբողջութիւնը դարձաւ ժամանակի տենչը. այս բոլորը երևան եկան բանաստեղծութեան երբէք չգործածուած ձևերում։ Սա մի կատարեալ դարձ է դէպի նոր գերիշխող ոյժ փնտրելը. այս բանը բնորոշ է վերջին

հնգամեակի վերաբերմամբ, ծաւակերպող արուեստի ու նոր բանաստեղծական իդեալիզմի նոր ոճի սկզբնաւորութիւնն է։

Գիտութիւնը իւր համար բաց է արել մի հանապարհ, որը հետևում է երևակայութեան ընթացքին և պատրաստ է միշտ նրանով գնալ աւելի ևս վստահօրէն։ Հէնց բնական գիտութիւններում, որոնք երկու դարի ընթացքում բնութեան բոլոր երեւոյթների վերաբերմամբ գործադրելի փայլուն օրէնքը գտան, էներգիան պահպանւում է և այսպիսով հմայած են պահւում նրա հիմունքները, ամեն տեսակ աններդաշնակութիւնից զերծ։ Նոր շրջանում սակայն խորաղնին հետազօտող միտքը գտաւ դէպքեր, որոնք ըստ երևոյթին այս օրէնքին չէին համապատասխանում. ի նկատի ունենալով այս հանգամանքը, էներգիայի նորագոյն ուսման մէջ մի նոր, այլևս ոչ զուտ մեքենայական համադրութիւն էին ուզում փնտրել։

Այս ժամանակում հասկանալիօրէն մեծ հոգեկան փոփոխութիւնների մէջ առաջին տեղը բռնում են հոգեկան գիտութիւնները։ Այստեղ վճռականօրէն մի լետադարձ շարժում սկսւեց ընդդէմ վերջին տասնամեակների անծրագիր, անհատական հետազօտութեան. մի հետազօտութիւն, որը միայն հետազօտութեան համար էր։ Պահանջ կար, երևոյթները վերլուծել բարձր հայեցակէտով. այսպիսով հասան մեթոդի այն ամենաէական պահանջին, որ հոգեկան կեանքի երևոյթներում, ներքին, հոգեբանական երևոյթները այնպէս պարզաբանուին, որ սրանց համադրելը և մի ընդհանուր օրէնքի տակ դնելը հնարաւոր լինի. արդեօք այդ օրէնքը հոգեկան մեխանիկայի, թէ հոգեկան զարգացման ուսման, թէ կենսաբանութեան օրէնք կլինի, այդ միևնոյն է։ Այս պահանջը հոգեկան գիտութիւնների մղմանը օրէցօր աւելի որոշութիւն է տալի. այս նպատակի իրագործման դէպքում նշան կայ, որ հակառակ վերջին ժամանակի կտոր կրտոր աշխատանքի մի նոր համադրութիւն է սկսուելու։

Երբ այսպիսով երևակայութեան ու բանականութեան գործունէութիւնը նոր զրգիռների ծովում սեփական ցուցմունքների շնորհիւ շատ արդարացի դէպի նոր գերիշխող ոյժերի սկզբնաւորութիւնը դիմեց, այսպիսով ուժեղացրին անմիջապէս

զգացմունքի ու կամքի գործունէութիւնը ևս։ Այստեղ էլ մարդ ինքն իրեն հաւաքեց, անհատական նպատակները աւելի պարզ ու համեստ դարձան. գերմարդկային բարոյական պահանջները ի կատար ածելու համար եղած բռնկումներից յետոյ աւելի պարզ ու բոլորովին ժամանակակից պահանջներ դրուեցին անհատի, պետութեան ու հասարակութեան առաջ։ Նորից երևան եկան բարոյական հոսանքներ, մեծ, ալտրուիստական նպատակներով, որոնց զէնքն է համամարդկային խաղաղութեան հոսանքը. այսպէս ասած սոցիալ-ազնուապետական միտքը կրթուած շրջաններում դարձաւ կեանքի պահանջ. առաքինութիւնը այլևս չէր նկատւում իբր փարթամութիւն։ Նախկին ժամանակի էստէտիկական ու կրօնական զգացումներին խիստ անծնատուր լինելը և միմեանց հետ շփոթելը այնպէս անյայտացաւ, որ ոչ ոք այդ կորուստը չափսոսաց, մինչև իսկ չնկատեց։ Առաջին տեղը բռնեց այլևս ոչ թէ՝ մի մեծ անծնաւորութեան շնորհիւ, որպիսին է իշխան Բիսմարկը, որը այս ուղղութեան ընթացքում առաջ էր անցել, այլ աւելի շուտ եզակիների սեփական կեանք ունենալու ուղղութեան շնորհիւ սոցիալական, կապող մեծ տարրերի՝ պետութեան և հասարակութեան առաջ գնալը։ Սրանք դէմ էին գնում տնտեսական պայքարի աւերածութիւններին. նրանք կազմեցին մի օրէնսդրութիւն, նորերս զարգացած սոցիալ-բարոյական իդէալների համապատասխան։ Սրանք իրենք իրենց գործունէութեան ընթացքում սահմանափակ զգացին այն աստիճան, որքան այդ գործունէութիւնը աններդաշնակութեան շրջանի ոյժի քաղաքագիտութեան նպատակին էր հետևում. սահմանափակողներն էին բարոյական և եկեղեցական աշխարհաքաղաքացիութեան շարժումը։

Սրանք նորագոյն շարժումներն են. սրանց նկարագրութիւնը անելով հասել ենք ներկային։

Այժմ պէտք է երկրորդ խնդրին՝ անցման ժամանակին անցնել, որի լուծումը պէտք է այս ժամում տալ։ Պէտք է սոցիալ—հոգեբանական անցումների մանրամասն նկարագրութիւնից, անցումներ, որոնք տեղի են ունեցել վերջին կուլտուրական շրջանից մինչև ներկան, ինչպէս նաև մի կուլտուրական ժամա-

նակաշրջանից միւսին անցնելու անցումների նկարագրներին անցնել, որոնց մասին առաջին դասախօսութեան մէջ խօսք է եղել. այս բոլորից պէտք է անցման ժամանակի երևոյթների ընդհանուր, տիպիկ պատկերը պարզել։ Պէտք է պարզել այնպէս, որ եզակի անցքերի խայտաբղէտ աշխարհից սրանց հոգեբանական կորիզը դուրս հանուի կեղևի տակից. այլ և այն հոգեբանական տարրերը, որոնք այս դէպքում երևան կգան, պէտք է նկարագրել նրանց լինելութիւնը ու ոչնչացումը այնպիսի կապակցութեամբ, ինչով որ նրանք ամեն մի եզակի դէպքի հիմք են կազմում։

Եթէ մեթոդի պահանջի այս ծրագրով դիտենք նաև սոցիալ-հոգեկան անցման ժամանակի երևոյթների սկզբնաւորութիւնները, կտեսնենք ամեն մի եզակի դէպքում շնորհիւ նոր պատճառների բազմութեան՝ հոգեկան շարժումների, գրգիռների, դէպքի, երևոյթի, մի խառնիճաղանճ պատկեր։ Այս բոլորը ամեն ժամանակ ազդում են մարդու հոգուն աւել, կամ պակաս չափով, արդեօք նա կցանկանայ այդ թէ ոչ՝ այդ միևնոյն է։ Սրանց ազդեցութիւնը այնքան աւելի ուժեղ է, որքան սրանք առաջին յաղթութիւնից յետոյ օգտւում են նաև այն ամբապընդումից, որ ստանում են ամեն մի հոգեկան յաղթութեան դէպքում շնորհիւ անցեալ կամ նախանցեալ հոգեկան ազդեցութիւնների հակադրութիւններին։

Զուտ հոգեբանական տեսակէտից նայած, ի՞նչ կերպ են ազդում այս պատճառները։

Սրանք ստեղծում են գիտակցութեան նոր դէպքեր, սրանց համապատասխան կազմւում են զգացումների ու մտաւոր պատկերացումների նոր բովանդակութիւններ, այլ և կազմւում է վերջիններիս միութիւնը. այնուհետև ես-ի նոր յարաբերութիւններ ու վերացումներ, վերջապէս երևակայութեան նոր բովանդակութիւններ, որոնք համապատասխանում են գիտակցութեան բովանդակութիւններին։ Սրանց հետ միասին, այս երևոյթների մէջ թթխմորի դեր կատարող զգացումները նմանապէս գործի հրաւիրուեցան, որոնց թւում նաև ծգտումը և կամքը. սրանք էլ ուրեմն որոշ փոփոխութիւններ կրեցին։ Թէ գիտակցութեան

բովանդակութեան, թէ սրան ուղեկից զգացումի երևոյթների ամբողջ փոփոխութիւնը զոյութիւն ունի մինչև այժմ սրանց ունեցած բովանդակութեան շերտաւորումների, գունաւորումների և ստուերաւորումների մէջ։

Արդեօք այս հետևանքը, նոր գիտակցութեան և զգացմունքի բովանդակութեան այս դումարը չիրաւի մի նոր պատմական կեանք է առաջ բերում։ Իսկապէս այդ կեանքի հիմնաւոր, առաջին հետևանքը կայ այստեղ։ Անհրաժեշտ է մինչև այժմ դիտած հետևանքներից ու ազդանշաններից աւելի շուտ անցնել դէպքերին։ Երբ այս տեղի ունենայ, կերևայ, որ հոգեբանական ծանօթ օրէնքների հիման վրայ այս դէպքերի գործօն մասեր կերևան՝ զգացումները, երևակայութիւնը, զուգորդութիւնը և հակումները։

Երևում է, որ նոյնիսկ հոգեկան գործողութիւններում, որոնք այստեղ քննութեան պիտի առնուեն, կամքի խնդիրը սկզբում մի փոքր յետ է մղւում. նա այլև ծգտումը շատ քիչ են ազդում և կատարւում են իրենց օրէնքների հիման վրայ։ Այստեղից հէնց հասկանալի է դառնում, թէ ինչու կուլտուրայի պատմութիւնը իւր ներքին խնդիրներում հոգեկան շատ պակաս խճճուած արտայայտութիւնների հետ գործ ունի, քան նոյնիսկ կամքից առաջացած ամենապարզ գործողութիւններն են, աւելի շուտ պարզ գործողութիւններ են զգացմունքի, երևակայութեան զուգորդութեան։ Դեռ աւելին. վերջին թուած գործողութիւնները իսկապէս պատմական ամենատարրական և այդ պատճառով հոգեկան հեշտ ճանաչելի ու տարբերուող երևոյթներն են։ Կուլտուրայի պատմութիւնը պատմական գերակարգի հիմք կդառնայ այն ժամանակ, երբ նա ընդհանրապէս սրանց ելակէտ ընդունէ և միայն իբրև կողմնակի բան՝ նաև մասնաւոր հակումները ի նկատի ունենայ։ Այլապէս ի՞նչ ձևով կարող է մի հիմք դարձող պատմական գիտակարգ զարգանալ, եթէ նա հոգեկան կեանքի ամենատարրական գործողութիւնները ի նկատի չունենայ։ Բնական գիտութիւնների դաղտնիքները բոլոր երևոյթների համար մի ընդհանուր բալանիով, իմաստութեան քարով կամ ընտիրիլիսոփայական սիստեմով չի

պարզուել, այլ միայն այնպիսի ամենատարրական խնդիրները պարզաբանելով, ինչպիսի են թեք հարթութեան կամ ընկնելու օրէնքները։

Մինչ այսպիսով մի կուլտուրական շրջանից միւսին անցնելու անցման ժամանակ այս տարրական անցքերի գրդիչներին անսովոր քանակութեամբ և միաժամանակ անսովոր ձևերով, նոր որակներով թափում են հոգու վրայ, խանգարում են միաժամանակ հոգու մինչև այժմ ունեցած հաւասարակշռութիւնը։ Եթէ հնարաւոր է հոգեկան կեանքում պատմական տեսակէտից միշտ գործունեայ, նոր ծնող տպաւորութիւնների, զգացումների ձգտումների և միաժամանակ սրանց իշխող և սրանց ընթացքը ըստ երեւոյթին ղեկավարող մի միջոց, մի գերիշխող ոյժ գտնել, ապա պէտք է ասել, որ մինչև այդ հոգեկան գործողութեան անցքերը, սրանցից առաջ եկող գրդիռները և յուզումները մի որոշ գերիշխող տարրով էին կանոնաւորւում։ Այժմ երևաց, որ այս բանը այլևս գոյութիւն չունի։ Բազմապիսի գրդիռների նոր աշխարհը ստեղծեց հոգեկան կեանքի ձևերի նոր գունաւորումներ, որոնք այլևս մինչև այդ եղող գերիշխող տարրին չէին ենթարկւում։ Այսպիսով այս գերիշխող տարրը, այսպէս ասած անձնաւորութեան միջուկը, յետ մղուեց, առնուազն կորցրեց իւր իշխանութեան մի մասը. այս էր ահա անմիջական հետևանքը։

Յաջորդ հետևանքը դարձեալ այստեղից այն եղաւ, որ հայեցողութեան շրջանում մտապատկերները միմեանցից խիստ չեն բաժանւում, ինչպէս մինչև այդ էր. սկսւում են եղակի գրդիռներից առաջացած հետևանքների մէկից միւսին փոխադրուելու անցման ձևերը։ Ոչ պակաս դատողութեան շրջանում հիմքերը, պատկերացումները և հակապատկերացումները խառնւում են միմեանց այնպէս, որ չի կարելի այլևս իրարից անջատել. փոխանակ դատողութեան երևան է գալի միայն կարծիքը, ընդհանուր դատողութեան հիմքի մասին մի հայեացք ունենալը, որը դեռ ստորաբաժանումների չի ենթարկուել։ Մինչ այդ զոյութիւն ունեցող ուժեղ հոգեկան միութեան խանգարումն է այդ եղած փորձառական զուգորդութիւնների միութեան ձգտման խախտումն, որի պատճառով դուռնու դարբասը օտար ազգե-

ցութիւնների և ինքնախաբէութիւնների առաջ բաց է լինում։ Այս դրութեան երկար տևելուց առաջ է գալի զգացումների ինքնաներշնչումն, որոնք նկատւում են յատկապէս իբրև նորադոյններ, այլ և որոշ դատողութիւններ են առաջ գալի, որոնց համածայն անձնաւորութիւնը կամայական և ինքնիշխան ձևով առաջ է մղում. կամ թէ նման զգացումներ ու դատողութիւններ ներշնչւում են դրսից։

Մի տեսակ նման բան էլ տեղի է ունենում կամքի շրջանում։ Այստեղ, յատկապէս կամքի նախադռնում, ձգտումների շրջանում, մարդու ներսում կան միշտ երկու իրար դէմ եղող տարրեր. ներգործական, անձնաւորութեան յատուկ ձրգտումները ղեկավարող տարրը, ես-ի միացումը մի կողմից և իրերից բղխող, սրանց մէջ իշխող կրաւորական անհրաժեշտութիւնը միւս կողմից։ Եթէ գերակշռողը իրերից բղխող դրդիչներն են, կամ թէ սրանք համեմատաբար աւելի ուժեղներն են, հետեւանքը այն է լինում, որ որոշ վերջնական վճիռ տալը փոխարինւում է աւելի շուտ մի տանջող, երերուն դրութեամբ, աւելի վատ դէպքում համաշխարհային թախծով կամ յոռետեսութեամբ. ընդհակառակը ես-ի ձգտումների արտայայտութիւնը միշտ իւր ետևից ուրախ զգացումներ է բերում։ Կարող է բանը այն աստիճանի հասնել, որ արտաքին իրերը, նրանք ի հարկէ, որոնք նոր ու յաղթող տպաւորութիւններ տալ կարող են, անձնաւորութեան ձգտման ու կամքի աղբիւրը այնպէս պղտորեն, որ անձնաւորութեան տեսակէտից նայած խնդրին, կամքի աւտոմատ դրութիւն առաջ կգայ և կձագեն այնպիսի ստիպողական ձգտումներ, որոնց մերժելը անկարելի կլինի և այնտեղ, ուր առաջ նմանողութեան ձգտման համատարած ներշնչումը ամբոխին շարժում էր, այժմ միայն անմիտ մոդաները և հոգեկան հիւանդութիւնները դէպի ընդհանուր յիմարաբանութիւնն են մղում։ Եթէ չի կարելի ասել, որ այս արտաքին ձևերը անցման ժամանակաշրջաններում միշտ ու ամեն տեղ էլ երևան են եկել, գոնէ պարզ պէտք է համարել այն, որ նրանք նախկին անցման ժամանակաշրջաններում շատ են եղել և վերջին անցումներում էլ չեն պակասել և որ ընդհանրապէս ձգտումների

մէջ նկատելի է լինում աններդաշնակութիւնը իրրև բնորոշ գիծ։

Միաժամանակ անձնաւորութեան եռանդի գործադրութիւնը ընդհանրապէս շատ հեշտութեամբ հիւանդագին կողմեր էլ է ստանում. ըստինքեան թոյլ և անվստահ, նա միշտ էլ գրգռման դրութեան մէջ է գտնւում և այսպիսի դրութեան մէջ երևակայութեան ու օգտակարութեան զուգորդութիւններ է անում, որ ուրիշ ժամանակ չէր լինի, որովհետև սրանց հետ կապուած են նաև անհաճոյութիւններ։ Սրանց շարքին են պատկանում բացասող ուղղութիւնը, ինքն իրեն տանջանքի ենթարկելը, տարօրինակ երևալը։ Եթէ այս կապակցութեամբ խորը քննենք՝ կտեսնենք, որ խնդիրը այստեղ մեծ մասամբ եռանդի համար նպատակ որոնելուն է վերաբերում։ Եթէ կայուն կուլտուրայում այս բանը միակերպ պահուած է և առողջ կերպով որոշուած, ապա վճռականութեան համար բարձր աստիճանի աղատութիւն կայ և տարօրինակ նպատակները պակասում են։ Իսկ ընդհակառակը, եթէ այս բացակայում է, այն ժամանակ ծգտումը ուղղւում է կամ զգայական անմտութիւնների կամ թեթևամիտ հաւատարմութիւնից գրգռուած այնպիսի նպատակների, որոնք առողջ դէպքում շատ դժուար հասանելի կերևային, եթէ ոչ անկարելի։ Միաժամանակ ուղեկից զգացումների մէջ իշխում է մի տատանուող դրութիւն, որի մէջ երևան են գալի թեթևամտութեան և կրքերի ամենատարբեր, յաճախ նուրբ զուգաւորուած խառնուրդներ։ Նախկին պատմութիւնից հեշտութեամբ կարելի է եզրակացնել, որ այս բոլոր երևոյթները նոր կուլտուրայի անցման, այլ և նախկին անցման ժամանակների համար բնորոշ են։ Այս դեռ բաւական չէ։ Նպատակ որոշելու այդպիսի յարաբերութիւններում այլ կողմից եկած հակառակ պատկերացումների ազդեցութեան տակ այնպէս կարող է անհատը ինքն իւր մէջ ամփոփուել, որ կդառնայ կամքից ու բովանդակութիւնից զուրկ մի ծգտում, հետևանքը կարող է լինել մի ընդհանուր վհատութիւն։ Որ այս բանը մասնաւոր դէպքերում, նոր տնտեսական ճգնաժամի դէպքերում, այլ և նախկին ժամանակի սրանց նման երևոյթներում տեղի են ունեցել,

երբ կրաւորականի ճնշումը, դրսից եկող հակազդեցութիւնները ամենաբարձր աստիճանի են հասել, աւելի քան յայտնի է։

Բացի այս, շատ բնորոշ է, որ այս ժամանակներում, երբ հոգին մի գերիշխող տարրից, այսպէս ասած իւր միջուկից, զրկուել է ընդհանուր հոգեկան կեանքի զգացումը, ծգտումը եղած հոգեկան կեանքի գործօններում լրիւ արտայայտուելու, հէնց իրերին իրենց անբնական ձևով անծնատուր լինելու, կարելի է ասել անծնաւորութիւնը կրաւորապէս կորցնելու մէջ է արտայայտւում։ Այս մի այնպիսի հայեցակէտ է, որ ամէն անգամ, երբ գեղարուեստում երևան է գալի բնականի ուղղութիւնը այսպիսի ժամանակներում հիմք է դառնում։ Եթէ այս ծգտումը աւելի միակողմանի է հանդէս գալի, անբնական հետաքրքրութեան աւելի տարօրինակ ձևեր են երևում. օր. դէպի զզուելին մղուելը, ցանկութիւն իսկական ես-ի մէջ խորասուզուել. իբրև մի առարկայական բանի, հակումն ինքն իրեն տանջելու, ինքախեղաթիւրման. եզակի դէպքերում նաև ինքնասպանութեան. առաջ է գալի նաև ոչ պակաս հաճոյք՝ ծգտելու դէպի անհաճոյն, անհամ հաճոյքը, կծու բաւականութիւնները, վշտաբեր վայելքը, ուրախանալ աններդաշնակ գոյներից և ձայներից, անչափից յագուրդ ստանալ, երաժշտութեան մէջ լսել ուժգինը, ճարտարապետութեան մէջ աղմկալին տեսնել և այլն։

Այսպիսի աններդաշնակութիւնների սկզբնաւորութեան, այլ և նրանց վերջանալու ժամանակներում, այսպէս ասած խառն զգացումները մի յատուկ դեր են խաղում։ Սրանք հաճելիի և անհաճոյի մէջ եղած անցման զգացումներ են, որովհետև լինում է մի հաճոյք, որ խառն է անհաճոյի հետ կամ լինում է քաղցրդառի զգացում, կանաչ-դեղինի զգացում և այլն։ Այսպիսի ժամանակներում զարգանում են զգայուն զգացումները, այսպէս օրինակ զգայականութիւն, թախիծ և ամենից առաջ ծաղրը, աւելի յետոյ ողբերգական զգացումը, որը օրինակ դրամատիկական գեղարուեստի մէջ 90-ական թուականներին մի կարճ ժամանակեայ, բայց բնորոշ զարգացում առաջ բերեց։

Եթէ գերմանական զարգացման ընդհանուր ընթացքում իշխող հոգեկան անցքերի գլխաւոր անցքերը մի անգամ էլ վեր

յուշենք, կստանանք հետևեալը· անծնաւորութիւնը ինքն իրեն յանծնու�է իրեն կրթող աւելի ուժեղ արտաքին աշխարհին այնուհետև նա ամեն մի արտաքին գրգիռ արտայայտում է շատ ուժեղ, առանց ընտրութիւն անելու հակառակորդների մէջ, որոնք ուրիշ դէպքում գրգիռի աստիճանը սահմանափակում էին։ Նրա զգացմունքի կեանքը աւելի դիւրագրգիռ է դառնում, քան առաջ էր. նա թոյլ է տալի, որ իւր մէջ ծագեն այնպիսի մրտապատկերներ, որոնք չենթարկուելով մինչև այժմ եղող վերահսկողութեանը, շատ շտապողական և նոր բովանդակութիւն ունեցող վիճռների են հասցնում։ Նա դրսից ստանում է գրգիռներ, որոնք հանդիպում են հակառակ պատճառների պակաս ազդեցութեան, արագ ու մինչ այդ չեղած անսովոր ձևի գործունէութեան են առաջնորդում։ Այս երևոյթների շնորհիւ նա ինքը մի այլ բնաւորութիւն է ստանում։ Մի կողմից նրա ներքը լցնող բովանդակութիւնը հարստանում և շերտաւորուում է, միւս կողմից նա կորցնում է այն համաչափութիւնը, որը իշխում էր մինչև այդ եղող պակաս թուով երևոյթների մէջ։ Նոր գրգիռներին անծնատուր լինելը, աւելի ճիշտն ասած նուիրուելը, պատճառ է դառնում գեղարուեստի մէջ բնական ուղղութեան առաջ գալուն, որը արտաքին աշխարհի, այլ և հոգեկան կեանքի դաղտնիքները երբ մի երրորդ կողմից դիտող պարզաբանում է միաժամանակ։ Օրինակ Զոլեայի պէս գրած գեղարուեստական երկերում իբրև coin de natur vu à travers un tempérament (համածայն բնաւորութիւն տեսնել բնութեան մի անկիւնը) բնաւորութիւն ունեցողը կարելոյն չափ մի կողմն է թողնում։ Մտապատկերներին անծնատուր լինելը թուլացնում է ի մի ամփոփող դատողութիւնների կազմութիւնը և միաժամանակ այն զգացումն է առաջ գալի, թէ պէտք է մի աշխարհայեցողութիւն կազմել։ Գործելը ենթակայ է լինում յանկարծական դրդիչների և այլասեռուում է սրանց ազդեցութեան տակ փոխարկուելով ծայրահեղ գրգռման կամ թուլացման։

Եթէ աւելի կարճ ասենք և մի խօսքով ամփոփենք, կլինի այսպէս· անծնաւորութիւնը արտաքին աշխարհից յատկապէս տպաւորուող է դառնում. արտաքին աշխարհը դառնում է նրա

համար մշտական պատնէշ. անձնաւորութիւնը ինքն իրեն հիպնոսացնող է դառնում, հեշտութեամբ ինքնաներշնչման խաբէութիւնների ազդեցութեան տակ է ընկնում. հոգեկան կեանքի ընդարձակ անդիտակ հիմքի ազդեցութեանը աւելի է անձնատուր լինում, քան մինչև այժմ էր։ Այստեղից առաջ են գալիս հայեցողութեան, դատողութեան և գործելու նոր ձևեր։ Այսպիսով հոգեկան կեանքի այն շրջանները, որոնք գիտակցականի մէջ էին գտնւում, այժմ սրանից աւելի են բարձրանում. այստեղից բացւում է մի անցք դէպի նոր տեսակի զգացումները, երևակայութիւնը, ծգտումն ու գործունէութիւնը։

Առանց այլևայլութեան պարզ է, որ այսպիսի հոգեկան դրութիւնը ըստ ինքեան վտանգաւոր է և ժամանակակիցները շատ շուտ զգում են։ Ի՞նչպէս կարելի և սրան յաղթել։ Նոր, ուժեղ երևոյթների աշխարհը, նոր դրգիռների անբաւ քանակութիւնը գոյութիւն ունին. սրանց չի կարելի հեռացնել. աւելի շուտ հոգեկան կեանքի խնդիրն է լինելու սրանց յարմարուել։

Այս դէպքում, իրերի դրութեանը նայած, անհրաժեշտ է երկու բան. նախ պէտք է հոգին մեծ ընդարձակութիւն ձեռք բերէ. այսինքն հոգեկան ոյժը այնպէս պէտք է զօրեղանայ, որ նոր բաղմապիսի հոգեկան գործողութիւնները միաժամանակ կատարելու մշտական հնարաւորութիւն լինի։ Բացի այս հոգին ոչ միայն այս նոր աշխարհին պէտք է միայն իւր ներսը ընդունէ, այլ և պէտք է կարողանայ, այդ մի որոշ կեդրոնից կառավարել։ Այս դէպքում էլ այս բանը ապահով կատարելու համար հարկաւոր է հոգեկան երկու գործողութիւն։ Հոգին պէտք է նոր գրգիռները և վրդովումները իրարից տարբերէ, բաժանէ և տարրալուծէ. այս բաժանի՛ր-ին սակայն պէտք է հետևէ և իշխի՛ր-ը։ Այս անդամահատած ամբողջութիւնը հոգին պէտք է միացնէ, շաղկապէ, համադրէ, դուրս հանելով ամեն տեսակ հակասութիւն և միջուկը, գերակշռող ոյժը անձնաւորութեան համար օգտակար դարձնէ։

Կարող է ըստինքեան պատահել, որ այս ճանապարհը խսկոյն չգտնուի. փորձառութեանը համապատասխան երևացող և

առանց բացառութիւն ունեցող օրէնքի համաձայն այս դէպքում նախ երևում է անցման ժամանակ. յատկապէս ներկայի կուլտուրային անցնելու ժամանակի դէպքում, որը շատ արագ կատարուեց, անցման ժամանակը այնուամենայնիւ մի մարդկային տարիքի չափ տևեց:

Այստեղ երևում է, թէ ինչպէս հոգեկան անհրաժեշտ ընդարձակութիւնը կամ որ նոյնն է, նոր ուժեղ ընդարձակման ոյժը դանդաղօրէն է ծեռք բերում: Միշողութիւնը չի կարողանում նոր երևոյթները գիտակցօրէն կանոնաւորել: Ոչ պակաս նորի վերլուծութիւնը երկար ժամանակ զոհացուցիչ չէ լինում. վերջապէս խելամտութեան զգացումն էլ բաւարար զարգացած չի լինում. նոյն իսկ գործերը գործնականապէս կարգադրելու տեսակէտից բազմանում է այնպիսիների թիւը, որոնք չեն կարողանում իրենց տեղը գտնել: Աւելի ևս պակասած նոր տարրին գերիշխելը: Գիտութիւնը մնում է նկարագրական, նուիրուում է միայն իւր նիւթին. գեղարուեստը հպատակուում է անպտղաբեր բնական ուղղութեանը. ինչպէս այս դէպքում իդէալիզմը, այնպէս և այն դէպքում եզակիից այն կողմը անցնող և սրանցից աւելի բարձր երևոյթները ամփոփող ոյժը և իմացութիւնը տեղ չեն գտնում:

Միաժամանակ առաջ են գալի զուգորդութեամբ պայմանաւորող շահեր, ալտրուիզմը և այն ամենը, ինչ որ սրա հետ կապուած է. ընկերական գիտակցութիւնը, անձնազոհութեան զգացում և բարոյական իդէալիզմը ետ են մղուում. եսական մղումները դեբակշռող են դառնում:

Եթէ զարգացման այս ուղղութիւնը առանց ընդհատուելու առաջ գնայ, պարզ է, որ հոգեկան քայքայում առաջ կբերի: Ամեն տեսակ նպատակների պատկերացումները պարզելուց յետոյ մնում են մղումներից միայն անմիջապէս գիտակցականները, զգացումներից միայն այս մղումներին բաւականութիւն տուողները. զուգորդութիւններից նախկին յիշողութեան պաշարում տեղ գտնողները, մինչև որ բարքերի յետոյ եկող ապականացման շրջանում սրանք էլ կորչում են և հասնում են հոգեկան այնպիսի դրութեան, որը, ինչպէս յետոյ կտեսնենք, ո-

բոլոր մտքով համապատասխանում է աւելի ցածր կուլտուրական աստիճանի։

Այստեղ արդէն պէտք է հարց դնել, թէ մի՞թէ այս հիւանդոտ ընթացքն է եղել այն, որի պատճառով անցեալի խիստ օժտուած ժողովուրդները խորտակուել են։

Նորագոյն կուլտուրայում և յատկապէս այն դէպքում, որը ամենից վերջը մեր ուշադրութեան առարկան եղաւ, տեսանք դրական զարգացման յաղթանակը. նոյնպէս եղակի, հոգեկան այն անցքերը պարզապէս չեն երևան գալի, որոնց մէջ այդ զարգացումը կատարուել է և կատարւում է։

Անծնաւորութիւնը, իւր միջուկը կազմող կեդրոնում մի առ ժամանակ յանկարծակի էր եկել, բայց յետոյ կամաց յետ է մղում, թօթափում է. նորից բարձրանում և զարգանում է մի նոր գերիշխող ոյժ։

Հայեցողութեան հարուստ շրջանում է այսպէս լինում. այստեղ գեղարուեստի ու բանաստեղծութեան բնական ուղղութեանը հետևում է մի թարմ իդեալիզմ, որը իշխում է նոր, ուժեղ տպաւորութիւնների վրայ և կարողանում է վարպետօրէն մշակել. սակայն ոչ միշտ վերարտադրելու նպատակով, այլ օգտակար դարձնելու համար երևակայութեան գործունէութիւնը. արուեստաւորների ոգին գեղարուեստական երկի մէջ արդէն այսպիսով երևում է։

Այս կէտը, երբ յետագայում երևակայութեան գործունէութեան զարգացման խնդրով հետաքրքրուենք, աւելի ևս մանրամասն կհետազօտենք։ Հին գեղարուեստական օրէնքների համածայն բնական հոգին, որպէսզի մի իրի գեղեցկութիւնը կարողանայ արտայայտել, պէտք է երկու բան ունենար. նախ այս իրի ամբողջական տպաւորութիւնը և ապա սրա չափական բաժանումը։ Ընդ սմին եղակի գեղարուեստական երկերին նայած չափական բաժանումը նախ անհատական մի բան էր. սա համապատասխանում էր եղակի անհատների հոգեկան գործունէութեան չափին, որը ամեն մի անծնաւորութեան համար տարբեր կարող է լինել. օրինակ մէկը կարող է բանաստեղծութեան, նկարչութեան, ձևակերպող գեղարուեստի մէջ աւելի տակտիլը

սիրել, միւսը անապեստը։ Այնուհետև այս բաժանումը իւր մէջ ունի նաև սոցիալ-հոգեկան բան, որքան իհարկէ այդ մի որոշ ժամանակի ընդհանուր զգացման արտայայտութիւնն է. այս տեսակէտից նա ոճի հոգին է։ Այնն մի արուեստաւոր չափական տեսակէտից ոճի մէջ է երևան գալի. մի ժամանակ երևակայութեան արդիւնք գեղարուեստական երկում սոցիալ անհատական հոգեկան պատճառները այնպէս են միանում, որ պատմական զարգացման տեսակէտից նախ ծեռք բերուած պատճառը սոցիալ-հոգեկանն է լինում։ Պարզ է, որ մեծ գեղարուեստագէտը, որը երևոյթների աշխարհին տիրապետում է իդիալիստական տեսակէտից, իւր բնածին չափի համաձայն լրիւ կարող է երեւան գալ և ապրել միայն իւր ոճի մէջ։ Այս ոճը հնարաւոր է դառնում նրանով, որ իրերին կարողանում է տիրապետել իւր դերիշխող ոյժի և սրա մէջ ապրող չափի և ոչ թէ բնական ուղղութեան տեսակէտից։

Ինչպէս երևակայութեան գործունէութեան շրջանում, այնպէս և մտածողութեանը, բանականութիւնը համապատասխանող գործունէութեան շրջանում առաջ է գալի մի կեդրոնածիգ, միացնող շարժում։ Կարծիքի և հայեացքի համապատասխան, ըստ ինքեան չկարգաւորած մտապատկերների դումարը, նախկին ժամանակի ամբողջական տպաւորութիւնները, այժմ մասերի են բաժանւում։ Հիմքերը և հակառակ հիմքերը աւելի ևս տարբերւում են և կարիք է լինում ամբողջի բովանդակութեան համար մի խիստ որոշում գտնել։ Նոր աշխարհը ենթարկւում է լրացած գաղափարների աշխարհին և սա էլ համադրական գործունէութեամբ գեղարուեստական երկի միջոցով պսակւում է բարձրագոյն գաղափարով. այս բարձրութիւնից բացւում են բանական աշխարհայեցողութեան և գերզգայական մտածողութեան վճիռների համար նոր տեսարաններ։

Վերջապէս հանդէս են գալի շահերի խմբակցութիւններ, երերուն, երբեմն թեթևամիտ, երբեմն կրքոտ գործունէութեան դրութիւնից, որոնց մինչև այժմ ենթարկւում են։ Գործողի առաջ դրւում է այսպէս կամ այնպէսի կտրուկ հարցը և հեշտութեամբ էլ վճռւում է։

Այսպիսով ամբողջ հոգին նորից ազատւում է և ամբողջական անձնաւորութիւնը իւր ուղղուժուժի հանդէս գալովը իր գլխի տէրն է դառնում։ Այժմ էլ փնտրում է այդ գոյութեան ամենաբարձր հաճոյքը և աշխատում է զգուշաւոր հաշուով, այդ գործօնների հնարաւոր և կարելի գործունէութիւնը առաջ բերելով մի ընդհանուր ոյժի ղեկավարութեամբ։ Այստեղ, իբրև որոշ կեանք ունեցող հիմնական պայման, մնում է հոգեկան գործօնների մէջ ծեռք բերած միութիւնը, ուստի նախ երևում է իդեալիզմի մի շրջան, այսինքն մարդկային հոգու գերիշխանութիւնը իրերի վրայ։ Այստեղ եզակին զգում է շատ մեծ չափով ներգործական և երջանիկ և հպարտանում է իւր ստեղծագործութեան ուժով. ուժեղ է լինում և բացասող կողմը. նա յետադարձ շարժման ընդունակ է դէպի անհաճելին, մարդկային բնութեան հակառակը և այլասեռածը։

Հոգեկան այս նոր կեանքի կատարեալ տիրանալուն հետ միասին դալիս է մի դրութիւն, որը ոչ մի կերպ արդէն տեղի ունեցած աններդաշնակ ժամանակին չի համապատասխանում։ Այժմ վերջնականապէս, զրդիռների ու զուգորդութիւնների, զգացումների ու ձգտումների այս նոր աշխարհի տատանող յաղթութիւնից յետոյ, բացւում է մի անցք դէպի նոր, փոփոխուած գոյութեան ամբողջական կենցաղի ժամանակաշրջանը։

Ի՞նչ ձևով է լինում այս։ Այս հարցը, մեր այն մեկուսացած դրութիւնից, որը մեզ այս այս ժամում զբաղեցնում էր, դուրս է հանում և մղում է հետազօտելու հետևեալ ժամում աւելի ընդհանուր սոցիալ-հոգեկան դէպքերը։

Pessimist

ԼԵԳԵՆԴՆԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

Գ.

ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԻ ՋՐՀՈՐԸ

Հին հրէական երկրում երևացել էր Երաշտը։ Անգութ ու անողոք՝ անցնում էր նա չորացած խոտերի ու թառամած տատասկների միջով։

Ամառն էր։ Արեգակն այրում էր լեռների մերկացած լանջերը, թոյլ քամին բարձրացնում էր կրէ փոշին բացմոխրագոյն ճանապարհի վրայ, իսկ տօթից ուժասպառ եղած հօտերը ժողովուել էին տափաստանների վրայ գըտնուող ցամաքած առուակների շուրջը։

Երաշտը թափառում էր այս ու այն կողմ և որոնում էր ջրոտ տեղեր։ Նա դիմեց Սողոմոնի լճակը և տհաճութեամբ նկատեց, որ լճի մէջ բաւական ջուր կայ պահուած։ Յետոյ նա գնաց դէպի վար, Դաւթի նշանաւոր ջրհորը, որ գտնուում է Բեթղեհէմի մօտ և այնտեղ էլ ջուր տեսաւ։ Եւ, օրօրուելով, շարունակեց նա իւր ճանապարհը Բեթղեհէմից դէպի Երուսաղէմ։

Հասնելով ճանապարհի կիսին, նա տեսաւ իմաստունների ջրհորը, որ գտնուում էր ճանապարհի եզրին և իսկոյն նկատեց, որ ջրհորը ցամաքելու վրայ է։ Երաշտը նստեց ջրհորի բերանի սալի վրայ և ցած նայեց։ Ջրի փայլուն մակերևոյթը, որ առաջ մինչև հորի բերանն էր հասնում, այժմ խիստ խորն էր իջել, իսկ ջրհորի յատակում գտնուող տիղմն ու ցեխը ջուրը դարձրել էին կեղտոտ ու պղտոր։

Երբ Երաշտի այրուած ու փոշեհար դէմքն երևեցաւ

ջրի աղօտ հայելու մէջ, ջրհորի խորքից լսուեցաւ միցաւագին ճղփիւն։

—Կուզէի իմանալ,—ասաց Երաշտը,—թէ ինչ պէտք է հասնի քո վերջը։ Հազիւ թէ գտնուեն աղբիւրներ, որոնք կարողանային կեանք տալ, վերակենդանացնել քեզ։ Իսկ անձրևի մասին, փառք Աստուծոյ, դեռ մի երկու-երեք ամիս մտածելն իսկ աւելորդ է։

—Հանգստացիր,-հառաչեց ջրհորը,-ոչ մի բան այլ ևս ինձ օգնել չէ կարող։ Փրկել ինձ կարող է միայն դրախտի աղբիւրը։

—Ես չեմ հեռանալ քո մօտից, մինչև որ դու բոլորովին կը ցամաքես,—ասաց Երաշտը։

Նա տեսնում էր, որ հին ջրհորը շատ քիչ պիտի ապրի, ուստի ուզում էր զուարճանալ նրա մահուան տեսարանով, այլ և ուզում էր ուրախանալ այն բանով, թէ ինչպէս կեանքը կաթիլ-կաթիլ պիտի ձգէ նրան։ Նա պընդացրեց իւր տեղը ջրհորի բերանի մօտ և սկսեց ուրախութեամբ ականջ դնել նրա վերջին հառաչանքներին։ Նա հրճւում էր, երբ տեսնում էր, թէ ինչպէս ծարաւից տանջուած ճամբորդները մօտենում էին ջրհորին, գցում էին իրենց դոյլերը նրա մէջ և դուրս էին քաշում մի քանի կաթիլ պղտոր ու տղմոտ ջուր։

Այսպէս անցաւ մի ամբողջ օր և երբ մութը վրայ հասաւ, Երաշտը նորից նայեց ջրհորի մէջը։ Խորքում դեռ ևս մի քիչ ջուր էր երևում։ «Ես կը նստեմ այստեղ ամբողջ գիշերը,—բացականչեց նա։—Մի շտապիր, արևածագին ես նորից կը նայեմ և այն ժամանակ, կասկած չը կայ, որ ոչ մի կաթիլ ջուր մնացած չի լինիլ քո մէջ»։ Եւ Երաշտը ծալապատիկ նստեց ջրհորի ծածկոցին։ Վրայ հասաւ հրէական աշխարհին ցերեկից աւելի սոսկալի, տանջալից ու հեղձուցիչ գիշերը։ Իւրաքանչիւր րոպէ լսում էր չաղալների ու շների ոռնոցը, որին իրենց հեղձուկ ախոռներից ցաւագին պատասխանում էին ծարաւից ուժասպառ եղած էշերն ու կովերը։ Երբեմնակի փչող քամին այրող

էր ու խեղդող, որպէս քնած հրէշի տաք ու ծանր շնչառութիւնը և ամենևին զովութիւն չէր տալիս բնութեանը։

Աստղերը փայում էին իրենց ամբողջ գեղեցկութեամբ, իսկ նորածին լուսինը պատել էր մոխրագոյն բլուրները կանաչագոյն առկայծող լուսով։ Եւ տեսաւ երաշտը, թէ ինչպէս մի մեծ քարաւան բարձրանում է այն բլուրի վրայ, որտեղ գտնւում էր իմաստունների ջրհորը։

Երաշտը ուշադրութեամբ նայեց ճամբորդներին և ուրախութիւնը տիրեց նրան, երբ մտածեց, որ ծարաւը յագեցնելու համար ջրհորի մօտ վազող այդ մարդիկ ոչ մի կաթիլ ջուր չեն գտնելու։ Քարաւանի մէջ այնչափ շատ մարդիկ ու կենդանիներ կային, որ նրանք կարող էին դատարկել ջրհորը, եթէ նոյն իսկ լիքը լինէր նա։ Յանկարծ նրան թուաց, որ մի ինչ-որ խորհրդաւոր և արտասովոր բան կար գիշերով ճանապարհորդող այդ քարաւանի մէջ։ Բոլոր ուղտերը ասես յանկարծակի երևեցան բլրի վրայ, որ բարձր էր հորիզոնից։ Կարծես նրանք իջել էին բլրի վրայ ուղղակի երկնքից։ Լուսնի լուսով նրանք սովորականից աւելի խոշոր էին երևում և, թուի թէ, խիստ հեշտութեամբ էին տանում ծանր բեռը։

Բայց միևնոյն ժամանակ ոչ մի կասկած չէր կարող լինել, որ դրանք իսկական ուղտեր ու մարդիկ էին։ Երաշտը կարողանում էր նոյն իսկ որոշել, որ առջևում գըտնուող երեք կենդանիները ազնուացեղ միասապատ ուղտեր էին և ունէին մոխրագոյն փայլուն բուրդ։ Նրանք խիստ հարուստ սարք ու շքեղ ծածկոյթներ ունէին, իսկ նրանց թամքերի վրայ նստած օրօրւում էին երեք գեղեցկատեսիլ ու ազնուազարմ հեծուորներ։

Քարաւանը կանգ առաւ ջրհորի մօտ, ուղտերը երեքն էլ ծունկ իջան ու վար իջեցրին հեծուորներին։ Բեռնաւորուած ուղտերը կանգնած մնացին, նրանց մօտեցան ուրիշ ուղտեր և շուտով գոյացաւ մի հսկայական զանգուած, որտեղ երկար պարանոցները, սապատներն ու վարպետօրէն կապկպած բեռները խառնուել էին իրար։

Երեք հոգին մօտեցան Երաշտին և գլուխ տուին նը-
րան, ըստ արևելեան սովորութեան՝ դնելով իրենց աջ ձեռ-
քը ճակատին և կրծքին։ Նա տեսաւ, որ նրանք հագած
էին ձիւնի նման ճերմակ շորեր և նոյն գոյնի գլխի ահա-
գին փաթթոցներ ունէին, որոնց վրայ փայլում էին՝ կար-
ծես ուղղակի երկնքից իջեցրած՝ ճաճանչաւոր աստղեր։

—Մենք հեռու երկրից ենք եկել,—ասաց օտարա-
կաններից մէկը,—և խնդրում ենք, ասա մեզ, յիրաւի՞ մեր
առաջ իմաստունների ջրհորն է։

—Այսօր նա դեռ այդպէս է կոչւում,—պատասխա-
նեց Երաշտը,—բայց վաղն արդէն այստեղ ջրհոր չի լինիլ։
Նա այս գիշեր կը ցամաքի։

—Այդ հասկանալի է, որովհետև դու այստեղ ես,—
ասաց ճանապարհորդը։—Բայց մի՞թէ դա այն սրբազան
ջրհորներից չէ, որոնք երբէք չեն ցամաքում։ Այլապէս
ինչո՞ւ է կրում նա այդ անունը։

—Ես գիտեմ, որ դա սրբազան ջրհոր է, ասաց Ե-
րաշտը,—բայց ի՞նչ նշանակութիւն ունի այդ։ Այն երեք
իմաստունները, որոնցից այս ջրհորը ստացել է իւր անունը,
չէ՞ որ վաղուց արդէն դրախտումն են։

Ճամբորդները լռիլեայն իրար նայեցան։

—Բայց դու գիտե՞ս այս հին ջրհորի պատմութիւնը,—
հարցրեց նրանցից մէկը։

—Ես գիտեմ բոլոր ջրհորների, գետերի, առուների և
աղբիւրների պատմութիւնը,—հպարտութեամբ պատաս-
խանեց Երաշտը։

—Բարեհաճեցէք պատմել մեզ համար իմաստունների
այս սրբազան ջրհորի պատմութիւնը,—խնդրեցին օտա-
րականները։

Եւ, նստելով Երաշտի՝ ամեն մի կենդանի շնչի այդ
հին թշնամու շուրջը, նրանք պատրաստուեցան լսելու։

Երաշտը հազաց, շտկուեց, որպէս հեքիաթաբան, իւր
բարձր նստարանի վրայ և սկսեց իւր պատմութիւնը։

«Միդիայում մի քաղաք կայ, Հաբէշ անունով, որ

գտնուում է ուղիղ անապատի մէջ և որտեղ ես սիրում եմ ապրել։ Այդտեղ, սրանից երկար տարիներ առաջ, ապրում էին երեք հոգի, որոնք յայտնի էին որպէս իմաստուն մարդիկ։ Նրանք շատ աղքատ էին, մի բան, որ կարող էր անհաւատալի երևալ Հաբէշի համար, որտեղ գիտութիւնը խիստ յարգի է և լաւ վարձատրուում է։ Բայց այդ մարդիկ ուրիշ կերպ լինել չէին կարող. նրանցից մէկը չափազանց ծեր էր, միւսը հիւանդ էր բորոտութեամբ, իսկ երրորդը սև խափշիկ էր, հաստ շրթունքներով։ Շրջապատողները առաջինին համարում էին խիստ ծերացած, այնպէս որ կորած ու անօգուտ էին կարծում նրա իմաստութիւնը, երկրորդից խուսափում էին, սոսկալով վարակուելուց, իսկ երրորդին լսել անգամ չէին ցանկանում, որովհետև մարդիկ Հաբէշում համոզուած էին, որ Եթովպիայից ոչ մի իմաստուն միտք չի կարող դուրս գալ։

Կարիքը բարեկամացրել էր երեք իմաստուններին։ Ցերեկով նրանք ողորմութիւն էին հաւաքում տաճարի միևնոյն դռների մօտ, իսկ գիշերները քնում էին միևնոյն տանիքի վրայ։ Զը բաժանուելով իրարից, նրանք գոնէ, կարողանում էին մի կերպ անցկացնել ժամանակը, հաղորդելով իրար կեանքի ու մարդկանց մասին իրենց արած դիտողութիւնները։

Մի անգամ գիշերը, երբ նրանք կողք·կողքի պառկած էին տանիքի վրայ, որ խտօրէն ծածկուած էր խաշխաշի կարմիր ծաղիկներով, նրանցից Աւագը զարթնեց և հազիւ բացել էր աչքերը, որ սկսեց վերկացնել միւսներին։

—Օրհնեա՛լ լինի մեր աղքատութիւնը, որ ստիպում է մեզ բաց օդի մէջ քնել,—բացականչեց նա։—Զարթեցէք և նայեցէք երկնքին։

Այդ այնպիսի մի գիշեր էր,—ասաց Երաշտը մի քիչ մեղմելով իւր ձայնը,—որ ոչ ոք չի կարող մոռանալ։ Այնպէս լոյս էր, որ սովորաբար մութ երկնակամարը թուում էր խորը և թափանցիկ և ալեկոծուում էր ծովի նման։ Լոյսն երերուում էր, իսկ աստղերը, կարծես, լողում էին

երկնքի խորութեան մէջ՝ ոմանք նրա փայլուն ալիքներում, իսկ ոմանք այդ ալիքների մակերևոյթի վրայ։

Եւ երեք իմաստունները նայելով երկնքին, նկատեցին այնտեղ մի փոքրիկ բիծ, որ ցած էր թռչում երկնքի բարձունքից աղեղից արձակուած նետի նման։ Քանի մօտենում էր նա, լուսաւորւում էր բացուող վարդի նման,— թառամեն բոլորը վարդերը... Բիծը շարունակ մեծանում էր, նրա մութ մասերը չքանում էին և ահա, առաջին չորս թերթիկները վառ կերպով լուսաւորուեցան։

Վերջապէս մերձենալով ամենամօտիկ աստղին, բիծը կանգ առաւ։ Այն ժամանակ նրա մութ ծայրերը բոլորովին թեքուեցան մի կողմ և թերթիկ-թերթիկի յետևից բացուեց մի հիանալի աստղ, որի վարդագոյն փայլի առաջ նսեմացան երկնակամարի մնացած բոլոր աստղերը։ Երբ խեղճերը տեսան այդ, նրանք իրենց իմաստութեան զօրութեամբ հասկացան, որ այդ ժամին երկրիս վրայ ծնուել է մի թագաւոր, որը իւր փառքով նսեմացնելու է Կիւրոսի կամ Ալէքսանդր մեծի փառքը։ Եւ նրանք ասացին իրար. «Գնանք նորածնի ծնողների մօտ և պատմենք մեր տեսածը։ Շատ կարելի է նրանք դրա փոխարէն կը վարձատրեն մեզ մի քսակ ոսկով, կամ կը նուիրեն մեզ ոսկեայ ապարանջան»։

Նրանք վերցրին իրենց երկայն ցուպերն ու ճանապարհ ընկան։ Դուրս գալով քաղաքից, նրանց կանգ առան անվճռականութեան մէջ քաղաքային դռների մօտ. նրանց առաջ ընկած էր մեծ անապատը, որ սարսափ էր ազդում մարդկանց։ Բայց նայելով նրան, նրանք նկատեցին, որ նոր աստղից մի նեղ շերտ ընկել է անապատի վրայ և կարծես հրաւիրում է նրանց հետևելու իրեն։ Եւ նրանք վստահութեամբ շարունակեցին իրենց ճանապարհը, հետևելով իրենց առջևից վազող այդ լոյսի շերտին։ Ամբողջ գիշերը, խօսելով նորածին մանուկ թագաւորի մասին, նրանք գնում էին անծայր ու աւազոտ տափարակով։ Նրանք, անկասկած, կը գտնեն նրան ոսկեայ օրօրոցի մէջ

թանգագին ակնեղէնների հետ խաղալիս... Եւ գիշերն անցնում էր աննկատելի խօսք ու զրոյցի մէջ, թէ ինչպէս թագաւորն ու թագուհին, նորածնի ծնողները, դուրս կը գան նրանց առաջ, իսկ իրենք կասեն նրանց, թէ երկինքը գուշակում է նրանց որդուն կարողութիւն և հզօրութիւն, գեղեցկութիւն և երջանկութիւն, որի հետ նոյնիսկ Սողոմոնի երջանկութիւնը համեմատութեան դնել չի կարելի։

Նրանք պարծենում էին, որ Աստուած իրենց է ընտրել ու ցոյց տուել հրաշալի աստղը։ Իհարկէ, ասում էին նրանք, մանկան ծնողները կը տան մեզ առնուազն քսան քսակ ոսկի, իսկ շատ կարելի է, կը նուիրեն այնպիսի մի ընծայ, որով ընդ միշտ մենք ազատուած կը լինենք աղքատութիւնից ու զրկանքներից։

Ես պառկած էի անապատում այնպէս, ինչպէս առիւծն է իւր զոհին դարանամուտ լինում,— շարունակեց Երաշտը,— այնպէս ցանկանում էի տանջել ծարաւով և ընդհատել նրանց ճանապարհորդութիւնը։ Բայց նրանք իմ ձեռքից պրծան։ Ամբողջ գիշերը առաջնորդում էր նրանց աստղը, իսկ առաւօտեան, երբ լոյսը բացուել էր և միւս աստղերը մարել էին, նա շարունակում էր փայլել և լուսաւորել անապատը, մինչև որ հասցրեց նրանց մի օազիսի, որտեղ նրանք գտան աղբիւր և արմաւենիներ։ Նրանք հանգստացան այնտեղ ամբողջ օրը, իսկ մութը վրայ հասնելուն պէս, նորից վարդագոյն լուսով փայլեց աստղը և, լուսաւորելով իմաստունների ճանապարհը, տարաւ նրանց դէպի առաջ։ Մարդկային կարծիքով,—շարունակեց Երաշտը,—դա մի հիանալի ճանապարհորդութիւն էր։ Աստղը այնպէս առաջնորդում էր նրանց, որ նրանք չէին նեղւում ոչ քաղցից և ոչ ծարաւից։ Նա տանում էր նրանց ծակծկող թփերի կողքով, հեռու էր պահում նրանց վտանգաւոր աւազուտներից, պահպանում էր այրող արևից և անապատի խեղդող մրրկից։ Իմաստունները շարունակ կրկնում էին. «Աստուած պահպանում է մեզ... Նա օրհնում է մեր ուղին, մենք նրա

դեսպաններն ենք»... Բայց ես, իրենց համար իսկ աննկատելի կերպով՝ արդէն իշխել էի նրանց վրայ և մի քանի օրից յետոյ այդ ճամբորդների սիրտը դարձաւ անապատ, նոյնչափ անկենդան, որչափ այն անապատն էր, որով անցնում էին նրանք։ Նրանց հոգին լցուել էր անպտուղ հրպարտութեամբ և շահասիրութեան թոյնով։

«Մենք Աստուծոյ դեսպաններն ենք,—կրկնում էին նրանք։—Նորածին թագաւորի հայրը պարտաւոր է նուիրել մեզ առնուազն ոսկով բեռնաւորուած մի քարաւան»...

Վերջապէս աստղը հասցրեց նրանց հռչակաւոր Յորդանան Գետը և ապա, դէպի վեր՝ հրէական երկրի բլուրների մօտ։ Եւ մի անգամ, գիշերով, նա կանգառաւ Բեթղեհէմ անունով մի փոքրիկ քաղաքի վրայ, որի ճրագների լոյսն երևում էր կանաչազարդ Զիթենիների միջից, որոնցով ծածկուած էր ժայռոտ բլուրը։

Ճանապարհորդների հայեացքը փնտրում էր շքեղ պալատներ, հոյակապ աշտարակներ, անմատչելի պարիսպներ... Բայց ոչ մի բանից չէր երևում, որ դա թագաւորանիստ քաղաք է։ Ամենից վատն այն էր, որ աստղը նրանց նոյն իսկ քաղաքի ներսը չէր առաջնորդում, այլ կանգ էր առել ուղղակի ճանապարհի մօտ գտնուող մի ինչոր խղճուկ այրի վրայ։ Նրա քնքոյշ ճառագայթները հասնում էին այրի մուտքին, և երեք իմաստունները, նայելով այրի խորքը, տեսան մի մանկան, որ հանգիստ քնած էր մօր ծնկներին։

Եւ, թէև իմաստունները տեսան, որ լուսոյ մի փայլուն պսակ կապել էր մանկան գլուխը, սակայն նրանք տարակուսանքի մէջ կանգնած էին մնացել մուտքի առջև։ Նրանք չը մտան այրը, որպէզի նախագուշակեն մանկանը փառք և թագաւորութիւն։ Նրանք շուռ եկան և, աշխատելով աչքի չընկնել, ցած իջան բլրի վրայից։

«Միթէ մենք ուղարկուած էինք մեզ նման աղքատ ու չնչին մարդկանց մօտ,—ասում էին նրանք։—Միթէ Աստուած բերաւ մեզ այստեղ, որ մենք, ուրիշներին մեզ

վրայ ծիծաղեցնելու համար գուշակենք մի որ և է հովուի երեխային պատիւ ու փառք։ Այդ երեխան իւր ամբողջ կեանքում ոչխարներ պիտի արածացնէ դաշտում»։—Երաշտը լռեց և շարժեց գլուխը, կարծես թէ դրանով հաստատելով իւր խօսքերը։ Մթթէ ես ճիշտ չէի ասում,—կարծես հարցնելիս լինէր նա։—Անապատի աւազից աւելի անկենդան բաներ կան, բայց մարդկային սրտից աւելի անպտուղ ոչինչ չը կայ աշխարհիս երեսին։

—Երեք իմաստունները երբ մտածեցին, որ թերևս իրենք սխալուել են և կորցրել աստղի ցոյց տուած ճանապարհը,—շարունակեց Երաշտը,—մի քիչ հեռացան և աչքերը վերև բարձրացրին, որպէսզի աստղին նայելով, գտնեն ուղիղ ճանապարհը։ Բայց աստղը, որ բերել էր նրանց արևելքից, արդէն անյայտացել էր երկնքի վրայից։

Երեք օտարականները, որ ուշադրութեամբ լսում էին Երաշտի պատմութիւնը, այս խօսքերի վրայ ցնցուեցան, իսկ նրանց դէմքին արտայտուեց խորին տանջանք։

—Այդ ժամանակ, շարունակեց Երաշտը,—պատահեց մի վերին աստիճանի ուրախալի բան, եթէ դատենք այնպէս, ինչպէս առհասարակ մարդիկ են դատում։ Զը տեսնելով մեծ աստղը, իմաստուններն, իհարկէ, իսկոյն հասկացան, որ մեղք են գործել Աստծոյ առաջ։ Եւ նրանց էլ պատահեց այն,—շարունակեց զզուանքից ցնցուելով Երաշտը,—ինչ որ պատահում է աշնանը երկրի հետ, երբ հասնում է անձրևների ժամանակը։ Նրանք դողում էին սարսափից, որպէս երկիրն է դողում կայծակի հարուածներից և ամպերի որոտումից։ Նրանք բոլորովին ընկճուեցան և նրանց սրտին տիրեց հեզութիւնը, ինչպէս գարնանը բսնում է առաջին կանաչը...

Երեք օր ու գիշեր նրանք թափառում էին այդ երկրի մէջ և որոնում մանկանը, որին երկրպագելու համար բերել էր նրանց հրաշալի աստղը։ Բայց նա չէր երևում գիշերուայ խաւար երկնքում։ Նրանք հետզհետէ աւելի և աւելի կորցնում էին ճանապարհը և աւելի սաստիկ տի-

րում էր նրանց թախիծը։ Երրորդ գիշերը նրանք մօտեցան այս ջրհորին, որ յագեցնեն իրենց ծարաւը։ Այդ ժամանակ Աստուած խղճաց նրանց և ներեց նրանց մեղքը։ Կռանալով ջուր խմելու, նրանք տեսան ջրհորի խորքում իրենց առաջնորդող աստղի դողդոջիւն ցոլքը։ Նրանք ուրախացած բարձրացրին գլուխները դէպի վեր—աստղը առաջուայ նման փայլում էր, իսկ նրա վարդագոյն ճառագայթը նորից առաջնորդեց նրանց դէպի Բեթղեհէմում գտնուող այրը։ Այնտեղ նրանք մանկան առաջ ընկան երեսի վրայ և ասացին. «Մատուցանում ենք քեզ խնկով ու հալուէով լի ոսկեայ գաւաթներ։ Դու պէտք է լինես ամենամեծ թագաւորը, որ երբ և է եղել է աշխարհիս ստեղծագործութիւնից ի վեր։ Ողջունում ենք քեզ, Արքայդ աշխարհի, մեր խոնարհագոյն պարգևներով»։

Մանուկը դրեց իւր ձեռքը նրանց խոնարհեցրած գլուխների վրայ և երբ նրանք բարձրացրին իրենց գլուխները, յայտնի եղաւ, որ նա վարձատրել է նրանց աւելի մեծ պարգևներով, քան որ կարող էր տալ ամենահզօր թագաւորն անգամ։ Ծերունի իմաստունը դարձել էր մի առոյգ երիտասարդ, բորոտն առողջացել էր, իսկ խափշիկը փոխուել սպիտակամորթ ու գեղեցիկ աղամարդու։ Եւ ասում են, որ հայրենիք վերադառնալուց յետոյ, նրանցից իւրաքանչիւրը իւր երկրում թագաւոր դարձաւ»։

Երաշտը վերջացնելով իւր պատմութիւնը, լռեց, իսկ օտարականները գովեցին նրա պատմածը։ «Դու լաւ պատմեցիր,—ասաց նրանցից մէկը,—բայց ինձ զարմացնում է, որ երեք իմաստունները ոչինչ չեն անում այն ջրհորի համար, որի շնորհիւ նրանք գտել են իրենց առաջնորդող աստղը։ Մի՞թէ նրանք մոռացել են այդ լաւութիւնը»։

«Մի՞թէ այս ջրհորը մշտապէս չի մնալու այստեղ,—ասաց միւս օտարականը,—որպէսզի յիշեցնի մարդկանց, թէ ինչպէս երջանկութիւնը, որ կորչում է հպարտութեան բարձունքներում, նորից ձեռք է բերւում հեզութեան մէջ»։

«Մթթէ մեռածները վատ են կենդանի մնացածներից, —ասաց երրորդը։—Մթթէ շնորհակալութիւնը մեռնում է նրանց մէջ, որոնք կենում են դրախտում»։

Լսելով նրանց խօսքերը, երաշտը վայնասուն բարձրացնելով մի կողմ փախաւ եկուորների մօտից։ Նա հասկացաւ, թէ ովքեր էին այդ ճանապարհորդները։ Եւ, խելագարի նման նա սկսեց փախչել, որպէսզի չը տեսնի, թէ ինչպէս երեք իմաստունները պիտի կանչեն իրենց ծառաներին, բարձրացնեն բլրի վրայ ջրի տկերով բեռնաւորուած ուղտերին և ինչպէս պիտի լցուի խղճուկ ու ցամաքած ջրհորը դրախտից բերուած ջրով...

Թարգմ. ԱՐՍԷՆ ՍԱՐԿ. ԵՒ ՆԻԿ. ՏԷՐ-ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Տաճկաստանի անկիւններից մէկում-լեռնային Ալբանիայում տաճիկ կառավարութեան ընթացքից անբաւական Ալբանացիք ապստամբել են զէնքով պահպանելու իրենց աւանդական սովորութիւնների անկախութիւնը։ Թէ ինչպէս կվերաբերուի տաճիկ նոր կառավարութիւնը մասսայական ապստամբութեան, բնականաբար ունի իւր նշանակութիւնը։ Պարզ է նոյնպէս, թէ ինչու ալբանական հարցով և առհասարակ Տաճկաստանի ներկայ վիճակով հետաքրքրուող քաղաքագէտներն ու մասնագէտները առանձին ուշադրութեամբ են հետևում ալբանացիների վերջին ապստամբութեան։ Տաճիկ ներկայ կառավարութեան և ալբանացիների ձգտումների մէջ եղած սկզբունքների տարբերութիւնը բաւական շոշափելի է, և այդ պատճառների վերացման գործը աւելի դժուար է, քան կարող է իրագործել մի ռազմական արշաւանք։

Русск. Вѣд. լրագիրը առաջ է բերում յայտնի արևելագէտ Ռէնէ Պինոնի Revue des Denx Mondes-ում տպագրած յօդուածից ալբանացիների հետևեալ բնորոշումը։

«Ալբանացիք թերևս Եւրոպայի մի հատիկ ցեղն են ներկայացնում, որը անցնելով պատմութեան շրջանը, չի ենթարկուել փոփոխութեան։ Նրանք հին պէլասգների սերունդ են, և ապրում էին իրենց լեռներում դեռևս այն ժամանակ, երբ դեռ պատմութիւն չկար։ Նրանց նկարագրութիւնը, որ մենք գտնում ենք Հերոդոտոսի մօտ, չի կորցրել իւր նշանակութիւնը և այժմ. Աքիլլէսը իւր փայլուն և մասամբ պարծենկոտ քաջութեամբ իւր յամառ և վրէժխնդիր բնոյթով կարող է ներկայ ալբանացու նախապատկերը համարուել. Աղէքսանդր մեծը—նոյնպէս ալբանացի էր և այն «Մակեդոնական լեզուն», որով նա էր խօսում, երբ զայրանում էր ոչ այլ ինչ էր, եթէ ոչ այժմեան ալբանական լեզուն. որը տարբերուում է հին մակեդոնականից գլխաւորապէս տաճիկ, յոյն և զանազան սլաւոն լեզուներից վերցրած բառերով»։

Տաճկական տիրապետութիւնից յետոյ, ինչպէս յայտնի է, ալբանացիների մեծ մասը ընդունեց մահմեդականութիւն (1,115,000 իսկական Ալբանիայում բնակուող ալբանացիներից 790,000 դաւանում է մահմեդականութիւն, 240,000 ուղղափառ հաւատ, 85—կաթոլիկ)։

Բայց նրանք Իսլամը ընդունել են միմիայն նրա համար, որպէս զի պահպանեն իրենց արտօնեալ վիճակը, իսկ ընդհանրապէս, մասսայում խիստ անտարբեր են դէպի կրօնը։

«Ալբանացիք, ասում է Ռէնէ Պինոնը, իրենց պահում են իբրև հաւատացող մահմեդական, բայց նրանք բոլորովին ծանօթ

չեն դուրանի հետ։ Նրանց կրօնը տարօրինակ խառնուրդ է Իսլամի և քրիստոնէականութեան։ Նրանք յարգում են ս. Նիկողայոսին և ս. Դէորգին, և երբ մօլլան անզօր է բժշկել նրանց հիւանդ զաւակը, ալբանացին իւր զաւակը տանում է մօտակայ քրիստոնեայ քահանայի»։ Ալբանական ժողովրդի հասարակական կեանքի սկզբունքներն ու սովորոյթները այժմ մնում են նոյնը, ինչպիսին մենք գտնում ենք աստուածաշնչի Հոմերոսի ժամանակները լեռնական և խաշնարած ցեղերի մօտ. նրանք կազմակերպուած են ցեղերի և կլանների։ Սոցիալական կազմակերպութեան հիմքը— ընտանիքն է, որի ընդարձակումը ստեղծում է կլան։ Դատական ատեանը ընտանիքների գլուխներից կազմած ժողովն է. նրանց մօտ մինչև այժմ գոյութիւն ունի լէւիրատը։ Արեան վրիժառութիւնը գործադրւում է ամենալայն չափով և այն աստիճան պարտաւորական է համարւում, որ Ալբանական կեանքի ուսումնասիրողների վկայութեամբ, տղամարդկանց 100 մահից 70-ից ոչ պակաս բռնազբօսիկ մահ է։

Մինչև Տաճկաստանի յեղափոխութիւնը ալբանացիք սուլթանների ամենահաւատարիմ պաշտպաններն էին, ինչու և սուլթանները հաշտւում էին այն հանգամանքի հետ, որ ալբանացիք ոչ մի պետական իշխանութիւն չէին ճանաչում։ Այնուամենայնիւ սկզբում ալբանացիք միացան երիտասարդ թուրքերի հետ, երբ վերջինները բացարձակ կերպով սկսեցին գործել Մակեդոնիայում։ Շահնշահի հաւատարիմ ծառաները և տաճիկ սահմանադրականները միատեսակ էին ոգևորուած ատելութեամբ դէպի Եւրոպացիք և Եւրոպական սպաները, որոնք ուղարկուած էին Մակեդոնիա, իրագործելու բարեփոխութիւնները։ Ալբանացիք համոզուած էին, որ «սահմանադրութիւնը» Տաճկաստանը կփրկի օտար երկրացիներից, իսկ այն հանգամանքի մասին, թէ նոր կազմը կարող է անբարեյաջող կերպով արտայայտուել իրենց արտօնութիւնների վրայ, չէին մտածում։ Տաճիկ սահմանադրութիւնը յայտարարելու սկզբին, երբ երիտասարդ թուրքերը Սալոնիկում և Կ. Պոլսում արծարծում էին այն միտքը, թէ Տաճկաստանում այլևս չը պիտի լինի ոչ թուրք, ոչ բուլղարացի ոչ հայ և ոչ ալբանացի, մահմեդական կամ քրիստոնեայ, բայց պիտի լինին միմիայն հաւասար օտտոման քաղաքացիք, հաւատարիմ Սուլթանին և սահմանադրութեան, ալբանական նացիոնալիստները Ալբանիայի պետական հաստատութիւններում ալբանական լեզուի մտցնելու, ալբանական դպրոցներ բանալու պահանջները դրին Մոնաստիրում եղած համագումարին արաբական գրի մտցնելու դէմ և լաթինականի պահպանելու կողմնակիցն էին։ Աւելի լուրջ շարժում սկսուեց Ալբանիայում, երբ Սուլթան Աբդիւլ-Համիդը գահընկէց էր արած և կոնտր-յեղափոխութեան մասնակցող ալբանացիք մահուան պատժի էին ենթարկուած։ Յուզումը սաստկացաւ, երբ 1909 թ. Սկիւթարիի նոր վալի Բէդրի փաշան ժողովեց ալբանական դեկավարներին և յայտարարեց նրանց, որ կառավարութիւնը որոշել է ժողովրդագիր կատարել։

Ալբանացիք և մանաւանդ մահմեդականները բողոքեցին, որով-

հետև ժողովրդագրութեան մէջ նրանք նոր հարցերի և ընդհանուր զինուորական ծառայութեան կասկածելի միջոցն էին նախատեսում։ 1908 թ. հիւսիսային Ալբանիայից Սալոնիկ պատգամաւորութիւն էր եկել, որը ներկայացրեց հետևեալ պահանջները՝ պահպանել ալբանական արտօնութիւնները, արգելել ոչ մահմեդականներին և մանաւանդ սերբերին զէնք կրել, վերականգնել շարիաթի գործածութիւնը, բանալ պետական դպրոցներ ալբանական լեզուով դասաւանդութեամբ և մահմեդական կանանց դրութիւնը թողնել անփոփոխ։ Տաճիկ կառավարութիւնը այն ժամանակ այդ պահանջներին պատասխանեց հիւս Ալբանիա զօրք ուղարկելով Ջավիդ փաշայի հրամանատարութեամբ։ Արշաւանքը խորտակեց շատ կուլ-ը (ամրոցի մի ձև), վոնդից ալբանացի ղեկավար Իսսու Բոլինացուն, Աբդիւլ-Համիդի արբանեակին և սահմանադրութեան և սահմանադրութեան հակառակորդի, նոր հարկեր սահմանեց են։ Այդ հալածանքները արգելք չեղան Դիբրում 1909 թ. յուլիսին եղած համագումարին նոր պահանջներ դնելուն, որոնք Ալբանիայի ինքնավարութեան իրագործման էին վերաբերում։

Այսպիսով ալբանացիք անբաւական են տաճիկ նոր ռէժիմից գլխաւորապէս այն պատճառով, որ այդ ռէժիմը նրանց համար առաջ բերեց նախ նոր հարցեր և ընդհանուր զինուորական ծառայութիւն։ Ամփոփելով հրիտասարդ թուրքերի վերաբերմունքը դէպի ալբանական շարժումը, Պինոնը դալիս է այն եզրակացութեան, թէ ալբանացոց դէմ *) եռանդուն ճնշող միջոցները բոլորովին անօգուտ կլինին. «Միմիայն տակտիկան, որը հիմնուած է համբերութեան վրայ, ասում է Պինոնը—կարող է լաւ արդիւնք տալ։ Անհրաժեշտ է նախ նոր խճուղիներ և երկաթուղիներ անցկացնել Ալբանիայում։

Ալբանացին աղքատ է. «ալբանական ձևով ճաշել» դարձուածքը Մակեդոնիայում կնշանակի կիսասոված ճաշել։ Պէտք է ալբանացուն մի փոքր հարստացնել, պէտք է նրան աշխատանքի սովորեցնել։ Ալբանացին կամ քոչում է և կամ անգործ մնում. պէտք է նրան իւր երկրում պահել, սովորեցնելով նրան օգտուել իւր անտառներից, դաշտերից, օգնելով վաճառել նրա արդիւնաբերութեան արդիւնքը։ Ալբանացին տգէտ է, պէտք է նրան դպրոցներ տալ։ Նախ քան որևէ բան պահանջել նրանից, պէտք է նրան շատ բան տալ. լաւ կառավարուող Ալբանիան Եւրոպական Տաճկաստանի համար կարող է դառնալ թանկագին աղբիւր. մարդկանց, հարստութեան և եռանդի, իսկ վատ կառավարութեան շնորհիւ Ալբանիան կարող է մի ժայռ լինել, որից նոր Տաճկաստանը կարող է փշրուել»։

Բայց ալբանական դէպքերը քննելիս 'ի նկատի պիտի ունենալ և այն, որ ալբանական խնդիրը լուծելը կախում ունի ոչ միայն Տաճկաստանից և ներքին ոյժերի մաքառումից։ Մեծ նշանակութիւն ունի և այն հանգամանքը, որ այնտեղ հանդիպում են Աւստրիայի և Իտալիայի շահերը։ Աւստրիան ձգտում է դէպի Մակեդոնիա, իսկ Իտալիան դէպի ալբանական եզերքը. թէ ինչ կերպարանք կստանայ այդ երկու պետութիւնների մի կողմից և Տաճկաստանի միւս կողմից շահերի ընդհարումը, ներկայ հանգամանքներում դուշակել մի փոքր դժուար է։

*) Իսկ մենք կասենք, որ բոլոր ցեղերի դէմ։ Խմբ.

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Cuique suum.

Ապրիլի 24-ին Մոսկուայում պիտի տօնուի մեր համակրելի բանաստեղծ Ալ. Ծատուրեանի գրական գործունէութեան 25-ամեայ յօբելեանը։ Զարմանալի համեստ բնաւորութեամբ, Ծատուրեանը նոյնչափ համեստ է իւր գրչով, իւր քնարով։ Մեծ ջանք էր հարկաւոր բարեկամների կողմից համոզելու նրան, որ չը հրաժարուի յօբելենական տօնախմբութիւնից, որ դա նրա մասնաւոր գործը չէ, այլ հասարակութեան լիակատար իրաւունքն է տօնել, գնահատել կամ չը գնահատել իւր գործիչներին։ Արդէն ընտրուած է յատուկ յանձնաժողով, որը և պատրաստութիւններ է տեսնում յօբելեանի համար։

Ալ. Ծատուրեանը ծնուել է Զաքաթալայում 1864 թուին։ Նա աւարտել է տեղական քաղաքային դպրոցը և հէնց այդ պաշարով հանդէս եկել մեր գրականութեան մէջ։ Սակայն երկար տարիներ ապրելով Մոսկուայում, նա պարապել է ինքնակրթութեամբ և լրացրել դպրոցի պակասը։ Առաջին յօդուածը Ծատուրեանը գրել է «Մեղուի» մէջ. այնուհետև նա երկար ժամանակ աշխատակցել է «Նոր-Դարին», «Մշակին», «Հանդէս Գրական և Պատմականին», «Աղբիւրին», «Մուրճին», «Крымскій Курьеръ»-ին և այլ բազմաթիւ հանդէսների ու լրագրների։

Առանձին գրքով լոյս են տեսել երեք հատոր նրա ինքնուրոյն բանաստեղծութիւնները և երկու հատոր թարգմանականները (մեծ մասամբ ռուս բանաստեղծներից). բացի այդ, նրա ինքնուրոյն բանաստեղծութիւններից շատերը թարգմանուած են ռուսերէն և լոյս են տեսել „Вѣстникъ Европа“, „Дѣло“, «Братская помощь» և այլ հանդէսների ու ժողովածուների մէջ։

Տալով Ծատուրեանի գրական գործունէութեան curriculum vitae-ն և սպագային թողնելով աւելի հանգամանօրէն խօսելու այդ վաստակաւոր, բայց համեստ գրականի մասին, մենք յոյս ենք տածում, որ հայ հասարակութիւնը, և մանաւանդ Մոսկուայի հայ հասարակութիւնը, որի մէջ երկար տարիներ ահա ապրում է բա-

նաստեղծը,—ըստ արժանւոյն կը գնահատէ ու կը վարձատրէ իւր մշակին գոնէ նրա յօբելեանի օրը, իսկ վարձատրութեան, մանաւանդ նիւթական վարձատրութեան՝ Ծատուրեանը ահագին կարիք ունի, իբրև մշտահիւանդ, ծիւրուած, անապահով, (ինչպէս բոլոր հայ գրողները) հայ գործիչ։ Guique suum!

Ն. Ս. Տէր-Մանուէլեան

Մոսկուա, 1910 թ. 3 ապրիլի.

ՅԱՐԳԵԼԻ ԽՄԲԱԳԻՐ

Այս նամակը, որ ուղարկուած լինելով «Նոր-Դպրոց» ամսագրին իբրև նոյն ամսագրի մէջ ինձ ուղղած նամակի պատասխան, և որը յիշեալ խմբագրութիւնը, չկամենալով դիպչել իւր խմբագրի անձեռնմխելիութեան, բարեհաճեց ի վնաս մանկավարժութեան մէջ գիտութեան նոր հոսանքի՝ չտպագրել, խնդրեմ զետեղէք... «Լումայ» ամսագրի մէջ։

1910 թ. 3 Մայիսի
Թիֆլիս

ՊԱՏԱՍԽԱՆ Պ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻՆ

Ձեր խմբագրութեամբ լոյս տեսնող «Նոր Դպրոցի» ներկայ տարուայ № 3-ում մի նամակ էք ուղղել ինձ։ Կարդացի Ձեր անզօր տողերը. Դուք փաստեր չունէք յօդուածիս որևէ կէտը նսեմացնելու։ Դիտմամբ յօդուածիս սկիզբը չհասկանալու էք դրել։ Բայց ինչ կայ անհասկանալի. իմ գործիքը տասնորդական սիստեմի է, Ձեր հաւանածը միաւորական սիստեմի, որի գործածութեան վնասակարութիւնը դեռ չէք կարողանում գիտակցել։ Այդպիսի տրամադրութիւն ունենալով՝ ինչպէս կարող էք իմ թուաբանական գործիքի նշանակութիւնը և դիրքը որոշել։

Յօդուածները իւղի յատկութիւն հօ չունին, որ մի պատառ վերցնելով՝ նրա արժէքը գնահատէք։ Միամիտ ընթերցողին յօդուածիցս մի կէտ պոկած ցոյց տալով՝ ուզում էք հաւատացնել, որ ամբողջ յօդուածը սխալ է։ Ընդհակառակը, Ձեր այդ վարմունքով ցոյց տուիք, որ անձեռնհաս էք լուրջ ու հիմնաւոր կերպով պատասխանել յօդուածիս գլխաւոր կէտերին։

Ձեր յօդուածից ուշադրութեան էի առել այս բառերը. «լոբի, սիսիռ... գծիկներ, շրջանակներ»... (սիսեռ բառից յետոյ պէտք է լինէր բազմակէտ, չգիտեմ ինչու տպագրութեան միջոցին դուրս է մնացել*)։ Դուք գննական միջոցների տեսակները համարելով՝ առաջին տեսակի մէջ յիշել էիք լոբի և այլն. երկրորդ տեսակից՝

---

*) Նոր-Դպրոցի № 2-ում տպուած իմ յօդուածի մէջ առաջ են եկել հետեւեալ սխալները 71-րդ երեսում, 4-րդ տողում «անպատրաստէ» բառի տեղ պէտք է լինէր «պատրաստ է», 65-րդ երեսում "թուաբանութեան մութ աշխարհն է» դրա տեղ պէտք է լինէր «թուաբանութեան մութ հասկացողութեան աշխարհն է»։

գծիկներ, շրջանակներ և այլն։ Շարունակութեան մէջ ասում էք, «երկրորդ տեսակից միայն մօտ 200-ի չափ գործիքներ և մեքենաներ կան։ Միթէ այդ նախադասութիւնից չի հետևում, որ եթէ առաջին տեսակն (լօբի, սիսեռ) էլ հաշուենք, գործիքների, մեքենաների թիւը աւելի կը բարձրանայ։ Տրամաբանօրէն մտածողը այդպէս կը հետևցնի։

Երբ այժմ պարզուեց, որ յօդուածիս յիշեալ կտորը սխալ չէ, այս դէպքում պ. Տէր-Միրաքեանը իր նամակի վերջին տողերը այսպէս կձևակերպէ. «Աւելորդ չեմ համարում պ. ընդդիմախօսի (Արարատեանի) շօշափած ուրիշ կէտերին պատասխանել, որոնք վերաբերում են ինձ (պ. Տէր-Միրաքեանին) և վերոյիշեալի պէս ճշմարտութիւններ են»։

Մինչև յօդուածիս տպագրուելը կարելի էր նամակով դիմել ինձ, իսկ տպագրուելուց յետոյ, ես ինձ համարում եմ ընթերցողների շարքը։ Ընթերցողները սպասում էին յօդուածի, իսկ մասնաւոր Ձեր ինձ ուղղած նամակը ընթերցողներին բաւարարութիւն չի տալիս։

Ճ. Զ. Արարատեան

ԼՈՒՐԵՐ

Մայիսի 2-ին Մոսկուայում կատարուեց քանքարաւոր բանաստեղծ Ալէքսանդր Ծատուրեանի գրական գործունէութեան 25 ամեայ յօբելեանը մեծ հանդիսով։ Մոսկուայի հասարակութիւնը պ. Ծատուրեանին նուիրաբերել է մի խոշոր գումար։ Խմբագրութեանս կողմից իբր ներկայացուցիչ յօբելեանին ներկայ էր թերթիս Մոսկուայից աշխատակից պ. Նիկողայոս Տէր-Մանուէլեանը։

Կ. Պոլսի Ազգային ժողովի խառն ժողովը «Լումայ»-ի մէջ արտայայտած բողոքին պատասխանել է կողմնակի կերպով։ Նա գտել է, որ Օրմանեան սրբազանի վրայ բարդած «դրամական զեղծումների» մէջ մինչև այժմ ոչ մի կէտ չապացուցուեց, ուստի և որոշել է նորան կոչել որևէ պատասխանատու պաշտօնի։ Ուրեմն սր. Օրմանեանը այժմ 'ի հարկէ, երբ նրանից որևէ վտանգ չունի ազգը, անմեղ է համարուած դրամական խնդիրներում։ Բայց մենք դարձեալ մի նոր բան կասենք. որ նորին սրբ. անմեղ է նաև այն մեղադրանքի մէջ, որ իբր թէ նա Հաագի կոնֆէրանսին հեռագիր է տուել՝ նորան ներկայացող հայ պատգամաւորութիւնը չհամարելու ամբողջ Թիւրքիայի հայութեան ներկայացուցիչ։ Այդ էլ սուտ է և շինծու։ Ճշմարտութիւնն այս է, որ երբ Կ. Պոլսի մի քանի նշանաւոր ազգայիններ տեսնում են, որ հայ պատգամաւորութեան՝ Հաագի կոնֆէրանսին ներկայանալովը կարող է զրգռուել Համիդը և հայերի նոր կոտորածի առիթ տալ, շտապել են պատրիարք Օրմանեանի մօտ և իրանց նախապէս խմբագրած հեռագիրը ներ-

կայացնելով՝ խնդրել են ստորագրել և ուղարկել կոնֆէրանսին. Օրմանեանը քաջ գիտենալով այդ հեռագրից սպասուող հետևանքները՝ բացէ ի բաց մերժել է ստորագրել այդ հեռագիրը. ապա պատգամաւորութիւնը, առաջնորդութեամբ մի նշանաւոր հայի, որի անունը կտանք կարևոր դէպքում, յանուն ազգի ստիպմամբ պահանջել է նորանից ստորագրել և նոյն իսկ այդ առաջնորդը ինքն է տարել հեռագիրը հեռագրատուն։—Թող հերքեն Պոլսեցիք՝ եթէ կարող են հերքել այս ճշմարտութիւնը։

■ Մայիսի 6-ին Թիֆլիսում տեղի ունեցաւ դերասան Գեղ. Միրաղեանի բեմական գործունէութեան 25 ամեայ յօբելեանը։ Հանդիսին խմբագրութեանս կողմից ներկայ էր և շնորհաւորեց մեր աշխատակից Վարդգէս Աղանեանցը։

■ Թիֆլիսում կազմւում է «Հայոց պատմական ընկերութիւն», որի կանոնադրութիւնը շուտով կառաջարկուի պատշաճաւոր իշխանութեան 'ի հաստատութիւն։

Պ. Էլբէն «Հորիզոնում գուժում է, որ Բերլինում այս օրերս վախճանուել է յայտնի հայագէտ պրոֆ. Ֆինկը։ Հանգուցեալը մի ժամանակ Լ. Գեանջեցեանի հետ միասին խմբագրում էր «Հանդէս Հայագիտութեան» պարբերական եռամսեայ թերթը, որ դժբաղտաբար կարճատև գոյութիւն ունեցաւ։

Ապրիլի 7-ին տեղի ունեցաւ Ղուկասեան մրցակաբաշխութեան հանդէսը։ Մրցանակի 500 ռուբլի գումարի կէսը յատկացուեց Սմբատ Տէր Աւետիքեանի «Սանահնի և Ղազախ գաւառի արձանագրութիւնները» անտիպ աշխատութեան և միւս կէսը Ասլան Շահնազարեանի «Զաքարէ և Իվանէ Երկարաբազուկների գործունէութիւնը, անտիպ աշխատութեան։ Թանգարանի վարչութիւնը այս տարի տպել է «Կիրակոս գանձակեցու պատմութիւնը», որ արժէ ընդամենը 30 կ։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Պետրոս Մոճոռեանց.—Մամիկոնեան առիւծը, պոէմա. Ալէքսանդրապոլ 1909.

Московскій Городской народный унаверситетъ имени А. Л. Шанявскаго 1910—11 тк. г. Москва 1910.

„—„ Циклъ естественно-историческихъ наукъ.

Կիրակոսի Գանձակեցւոյ պատմութիւն Հայոց. հրատ. Ղուկասեան Թանգարանի, 1910, Թիֆլիս. 30 կ.

Տեղեկագիր Թիֆ. Վանաց ա. եկ. կրօնա-պատմ. Թանգարանի 1908 ապրիլ 5—1910 ապրիլ 5.

Համառօտ դաս. Հայ. եկեղեցու պատմութեան, Յովհ. ա. ք. Մարտիրոսեանի, 1910 Թիֆլիս, 50 կ.

Խմբագիր Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

ԲԱՑՈՒՄԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 Թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԳԱՒԱՌ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Բաժնեգինն է՝ Ռուսաստանի համար տարեկան 3 ր. կէս տարին 1 ր. 75 կոպ. մի ամիսը 35 կոպ. Արտասահմանի համար տարեկան 5 ր. հասցէն՝ Герюсы, Елис. Губ. Редакція газеты **„ГАВАРЪ“**

Открыта подписка на 1910 годъ

на большую ежедневную, литературную, политическую и общ. газету

IX годъ изданія **БАКУ** IX годъ изданія

Газета выходитъ въ объемѣ и по программѣ большихъ столичныхъ газетъ, подъ общею редакціей **Х. А. Вермишева**, при ближайшемъ участіи **Минаса Берберьяна, Г. Е. Старцева,, [Ант.] С. Айвазова, Б. Г. Перлина** и др. постоянныхъ сотрудниковъ редакціи.

Кромѣ того газетѣ «Баку» обѣщали свое сотрудничество: **Ю. А. Веселовскій, Дагестани, Магистрантъ, Я. А. Манандянъ, кн. Г. М. Тумановъ, В. Ѳ. Тотомянцъ и др.**

Подписная цѣна съ достовкой и пересылкой

	ГОДЪ	6 МѢС.	1 МѢС.
Для иногородн.	8 р. 50 к.	6 руб.	1 р. 50 к.
Для городскихъ	7 —	4 —	1 —

Заграницу 15 руб. на годъ и 8 р. на полъ годъ.

Адресъ Баку, редакція газета «Баку»

15-Դ ՏԱՐԻ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 ԹՈՒԻ

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

1910 թուին Լումաան լոյս կը տեսնի իւր այժմեան դիրքով, բաղկացած 64—80 երեսներից, մեր մշտական աշխատակիցների գործակցութեամբ։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

1910 թուի «ԼՈՒՄԱՅ»ի ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՂ բաժանորդները կստանան իբրև ՊՐԷՄԻԱ

ԵՂԻՇԷԻ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

աշխարհաբար նոր թարգմանութիւնը։

ԲԱԺՆԷԳԻՆՆ Է տարեկան 6 *ռ.*, *կէս տ.* 4*ռ.*
Արտասահման „ 8 „ „ 5 „

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԼՈՒՄԱՅ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԷԳԻՆՆ Է 4 ՌՈՒԲԼԻ

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.